

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Յ Ո Ւ Ս Ի Ս Ա Փ Ա Յ Լ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

2 (8)

2021

ԵՐԵՎԱՆ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

***Հրատարակության է երաշխավորել Հյուսիսային համալսարանի
գիտական խորհուրդը***

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արմեն Ճուղուրյան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, Հյուսիսային համալսարան

Խմբագրական խորհրդի անդամներ

Լուսինե Տլջյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Հյուսիսային համալսարան

Գայանե Հակոբյան, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հյուսիսային համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի ղեկավար

Արթուր Ղամբարյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան

Վալերի Միրզոյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Պիթեր Կոստա, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Սլավոնական լեզուների ամբիոնի վարիչ, Պոցդամի համալսարան, Գերմանիա

Ռադովան Ստոյանովիչ, էլեկտրական ճարտարագիտության և համակարգչային գիտությունների դոկտոր, էլեկտրական ճարտարագիտության ֆակուլտետի պրոֆեսոր, Մոնտենեգրոյի համալսարան

Վիտալիյ Կոպնով, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռեկտորի խորհրդական, Ռուսական պետական մասնագիտական-մանկավարժական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Գոհար Պետրոսյան, իրավագիտության դոկտոր, դոցենտ «Միջազգային հանցագործություն և արդարադատություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար, Նյու-Յուրք Սիթի համալսարան ԱՄՆ

Մերգել Զմիյակ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, «Միջազգային տնտեսություն և միջազգային տնտեսագիտական

հարաբերություններ» ամբիոնի վարիչ, Դոնեցկի պետական տեխնիկական համալսարան, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն

Նինո Ապցիաուրի, պատմագիտության դոկտոր, դոցենտ, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան, խորհրդական, Արտաքին գործերի նախարարություն, Վրաստան

Նինո Աբեգաձե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Վիճակագրական տնտեսագիտության ամբիոն, Իվանե Ջավախիշվիլի անվան Թբիլիսիի պետական համալսարան

Իլուտա Արբիդանե, Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ռեզեկնեի տեխնոլոգիական ակադեմիա, Լատվիա

© «Հյուսիսային համալսարանի հրատարակչություն», 2021 թ.

ЮСИСАПАЙЛ

(Северное сияние)

НАУЧНЫЙ ЖУРНАЛ СЕВЕРНОГО УНИВЕРСИТЕТА

2 (8) 2021

Редакционная коллегия

Главный редактор – **Армен Джугурян**, доктор экономических наук, профессор, заведующий кафедрой экономики и менеджмента, Северный университет

Члены редакционной коллегии

Лусине Флджян, доктор филологических наук, профессор, проректор по учебно-исследовательской работе и интернационализации, Северный университет

Гаяне Акопян, кандидат филологических наук, доцент, руководитель учебно-практического центра по связям с общественностью и СМИ, Северный университет

Артур Гамбарян, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права, Российско-армянский (Славянский) университет

Валерий Мирзоян, доктор философии, профессор, Армянский государственный экономический университет

Питер Коста – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой славянских языков, Поцдамский университет, Германия

Радован Стоянович, доктор инженерных и компьютерных наук, профессор факультета электрической инженерии, Университет Черногории, Черногорье

Виталий Копнов, доктор технических наук, профессор, советник ректора, Российский государственный профессионально-педагогический университет, Россия

Гоар Петросян, доктор юриспруденции, доцент, директор магистерской программы “Международная преступность и правосудие”, Городской университет Нью-Йорка, Университет, США

Сергей Змияк, доктор экономических наук, доцент, заведующий кафедрой "Мировая экономика и международные экономические отношения", Донской государственный технический университет, Донецкая Народная Республика

Нино Апциаури, доктор исторических наук, доцент, кафедра арменологии, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, советник, Министерство иностранных дел, Грузия

Нино Абездзе, доктор экономических наук, профессор, кафедра экономической статистики, Тбилисский государственный университет имени Иванэ Джавахишвили, Грузия

Илута Арбидане, доктор экономических наук, профессор, кафедра экономики и менеджмента, Резюкненская академия технологий, Латвия

HYUSISAPAYL

(Northern Lights)

SCIENTIFIC JOURNAL OF NORTHERN UNIVERSITY

2 (8) 2021

Editorial Board

Chief Editor` **Armen Tshughuryan**, Doctor of Sciences in Economics, Professor, Head of the Chair on Economic and Management, Northern University

Members of the Editorial Board

Lusine Fljyan, Doctor of Sciences in Philology, Professor, Vice-Rector for Education, Research and Internationalization, Northern University

Gayane Hakobyan, PhD in Philology, Associate Professor, Gayane Hakobyan, PhD in Philology, Associate Professor Head of Media and Public Relations Training Centre, Northern University

Artur Ghambaryan, Doctor in Law, Professor, Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian (Slavonic) University

Valeriy Mirzoyan, Doctor of Philosophy, Professor, Armenian State Economical University

Peter Kosta, Professor Doctor phil. habil, Head of the Chair of Slavic languages, Potsdam University, Germany **Vitaliy Kopnov**, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Gohar Petrossian, PhD in Law, Associate Professor, Director of International Crime and Justice MA Program, City University of New York, USA

Vitaliy Kopnov, Doctor of Technical Sciences, Professor, Advisor to Rector, Russian State Professional Pedagogical University, Russia

Radovan Stojanović, Doctor in Electrical Engineering and Computer Sciences, Professor at the Faculty of Electrical Engineering, University of Montenegro, Montenegro

Nino Abezadze, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic Statistics, Ivane Javakhishvili State University, Georgia

Iluta Arbidane, Doctor of Sciences in Economics, Professor, Chair on Economic and Management, Resekne Academy of Technologies, Latvia

Sergey Zmiyak, Doctor of Sciences in Economics, Professor. Head of the Chair on World Economy and International Economic Relations, Donetsk State Technical University. Donetsk People's Republic

Nino Aptsiauri, Doctor of History, Associate Professor, Chair on Armenology, Ivane Javakhishvili State University, Counselor, Ministry of Foreign Affairs, Georgia

«ՀԱՂԹԱՆԱԿ – ՀԱՂԹԱՆԱԿ» ՄԿԶԲՈՒՆՔԸ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Վալերի Միրզոյան

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անկախ
հետազոտող
valerimirzoyan@yahoo.de

*«Առ ու տուր են ասել, ոչ թե առ ու կուլ»
հայկական ասացվածք*

Կառավարումը մարդկանց համակեցության հնագույն և հիմնական տարրերից մեկն է, իսկ կառավարման արդյունավետության ապահովումը՝ բոլոր տեսակի կազմակերպությունների գործառության հիմնական ցուցանիշը:

Հենց սկզբից նկատենք, որ վերնագրում գործածված է ոչ թե «կառավարման արդյունավետություն», այլ «արդյունավետ կառավարում» հասկացությունը: Առաջինը տնտեսագիտորեն միանգամայն հստակ է, արտահայտվում է (և չափվում) ծախսերի և օգուտի հարաբերակցությամբ¹: Սա այդ հասկացության կայունացած, հանրաճանաչ ըմբռնումն է, և, կարծեք, կառավարչական իրողությունը բնութագրելու այլ հասկացության կարիք չկա:

Այդուհանդերձ, այստեղ տեսական բնույթի խնդիրն այն է, որ «կառավարման արդյունավետությունը» ինքնին մեզ դեռ ոչինչ չի ասում բուն կառավարման էության փաստացի դրսևորման մասին՝ որպես սուբյեկտ-օբյեկտային հարաբերության որոշակի տեսակի: Իսկապես, անհայտ է մնում, թե կառավարման սուբյեկտն ազդեցության ի՞նչ մեթոդներ է գործադրել, իսկ կառավարման օբյեկտը, իր հերթին, ի՞նչ վերաբերմունք ունի սուբյեկտի և նրա կիրառած կառավարչական ազդեցության հանդեպ: Իսկ չէ՞ որ «կառավարման արդյունավետությունը» այս երկուսի համատեղ գործունեության արգասիքն է, իսկ բարձր արդյունավետության հնարավոր է հասնել ինչպես, օրինակ, ստրկական աշխատանքի միջոցով, տեխնոկրատական կառավարման ոգով, այսինքն՝ բուն աշխատողի բացարձակ ճնշման, նրա անձնական կարծիքի լիակատար անտեսման եղանակով, այնպես էլ ժամանակակից աշխարհում աստիճանաբար տարածում գտնող «մասնակցային» («ներառական») կառավարման սկզբունքի համաձայն: Բայց կարո՞ղ ենք արդյոք վստահաբար համարել, թե երկու դեպքում էլ իրականացվում է նաև «արդյունավետ կառավարում», այլ

¹ Տե՛ս Պ. Հեյնե, Տնտեսագիտական մտածելակերպ, Եր., 2008, էջ 22:

կերպ ասած՝ վերջինս իր բաժինն ունի հանրագումարային «կառավարման արդյունավետության» ցուցանիշի մեջ:

Հարցադրման նպատակը լիարժեք հասկանալու համար հիշենք («կառավարում» երևույթի բազում սահմանումների մեջ), որ կառավարումը «անհրաժեշտ աշխատանքի կատարումն է այլոց միջոցով»², ինչից բխում է, որ դա երկփուլանի գործընթաց է. առաջինը զուտ կառավարչական աշխատանքն է, երբ սուբյեկտը համատեղ գործունեության նպատակադրումը վերածում է որոշակի խնդրի և հանձնարարում է (հրամայում, պարտադրում, համոզում, խրախուսում և այլն) կառավարման օբյեկտին, այսինքն՝ բուն աշխատանքը կատարողին: Իրոք, «կառավարումը» լայն իմաստով բաղկացած է կառավարչական բուն աշխատանքից («կառավարում» նեղ իմաստով) և կատարողական աշխատանքից (վերջինս դարձյալ կառավարչի հսկողության տակ է, քանի որ հարկավոր է ապահովել նպատակի և ստացված վերջնական արդյունքի առավելագույն համապատասխանություն. հենց դա է կառավարչի գործառույթներից մեկի՝ «վերահսկման» էությունը):

Արված դատողությունը «կառավարման արդյունավետության», այսինքն՝ իրողության ընկալման և գնահատման առավելապես տնտեսագիտության դիրքերից միգուցե այդքան էական չէ, բայց հոգեբանության, բարոյագիտության, փիլիսոփայության և բուն իսկ կառավարաբանության համար այստեղ ուշադրության արժանի շատ խնդիրներ կան: Դեռ ավելին, անգամ նեղ էկոնոմիզմի վարվելակերպին տուրք տվող կառավարիչը պիտի համաձայնի, որ «սուբյեկտ-օբյեկտ» փոխազդեցության որակական փոփոխությունը չի կարող չապահովել նաև տնտեսական որոշակի բարելավում: Ահավասիկ այս հիմնավորմամբ՝ տողերիս հեղինակը ժամանակին առաջարկել է տարբերակել այդ հասկացությունների գործածությունը³: Հայեցակարգային հիմնական ըմբռնումն այն է, որ «արդյունավետ կառավարումը» բնորոշում է սուբյեկտի և օբյեկտի կամ, այլ կերպ ասած՝ գործադրվող կառավարչական ազդեցության և կառավարվողի յուրահատկության ներդաշնակության չափը:

Եվ որքան էլ բառախաղի է նմանվում, բայց կարող ենք ասել, որ **«կառավարման արդյունավետության» ապահովման հիմնապայմանը «արդյունավետ կառավարումն» է:**

Արդ, վերադառնանք կառավարման բուն էությանը՝ որպես սուբյեկտ-օբյեկտային ուղղակի կամ միջորդավորված հաղորդակցման տեսակի: Քանի որ այդպես է, զարմանալի չէ, որ կառավարչի հիմնական աշխատաժամանակը ծախսվում է միջանձնային հաղորդակցման վրա՝

² Տե՛ս Վ. Միրզոյան, Կառավարման փիլիսոփայություն, Եր.: Մեկնարկ, 2021, էջ 12–13, 115–121:

³ Տե՛ս Վ. Միրզոյան, Արդյունավետ կառավարում և կառավարման արդյունավետություն // «Բանբեր ՀՊՏՀ», 2012, № 1, էջ 58–75:

գործընկերների և ենթակաների հետ անմիջական շփման ընթացքում կամ հեռավար՝ տեղեկատվության տարատեսակ սարքերով միջնորդավորված: Ինքնին հասկանալի է, որ առանց միջանձնային հաղորդակցման տարբեր ձևերի հաջող գործադրման՝ կազմակերպության բնականոն գործառնությունն անհնարին է: Գործարար գրույցը, խորհրդակցությունը, բանակցությունները, ժողովները, համատեղ քննարկումները, դեկավարների հրապարակային ելույթները, նաև կազմակերպության և իր, այսպես կոչված՝ «թիրախ-հանրույթների» միջև հաղորդակցման կազմակերպումը («հանրային կապերի կառավարումը»՝ «Public Relations») ժամանակակից գործարար կյանքի անբաժան մասն են, դրանց նվիրված ծավալուն գրականություն կա:

Հետահայաց դիտարկելով կառավարչական իրողության կարգավորման պատմությունը, համոզվում ենք, որ մարդկանց համատեղ գործունեության կարգավորման տարատեսակ խնդիրների լուծման մեջ տարբեր կարևորություն է տրվել միջանձնային հաղորդակցման տեղին ու դերին. եղել են զանազան լուծումներ ամփոփող սկզբունքներ՝ սկսած հաղորդակցման դերի լիակատար անտեսումից մինչև բացարձակացում: Այդ սկզբունքների գործադրման հիմնավորվածությունը հասկանալու համար մենք, ամենից առաջ, պետք է դիտարկենք կառավարման գիտության հարացույցի էվոյուցիան՝ «գիտական կառավարման» դպրոցի ձևավորումից մինչև 21-րդ դարի մեր օրերը:

Թեպետ «հարացույց» (պարադիգմա) հասկացությունը վաղուց է դրված լայն շրջանառության մեջ, սակայն հարկ կա ճշտելու դրա էությունը և կատարած դերը գիտության համակարգում: Ելնելով այն իմաստից, որով գործածվում է մի շարք գիտությունների շրջանակներում (լեզվաբանություն, փիլիսոփայություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, կառավարաբանություն), առաջարկում են հետևյալ սահմանումը. **Հարացույցը որոշակի ժամանակաշրջանում տվյալ գիտական հանրույթի համար առավել ընդունելի կանխադրությունների ամբողջություն է. որն այդ գիտության ասպարեզում ծառայում է որպես հիմնախնդիրների ըմբռնման և լուծման ընդհանուր մեթոդաբանական հիմք:**

Քանի որ գիտությունը, որպես մշտապես զարգացող գիտելիքի համակարգ, անփոփոխ չի մնում, ապա տվյալ գիտական հանրույթի անդամներն աստիճանաբար հայտնաբերում, արձանագրում և կուտակում են նորանոր փաստեր, որոնք չեն բացատրվում արդեն եղած տեսություններով, ուստի և գիտնականներն առաջ են քաշում նոր վարկածներ, տալիս նոր բացատրություններ, որոնց հիման վրա էլ ձևակերպում են նոր օրինաչափություններ, որոնք արդեն չեն համապատասխանում առկա հարացույցի հիմնադրություններին և, վերջիվերջո, արմատապես փոխում են այն՝ արտամղում նոր հարացույցով: Վերջինս, սակայն, դժվարությամբ է ճանապարհ բացում. հիմնական պատճառը հին հարացույցն

է, որի տիրապետության դեպքում նոր փաստերը հաճախ չեն ընկալվում, քանի որ փորձ է արվում դրանք անպայման հնով բացատրել:

Նորին ցույց տրվող դիմադրությունը, իհարկե, ոչ թե ինքնին կայացած հարացույցի, այլ դրանով առաջնորդվողների ոչ ճկուն, քարացած մտածելակերպի հետևանքն է: Գոյանում է ճգնաժամ, իսկ դրա հաղթահարումը, այսինքն՝ մի հարացույցից անցումը մյուսին ընդունված է բնորոշել որպես «գիտական հեղափոխություն», որի կառուցվածքը հանգամանորեն պարզաբանել է ամերիկացի հայտնի փիլիսոփա և գիտության պատմաբան Թոմաս Բունը: Եվ, ինչպես նշում է նա, «հատկապես ճգնաժամի գիտակցման փուլում է, որ գիտնականները դիմում են փիլիսոփայական վերլուծությանը՝ որպես իրենց բնագավառում առեղծվածների բացահայտման միջոցի»⁴:

Ամեն մի գիտության զարգացման մեջ էական դեր են խաղում միջտեսական կապերը, հայեցակարգերի պայքարը և այլն, միննույն ժամանակ՝ գիտության զարգացման, հատկապես հարացույցի ձևավորման, ինչպես նաև փոփոխության հիմքում ընկած է նաև հանրային պատվերը: Դեռ ավելին, ինչպես բոլոր գիտություններում, կառավարաբանության պարագայում նույնպես գիտելիքի, կարծիքների, հայեցակարգերի կուտակումը ինքնին անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է տվյալ գիտության վերջնական կայացման, այսինքն՝ այդ գիտաճյուղի առաջին հարացույցի ձևավորման համար: Ինչպես հայտնի է, կառավարման մասին գիտության ձևավորման հանրային պատվերը հասունացել էր 19-րդ դարի վերջին⁵, և թելուրյան դպրոցի գոյացմամբ ավարտվեց մինչհարացուցային այդ փուլը⁶, այդպիսով հիմք դրվեց նոր գիտության, որը, բնականաբար, անցնելու էր հարացույցների հերթափոխման երկարատև

⁴ Տե՛ս **Т. Кун**, Структура научных революций / Пер. с англ., М.: Прогресс, 1977, с. 123:

⁵ Տե՛ս «Մենեջմենթ» / ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Սուվարյանի ընդ. խմբ., 4-րդ, լր. և բարեփ. հրատ., Երևան, 2016; **Д.М. Беркович**, Формирование науки управления производством. М., 1973; «История менеджмента». М., 1997; **И.И. Семенова**, История менеджмента. М., 2000; **А.И. Кредисов**, История учений менеджмента. Киев, 2000; **С.Н. Чудновская**, История менеджмента. СПб., 2004; **Р.Л. Дафт**, Менеджмент. 8-е изд. / Пер. с англ., СПб., 2011.

⁶ Կառավարման մասին գիտության ձևավորման մինչհարացուցային փուլի նկարագրությունը փաստորեն տրված է **Ֆրեդերիկ Թելլորի** բնութագրումների մեջ. մարդկային աշխատանքն անխնայողաբար և անարդյունավետ էր գործադրվում, չկար արտադրության կազմակերպման գիտական հիմք, ամեն ինչ արվում էր «աչքաչափով», բացակայում էր կառավարման որևէ հստակ և կայուն համակարգ, իսկ եղածն այնպիսին էր, որ կառավարիչները կախման մեջ էին կառավարվողներից. ըստ էության դա էր ենթակաների պարտադրած «չկամությամբ աշխատանքի» հետևանքը (տե՛ս **Ф.У. Тэйлор**, Научная организация труда, М., 1924):

ընթացք՝ ինչպես ներքին տրամաբանությամբ (նոր փաստերի կուտակում, հայեցակարգերի առաջադրում, օրինաչափությունների ձևակերպում), այնպես էլ արտաքին գործոնի՝ հանրային փոփոխված պատվերի ազդեցությամբ:

Կառավարաբանության 21-րդ դարի հարացույցի բովանդակության զանազան շարադրանքներ կան: Ձևի առումով նկատելի է գրեթե ընդհանրական մի միտում, այն է՝ նորը շարադրվում է որպես հինի հակադրույթ: **Փիթեր Դրաքերը**, օրինակ, քննարկելով մինչև 21-րդ դարի սկիզբը կառավարաբանության զարգացման ընթացքը, առանձնացնում է «կառավարման կանխադրույթներից» (Management Assumptions) յոթ հինը և դրանց հակադրում ութ նորը, որոնք բնորոշելու են 21-րդ դարը:

Ըստ հին կանխադրույթի՝ «գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ կազմակերպության միայն մեկ ճիշտ կառուցվածք», ըստ նորի՝ չկա նման միակ և ճիշտ ձև. «ճիշտն այն կառուցվածքն է, որ համապատասխանում է կազմակերպության գործառնություններին»:

Նույն կերպ՝ ըստ հին մոտեցման՝ «գոյություն ունի կամ կարող է գոյություն ունենալ մարդկանց կառավարելու միակ ճիշտ եղանակը (one right way to manage people)», մինչդեռ նորը հռչակում է, թե չկա նման բան. «Մարդկանց առհասարակ պետք չէ «կառավարել», խնդիրը մարդկանց առաջնորդելն է, և նպատակն էլ այն է, որ արդյունավետորեն դրսևորվեն ամեն մի անհատի գիտելիքն ու կարողությունները»:

Ըստ հին ըմբռնման՝ կառավարումը կենտրոնացած-ներփակված է կազմակերպության շրջանակներով, ըստ 21-րդ դարի պատկերացումների՝ կառավարման խնդիրը միայն կազմակերպության ներքինը չէ, քանի որ «ամեն մի հաստատություն գոյություն ունի արտաքինի համար, և կառավարումն ինքն էլ գոյություն ունի հանուն հաստատության գործունեության արդյունքների ապահովման», «կառավարումը հաստատության այն օրգանն է, որը նրան ունակ է դարձնում արտադրանք տալու, լինի դա բիզնես, եկեղեցի, համալսարան, հիվանդանոց, թե բոնության ենթարկված կանանց ապաստարան»⁷:

Առհասարակ, գրականության մեջ հանդիպում են կառավարաբանության հարացույցի բնութագրման հակիրճ էութենական ձևակերպումներ: Ըստ կազմակերպության զարգացման ամերիկացի փորձագետ **Քարտեր Մաքնամերայի**՝ 21-րդ դարում «նոր հարացույցի» էությունը «փոփոխությունները կառավարելու» կառավարչական ունակության պահանջն է. «Փոփոխությունները կառավարել՝ նշանակում է ոչ թե դրանք վերահսկել, այլ հարմարվել դրանց այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է և

⁷ Տե՛ս **П.Ф. Друкер**, Задача менеджмента в XXI веке / Пер. с англ., М., 2001; **P.F. Drucker**, Management Challenges for the 21st Century, N.Y., 1999; **P.F. Drucker**, Classic Drucker: Essential Wisdom of Peter Drucker from the Pages of «Harvard Business Review», Boston, 2008.

ուղղորդել այնտեղ, որտեղ դա հնարավոր է»⁸: Փոփոխություններին ճկուն հարմարվելն է շեշտադրում իսրայելցի կառավարաբան, գործարարության հայտնի խորհրդատու **Իցհակ Ադիզեսը**. «Նոր հարացույցից պահանջվում է, որ, նախ՝ հաշվի առնի իրերի իրական դրությունը, երկրորդ՝ հնարավորություն ընձեռի կարգավորել դրանք»⁹:

Ումանք էլ, կառավարաբանության հարացույցի ուրվագծվող փոփոխություններն առավել ցայտուն մատուցելու նպատակով դրանք ներկայացվում են աղյուսակի ձևով՝ նորը և հինը կողք-կողքի: Այդպես է վարվում ամերիկուհի գրող, «Հումանիստական հոգեբանության ընկերակցության» համահիմնադիր **Մերելին Ֆերգյուսոնը**¹⁰. նրա աղյուսակում հանդիպում են, մասնավորապես, նախկինի և նորի հակադրման հետևյալ օրինակները՝ «մարդիկ հարմարեցվում են աշխատանքին» (people to fit jobs) և (այժմ) «աշխատանքն է հարմարեցվում մարդկանց» (jobs to fit people), նույնիսկ «ագրեսիվություն, մրցակցություն» (aggression, competition) և «համագործակցություն» (cooperation), կամ էլ՝ «պարտադրված նպատակներ, որոշումները կայացվում են վերից վար» (imposed goals, top-down decision making) և «ողջունելի են ինքնուրույնությունը և համամասնակցությունը» (autonomy encouraged, worker participation) և այլն:

Սույն թեմային առնչվող կարևոր հարցերից մեկը կառավարչի և առաջնորդի բնույթագրերի համեմատությունն է¹¹: Այստեղ նույնպես որոշ տեսաբաններ գերադասում են հակադրել հին հարացույցին բնորոշ կառավարչի դերի շեշտադրումը նոր մոտեցմանը, առաջնորդի դերի մասին նոր պատկերացումներին, որոնք պատշաճ են 21-րդ դարի կառավարչական իրողությանը: Առաջնորդման նոր տեսություններից այս առումով առանձնանում է, այսպես կոչված՝ «Տրոհվող առաջնորդման» (Shared Leadership) տեսությունը, ըստ որի առաջնորդումը ոչ թե մեկուսի անհատի գործունեություն է, այլ մի ընդհանուր երևույթ, միջանձնային հաղորդակցման տեսակ, բոլոր մասնակիցներին հնարավորություն է ընձեռում բացահայտելու այլոց ուղղորդելու սեփական կարողությունը: Մա, սովորաբար, համեմատության մեջ են դնում, պայմանական ասված՝ «հին» կամ «դասական» առաջնորդման հետ¹²: Ըստ «տրոհվող առաջնորդման» տեսաբանների՝ առաջնորդը ոչ թե մեկն է, այլ բոլորը միասին. «Որպես անհատներ, մենք մաս ենք կազմում առաջնորդման գործըն-

⁸ **McNamara C.**, New Paradigm in Management// <http://managementhelp.org/management/paradigms.htm>

⁹ **И.К. Адизес**, Идеальный руководитель: Почему им нельзя стать и что из этого следует / Пер. с англ., М., 2014, с. 35.

¹⁰ **M. Ferguson**, The New Paradigm: Emerging Strategic for Leadership and Organizational Change. N.Y., 1993.

¹¹ Տե՛ս **Վ. Միրզոյան**, Առաջնորդման փիլիսոփայություն, Եր., 2018, էջ

¹² Տե՛ս **G. Nemerowicz, E. Rose**, Education for Leadership and Social Responsibility. London, 1997.

թացի, և միևնույն ժամանակ, ամեն մեկս մյուսից ձիրք ենք ստանում միմյանց առաջնորդելու»¹³: Նման առաջնորդման առավելություններն են համարվում փոխադարձ վստահությունը, կապվածությունը, նվիրվածությունը, հոգատարությունը, միմյանց բարձր արժեքավորումը, ուժերի հանդեպ հավատը: Այս առումով ուշագրավ մի ձևակերպում ենք հանդիպում ամերիկացի **Ջոլ Բարքերի** «Մտածողության հարացույցները» գրքում. «Մենքները կառավարում է հարացույցի շրջանակներում, առաջնորդը ուղղորդում է մեկ հարացույցից դեպի մյուսը»¹⁴:

Նախորդ ամբողջ շարադրանքի լույսի ներքո, կարծում եմ, որ 21-րդ դարում ձևավորվող հարացույցի գծերին կարող ենք հավելել հետևյալը. կառավարչական աշխատանքի նախկին «հաղթանակ-պարտություն» (win-lose) սկզբունքին հակադրվում է նոր՝ «հաղթանակ-հաղթանակ» (win-win) սկզբունքը: Այս առաջարկը հիմնավորելու համար նախապես վերհիշենք կառավարաբանության պատմությունը՝ չմոռանալով նաև բուն կառավարման, որպես համատեղ աշխատող մարդկանց փոխադրեցության որոշակի տեսակի էությունը, այն է՝ կառավարումը աշխատանքի կատարումն է այլոց միջոցով:

Ծրելերիկ Թեյլորի «գիտական կառավարման» հարացույցի հիմքում «տնտեսական մարդու» հայեցակարգն էր, ըստ որի մարդն աշխատում է գերազանցապես տնտեսական վարձատրության համար, ի լրումն՝ իր շահը հետապնդելիս նույնքան անվերապահորեն ծայրահեղորեն անհատապաշտ է, եսական: Թեյլորը աշխատավայրում հաղորդակցումը դիտում էր որպես «երկրորդային» նենգադուլի (սաբոտաժ) տեսակ. Բանվորները գլուխ են պահում, չեն ցանկանում լարված աշխատել, դրա համար էլ սկսում են զրուցել. այստեղից էլ եզրակացություն՝ հարկավոր է հնարավորին չափ սահմանափակել միջանձնային հաղորդակցումը: Իհարկե, Թեյլորը նաև խորհուրդ էր տալիս ձեռնարկատիրոջը զրուցել ենթակաների հետ, ուշադիր ունկնդրել, քննարկել նրանց կարծիքը. Առերևույթ՝ սա նման է հետազայում ձևավորված «մարդկային հարաբերությունների դպրոցի» ներկայացուցիչների նույնաբնույթ դատողություններին, սակայն Թեյլորի համար «ղեկավար-ենթակա» այդորինակ հաղորդակցումը լոկ «բարեգործության տեսակ» էր, ոչ թե կառավարման միջոց: «Անձնական հաղորդակցում մեզ մոտ գրեթե չկա, - ավելի հստակ է ձևակերպում իր դիրքորոշումը **Հենրի Ֆորդը**: - Մարդիկ կատարում են իրենց աշխատանքը և գնում տուն. վերջիվերջո՝ ֆաբրիկան սալոն չէ: Այդուհանդերձ, - վերապահում է անում նա, - մենք ջանում ենք արդարացի վարվել, և թեպետ մեզ մոտ առանձնապես տարածված չեն ձեռք-

¹³ St' u **M.E. Doyle, M.K. Smith**, Shared Leadership // http://www.infed.org/leadership/shared_leadership.htm

¹⁴ St' u **Дж. Баркер**, Парадигмы мышления: как увидеть новое и преуспеть в меняющемся / Пер. с англ., М., 2007, с. 135.

սեղմումները (մենք հատկապես ջենթլմենների չէ, որ ընդունում ենք աշխատանքի), սակայն ձգտում ենք, որքան հնարավոր է, վերացնել թշնամական փոխհարաբերությունները»¹⁵:

Ինչպես հայտնի է, կառավարման հաջորդ՝ «Մարդկային հարաբերությունների» դպրոցի ձևավորմամբ ամենից առաջ վերագնահատվեց միջանձնային հաղորդակցման գործոնի դերը: Էլթոն Մեյոյի, Ուիլյամ Դիքսոնի, Ռաֆ Դարենդորֆի, Մերի Ֆոլետի, Ջեկոբ Մորենոյի աշխատություններում¹⁶ հիմնավորվում է մարդկանց համատեղ գործունեության կառավարման հենց այդ տարրը, այն է՝ ներխաճային փոխհարաբերությունների կարգավորման, համախմբվածության բարելավման անհրաժեշտությունը: Թեյլորյան «տնտեսական մարդու» հարացույցը փոխարինվեց «հոգեբանական մարդով»: Հետագայում «մարդկային հարաբերությունների» դպրոցին բնորոշ հոգեբանական ծայրահեղությունը շտկվեց, իսկ անցյալ դարի 70-ականների վերջին ասպարեզ եկավ «սոցիոլոգիական մարդու» հարացույցը և կառավարման կենտրոն դարձավ «մարդկային կապիտալը»՝ աշխատողի ստեղծագործական ունակությունների առավելագույն բացահայտումն ու գործադրումը¹⁷: Այդուհանդերձ, միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման խնդիրները բնավ էլ հետին պլան չեն նահանջել: Կառավարման ոչ մի տեսաբանի, ոչ էլ կառավարչի հարկ չկա համոզելու, որ հնարավոր չէ ապահովել փոքրիշատե արդյունավետ գործունեություն՝ առանց ներկազմակերպական հաղորդակցման կարգավորման, բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտի ապահովման:

Արդեն քանիցս ասվեց, որ կառավարումը միշտ երկու կողմերի փոխհարաբերության տեսակ է, և ըստ դրա որոշակի բնույթի կարելի է առանձնացնել կառավարման համակարգերի տեսակները՝ «տեխնոկրատական», «հարկադրական», «հսկողական», «մասնակցողական» և «իդեալական» («ինքնակառավարման»)¹⁸: Ինքնին հասկանալի է, որ առաջին երեք տեսակի շրջանակներում կողմերը, որպես կանոն, հակամարտ դիրքերում են, ավելի որոշակի ասած՝ ամեն մեկը ձգտում է շահել՝ կա՛մ բնավ չմտածելով մյուս կողմի շահերի մասին, կա՛մ էլ ուղղակի վնասելով մյուսին: Մի կողմը պարտադրում է, մյուսը՝ ենթարկվում: Մի կողմը հաղթում է, մյուսը՝ պարտվում: Բանակցային գործընթացների կառա-

¹⁵ Տե՛ս Գ. Փորդ, *Моя жизнь, мои достижения*. Ереван: Айастан, 1990, с. 103.

¹⁶ Տե՛ս Կ. Լ. Մորենո, *Социометрия: Экспериментальный метод и наука об обществе*, М., 2004; Է. Մայո, *The Social Problems of an Industrial Civilization*. London: Routledge and Kegan Paul, 1949; Մ. Փ. Փոլլետ, *The New State* // http://sunsite.utk.edu/FINS/Mary_Parker_Follett/Fins-MPF-01.html

¹⁷ Տե՛ս Դավթա Մաք-Գրեգորի, Աբրահամ Մասլոուի, Ֆրեդերիկ Հերցբերգի և մյուս տեսաբանների հայացքների մասին հանգամանորեն տե՛ս Վ. Միրզոյան, *Կառավարման փիլիսոփայություն*, էջ 304–334:

¹⁸ Տե՛ս Վ. Միրզոյան, *Կառավարման փիլիսոփայություն*, էջ 122–129:

վարման ժամանակակից ըմբռնման լեզվով՝ այստեղ գործում է «հաղթանակ-պարտություն» սկզբունքը:

Իրականում, «հաղթանակ-պարտություն» սկզբունքի գործառու-թյանը կարող ենք հանդիպել մարդկանց համակեցության ամենատարբեր դրսևորումներում: Օրինակ՝ այդպիսին կարող է լինել «ծնող-գավակ փոխհարաբերությունը, եթե ամեն մի կողմը եսաբար ձգտում է միայն սեփական շահին, իր կամքը պարտադրում մյուսին՝ բնավ չհոգալով վերջինիս իրական շահերի մասին: Նույնը կարող ենք ասել «գնորդ-վաճառող» (վաճառողը անորակ կամ ժամկետանց ապրանք է «փաթաթում» գնորդի վզին. ինքը շահում է, գնորդը՝ տուժում), «հիվանդ-բժիշկ» (շահամոլ բժիշկը միտումնավոր կեղծ ախտորոշում է կայացնում՝ հիվանդից գումար պոկելու համար), «ղեկավար-ենթակա» (ինքնահավան ղեկավարը թերագնահատում, անտեսում, նսեմացնում է ենթակայի արժանիքները), «դասախոս-ուսանող» (դասախոսը միտումնավոր «կտրում» է գիտուն ուսանողին), «ավագ-կրտսեր» (բիրտ ավագը կրտսերին վերածում է մանկլավիկի) փոխհարաբերությունների վերաբերյալ:

Այդուհանդերձ, հատկապես բանակցությունների ընթացքում է շատ ցայտուն կողմերի վարքագծերի տարբերությունը՝ ըստ նրան ընտրած հաղորդակցական ռազմավարության: Կողքից, չեզոք դիտորդի կարգավիճակով, դյուրին համոզվում ենք, թե ինչպես մեկ կողմը, իսկ երբեմն երկուսն էլ, ձգտում են միակողմանի հաղթանակի՝ անտեսելով կամ ուղղակի ոտնահարելով դիմացինի շահերը:

Արդ, մարդկանց միջև կարող է գոյություն ունենալ փոխանակային հարաբերությունների (ընտանիքում, գործարար կյանքում, քաղաքակա-նության մեջ, ընկերական հարաբերություններում) երեք տեսակ՝

ա. մեկ կողմը հաղթում է, մյուսը՝ պարտվում,

բ. երկու կողմն էլ պարտվում են (երբեմն հենց որպես առաջին տեսակի անխուսափելի հետևանք),

գ. երկու կողմն էլ հաղթում են:

Թե ո՞րն է փաստացի գործադրվում՝ կախված է բազում հանգա-մանքներից՝ կողմերի նպատակներից, տնօրինած լծակներից, ժամանա-կային սահմանափակումից և այլն:

Ակնհայտ է, որ «հաղթանակ-պարտություն» սկզբունքը կարող է իրեն արդարացնել լոկ մեկանգամվա հաղորդակցման դեպքում, վա-ղանցիկ մի պահի, կամ էլ բախումների հանգուցալուծման այն տեսակի պայմաններում, երբ մի կողմը բացարձակ առավելություն ունի մյուսի հանդեպ և մտադիր չէ հետագայում դրա հետ որևէ առնչություն ունենալու: Հասկանալի է, որ նմանօրինակ հաղորդակցումը չի վերա-բերում միևնույն կազմակերպության մեջ գործող մարդկանց և խմբերին. եթե անգամ կարճատև մի պահ նրանց շահերը բախվում են և գայթակղիչ հնարավորություն է լինում պարտության մատնելու մյուս կողմին, ապա երկարատև ժամանակահատվածում «հաղթող» կողմն էլ է տուժում, և ոչ

միայն այն պատճառով, որ պարտ-վածը ձգտում է փոխվրեժի, այլև այն, որ կողմերի շահերը վերջիվերջո շաղկապված են կազմակերպության արդյունավետ գործառնության և անխոչընդոտ զարգացման հրամայականով:

Այնպես որ միակողմանի հաղթանակի ձգտումը գործարար կյանքում իրեն չի արդարացնում և, որպես կանոն, հանգեցնում է երկուստեք պարտության:

Դիցուք, «գնորդ-վաճառող» հաղորդակցման օրինակը. ինքնին հասկանալի է, որ անորակ ապրանք վաճառողը շահում է միայն տվյալ պահին, սակայն առհավետ գնորդ է կորցնում և երկարատև հեռանկարում պարտվում: Հատկանշական է, որ առևտրի «հին» գործելակերպի դեպքում, ըստ ռուսաստանցի կառավարաբան **Վիկտոր Շեյնովի**, «վաճառողն անմիջաբար կենտրոնացած է այն բանի վրա, որ գնորդին հարկադրի գնել. այս պարագայում առքուվաճառքը հիշեցնում է ռազմանավերի միջև հրազարկի փոխանակում»¹⁹: Նրա հորդորն է. «Մի՛ վերաբերվեք վաճառքի ընթացքին կողմերի «ով՝ ում» անխուսափելի առճակատման դիրքերից»²⁰: Սա, փաստորեն, նշածս «հաղթանակ-պարտություն» մոտեցումն է: Եվ, իհարկե, ցանկալի ռազմավարությունն է՝ հաղթահարել սեփական եսականությունը, «մտածել ոչ միայն սեփական օգուտի, այլ նաև գնորդի մասին», «վաճառել միայն այն ապրանքը, որից հաճախորդը գոհ է լինելու»²¹:

Հատկապես փոխադարձ շահավետության ապահովումն է ընկած «հաղթանակ-հաղթանակ» սկզբունքի իրականացման հիմքում: Այսինքն՝ դա ոչ թե բարեգործության մղում է, ոչ էլ մարդասիրության դրսևորում: Գործարար փոխհարաբերությունների տրամաբանության և դրան ենթարկվելու մասին ահա թե ինչ է ասում ամերիկյան ամենանշանավոր կառավարիչներից մեկը՝ **Լի Յակոկկան**. «Դա պետք է բխի իմ շահերից, այլապես ես չեմ խաղա, դա պետք է բխի նրա շահերից, այլապես նա չի խաղա»²²:

Հարկավոր է հասկանալ, որ «հաղթանակ-հաղթանակ» սկզբունքի գործադրումը զուտ տեխնոլոգիա չէ. և եթե անգամ դիտվի որպես տեխնոլոգիա, այն առավել արդյունավետ կլինի, եթե բխի փոխանակային հարաբերության մասնակիցների աշխարհայացքից, մտածելակերպից, արժեքային համակարգից:

Մի ցայտուն օրինակ գեղարվեստական գրականությունից (որ երբեմն ավելի տպավորիչ ու համոզիչ է լինում, քան որոշ գիտական հրապարակումների ծանրամարս լեզուն): Անտուան դե Սենտ Էքզյուպերիի

¹⁹ Տե՛ս **В.П. Шейнов**, Искусство торговли, М.: АСТ, 2010, с. 5.

²⁰ Նույն տեղում, էջ 87:

²¹ Նույն տեղում, էջ 7, 8:

²² Տե՛ս **L. Iacocca**, Where have all the Leaders gone? New York, 2008, p. 108.

փոքրիկ իշխանը, երբ այցելում է «ամեն ինչ» կառավարող թագավորի մոլորակը և խնդրում, որպես ապացույց այդպիսի համատիեզերական գործության, անմիջապես հրամայել արևին մայր մտնելու (մայրամուտի գեղեցկությունը վայելելու համար), թագավորը նրան պատասխանում է (թերթելով ձեռքի տակ եղած օրացույցը), թե՛ նման հրաման ես այսօր կարող եմ տալ միայն ժամը յոթն անց քառասուն րոպեին:

Շարունակությունը հետևյալ բացատրությունն է.

– Եթե ես մի որևէ գեներալի հրամայեմ, որ թիթեռի նման ծաղկից ծաղիկ թռչի կամ ողբերգություն գրի, կամ էլ ճայ դառնա, իսկ գեներալը հրամանը չկատարի, ո՞վ կլինի մեղավորը, նա՞, թե՛ ես:

– Դուք, ձերդ մեծություն,– առանց տատանվելու պատասխանեց Փոքրիկ իշխանը:

– Միանգամայն ճիշտ է,– հաստատեց թագավորը:– Ամեն մեկից պետք է խնդրել այն, ինչ նա կարող է տալ: Իշխանությունը նախ և առաջ պետք է խելացի լինի: Եթե դու քո ժողովրդին հրամայես ծովը նետվել, նա հեղափոխություն կանի: Ես իրավունք ունեմ հնազանդություն պահանջելու, որովհետև իմ հրամանները խելացի են:

Սա հենց մեր խնդրո առարկա սկզբունքի գործադրման օրինակն է: Չէ՞ որ այստեղ, ինչպես տեսնում ենք, խելամիտ իշխանավորի վարվելակերպի շնորհիվ հաղթում է և՛ հրամայող կողմը, քանի որ կատարվում է նրա հրամանը, և՛ կատարող կողմը, քանի որ կատարում է հենց այն, ինչը ցանկանում է: Պարտադրանքի դեպքում հրամայող կողմը պարտվում է (ժողովուրդը հեղափոխություն է անում), բայց մյուս կողմի հաղթանակն էլ երկար չի տևում՝ հեղափոխությանը վաղ թե ուշ հաջորդում է հակահեղափոխությունը: Այսինքն՝ վերստին «հաղթանակ–պարտություն» սկզբունքն անխուսափելիորեն հանգեցնում է «պարտություն–պարտություն» իրողությանը. կողմերը թուլացնում են միմյանց, շարունակական բախմամբ՝ երկիրն ավերվում է:

Ամերիկացի կառավարաբան, «Արդյունավետորեն գործող մարդկանց յոթ սկզբունք» հռչակավոր գրքի հեղինակ **Սթիվեն Զովին** մեծ տեղ է հատկացնում «հաղթանակ–հաղթանակ» սկզբունքի լիակատար ըմբռնմանը: Չորրորդ սկզբունքն այդպես էլ ձևակերպված է. «Մտածեք «հաղթանակ–հաղթանակ»-ի ոգով»: Մանրամասնումը հետևյալն է. «Դա նշանակում է մտածել առատության և հնարավորությունների դիրքերից, այլ ոչ թե սակավության և անհաշտ մրցակցության դիրքերից: Դա ոչ էսասերի մտածելակերպ է (հաղթանակ–պարտություն), ոչ էլ կամ նահատակի (պարտություն–հաղթանակ): Դա մտածելակերպ է ոչ թե «իմ», այլ «մեր» հասկացություններով»²³:

²³ Տե՛ս **S.R. Covey**, The 8th Habit: From Effectiveness to Greatness. New York, 2005, p. 152 – 153.

Քննարկվող սկզբունքի փաստացի կիրառումը պահանջում է, բնականաբար, փոխանակային հարաբերության կողմերի միջև փոքրիշատե փոխըմբռնման հնարավորություն: Եթե մարդիկ խոսում են «տարբեր լեզվով», ապա ինքնին անխուսափելի են թյուրիմացությունները: Շատ օգտակար է **Ջոլ Բարքերի** կարծիքը. «Թոմաս Քունն առաջարկում է այլ հարացույցի տեր զրուցակցին վերաբերվել որպես մեկին, որն օտար լեզվով է խոսում. մինչև դուք չսովորեք այդ լեզուն, չեք հասնի հաջող հաղորդակցման: Կարծում եմ՝ հրաշալի խորհուրդ է: Ես հանգել եմ այն եզրակացությանը, որ երբ տարաձայնություններ են առաջանում, հարկավոր է լռել և լսել: Վաղ թե ուշ զրուցակիցը կբացահայտի իր հարացույցը: Դա հասկանալով՝ ես կհասկանամ նաև, թե նա ինչ է ասում: Հնարավոր է, որ ես նախկինի պես մնամ այլ կարծիքի, բայց առնվազն կիմանամ թե ինչու»²⁴:

Փոխադարձ ըմբռնումը «հաղթանակ-հաղթանակ» սկզբունքի գործադրման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է. այդ սկզբունքի ոգով հնարավոր է գործել միայն փոխադարձ վստահության պայմաններում: Հարկավոր է նկատել, որ «վստահության գործոնը» կառավարաբանական գրականության մեջ սովորաբար նեղ իմաստով է գործածվում, սակայն վստահությունն ավելի լայն տիրույթ ունի, ներառում է կազմակերպության բարոյահոգեբանական ամբողջ մթնոլորտը, կառավարման մշակույթի բոլոր տարրերը: Դարձյալ պիտի ասվի, որ որոշակի միջավայրում մարդկանց միջև փոխադարձ վստահության արմատավորումը, թեպետ կարող է շարադրվել որպես տեխնոլոգիա, որոշակի քայլաշար (ալգորիթմ), բայց խուսափենք նեղ մոտեցումից. միմյանց վստահելու կարողությունը մարդ արարածի էութենական բնութագրումներից մեկն է:

Հենց այդպես էլ վարվում են ամերիկացի խորհրդատուներ **Ռաբին Դրիքը** և **Քենեթն Ստաֆը** իրենց «Վստահության վարքականոնը» ուշագրավ գրքում. «Մարդիկ գոհունակությամբ հետևում են նրանց, ում վստահում են, և հազվադեպ են հետևում նրանց, ում չեն վստահում: Դա մարդկային բնության իմաստուն և խորապես արմատավորված տարրն է»²⁵:

Իսկ ինչպե՞ս կազմակերպությունում ստեղծել համատեղ աշխատող մարդկանց միջև փոխադարձ վստահության մթնոլորտ: Շահամիտման հիմնախնդիրների լուսաբանման ասպարեզում առաջատար բրիտանացի տեսաբաններ **Շիլա Բիչին** և **Փիթեր Մարտինը** եզրակացնում են. «Քանի որ վստահությունը գոյանում է, ամենից առաջ, որպես երկարատև փոխհարաբերությունների արդյունք, հարկավոր է կազմակերպությունում ստեղծել վստահություն ձևավորող մշակույթ, այսինքն՝ մի միջավայր, որ-

²⁴ Տե՛ս **Дж. Баркер**, Парадигмы мышления, с. 131.

²⁵ Տե՛ս **R. Dreeke, C. Stauth**, The Code of Trust. New York: St. Martin's Griffin, 2019, p. 4.

տեղ աշխատակցի խոսքը նրա պարտականությունն է. եթե աշխատակիցը չի կարողանում կատարել այն, ինչը խոստացել է անել, ապա անհապաղ նախագծաշացնում է նրանց, ում խոստում է տվել, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան այլընտրանքային լուծում գտնելու: Ավելի ստույգ ասած՝ հարկավոր է առավել դրական կազմակերպական մշակույթ, որի պարագայում աշխատակիցը հարկադրված չլինի ասելու «Այո, ես կանեմ դա», եթե իրականում հասկանում է, որ պարտավոր է ասել «Ո՛չ, ես դա չեմ կարող անել» կամ «Ես չեմ կարող դա հիմա անել»: Մարդիկ ասում են «Այո», թեպետ հարկ էր «Ոչ» ասել, որովհետև զգուշանում են, թե նրանց կրնալեն որպես համագործակցության անընդունակ մեկի»²⁶: Հավելեմ միայն, որ այստեղ առնչությունը երկկողմանի է, այսինքն՝ ինչպես ներկազմակերպական վստահության մթնոլորտն է պայման ստեղծում երկուստեք հաղթանակի տրամադրվելու, այդպես էլ այս ոգով գործելը, որպես կառավարչի հիմնական հմտություններից մեկը, փոխադարձ հարգանքի և համաձայնության է հանգեցնում:

Վերստին պիտի հիշատակենք մարդկային համակեցության կարևոր բնութագծերից մեկը՝ բոլոր տեսակի կապերի և հարաբերությունների երկողմանիությունը: Որևէ իշխանավորի կամ կառավարչի կարող է թվալ, թե քանի որ «գերադասություն – ստորադասություն» աստիճանակարգում ինքն ունի գերադաս դիրք, ուստի անվերապահորեն է իշխում և ենթակային իր կամքը ազատորեն թելադրում: Մինչդեռ կառավարիչն էլ է կախման մեջ կառավարվող ենթակայից՝ վերջինիս վերաբերմունքից, պատրաստակամությունից, կատարողական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ հմտությունից, կառավարչի հետ համագործակցելու տրամադրվածությունից և այլն. գրականության մեջ դա ընդունված է անվանել «կառավարվողների իշխանություն»: Զուր չէ **Ռ. Դրիքի** և **Ք. Ստաֆի** ևս մեկ դիտարկումը. «Մարդիկ իրենց թույլ չեն տալիս վստահելու նրանց, ովքեր կառուցում են միակողմանի հարաբերություններ. եսականությունը վանում է»²⁷: Հավելեմ, որ «միակողմանիություն – երկկողմանիություն» հանգամանքն էլ հիմք է տալիս տարբերակելու իրական վստահությունը դրա նենգափոխված, նմանակային ձևերից, հատկապես ամբոխահաճ կառավարումից, մարդկանց հուզական աշխարհը և կարծիքները ձեռնածության ենթարկելու անբարո հնարքներից: Մեկ էլ մեջբերենք այս հեղինակներին. «Ձեռնածություն՝ նշանակում է մարդկանց դրդել, վստահությունը նրանց առաջնորդելն է»²⁸:

Հանում արդյունավետ կառավարման «հաղթանակ–հաղթանակ» սկզբունքի գործադրման հաջորդ կարևոր պայմանը կողմերի՝ փոխա-

²⁶ Տե՛ս **Յ. Րիչի, Ս. Մարտին**, Управление мотивацией / Пер. с англ., М., 2004, с. 94.

²⁷ Տե՛ս R. Dreeke, C. Stauth, The Code of Trust, p. 31.

²⁸ Տե՛ս Ibidem, p. 5.

դարձ զիջման տրամադրվածությունն է: Միջանձնային փոխհարաբերությունների բնականոն կարգավորման հոգեբանական խոչընդոտներից մեկն էլ հենց այն է, որ զիջումը ընկալվում է որպես զիջողի թուլության վկայություն: Մինչդեռ խոսքը ոչ թե միակողմանի զիջման մասին է, այլ հատկապես փոխադարձ զիջման, որը, կարելի է ասել, առաջին քայլն է առճակատումից հնարավոր համագործակցությանն անցնելու, իսկ առաջին քայլը միշտ էլ ուժեղ կողմն է անում:

Կառավարաբանական գրականության մեջ փոխզիջումը դիտարկվում է որպես միջանձնային և գործարար բախումների կարգավորման արդյունավետ միջոցներից մեկը, բայց չնոռանանք, որ դա, թերևս, առավել կարևոր դեր ունի ապակառուցողական բախումներից խուսափելու առումով: Փոխզիջման առաջարկը հարգանքի և բարյացակամության ցուցադրում է մյուս կողմի հանդեպ, նաև գործակցելու պատրաստակամություն՝ համատեղ լուծելու կողմերի առջև ծառացած խնդիրը (համատեղ պարզելու կողմերի բախման պատճառ դարձած երևույթը, ճշտելու կողմերի դիրքորոշման միջև հնարավոր ընդհանրությունը, որոշ ժամանակով դադար տալու և այլն):

Այստեղ հարկավոր է հասկանալ մի շատ կարևոր հանգամանք. Փոխզիջումը միջոց է, ոչ թե ինքնին նպատակ. փոխզիջմամբ կողմերը, այդուհանդերձ, ձգտում են իրենց սեփական նպատակին՝ հենվելով փոխզիջման հանգրվանի վրա. վերջինս յուրատեսակ խոստում է դառնում հնարավոր հաջողության համար: Ի դեպ, այստեղ լեզվական խնդիր կա. անգլերեն «compromise» բառը հենց ուղղակի նշանակում է՝ «փոխադարձ խոստում»՝ «com» + «promise»: Մինչդեռ ժամանակին կատարված հայերեն թարգմանությունը, ըստ էության, մթազնում է երևույթի ամբողջական իմաստը:

Այս առումով շատ պերճախոս է ամերիկացի շուկայաբան **Սեթ Գոդինի** հակիրճ և դիպուկ սահմանումը. «Արդյունավետ շուկայավարումը ամբողջովին խոստում է տալիս»²⁹:

Այդուհանդերձ, փոխզիջումը պետք է ճանապարհի բացի դեպի առավել ցանկալի լուծման որոնում: Այլապես, ամերիկացի մեկ այլ շուկայաբան **Թոմաս Քայզերը** իրավունք ունի ասելու. «Փոխզիջումը, երբ փորձում ենք ընդառաջ գնալ գնորդին, կարող է լինել ժամանակի խնայողություն, բայց քանի որ այդօրինակ փոխզիջումը չի բավարարում երկու կողմերի պահանջներին, ուստի սա բնավ էլ գովական «հաղթանակ–հաղթանակ» լուծումը չէ, և այն մրցակիցը, որ կկարողանա գտնել երկու կողմին բավարարող նորարարական լուծում, նա էլ կգողանա ձեր բիզնեսը»³⁰:

²⁹ Տե՛ս **S. Godin**, This is Marketing, New York, 2019, p. 27.

³⁰ Տե՛ս **T.C. Keiser**, Negotiating with a Customer You Can't Afford to Lose // Harvard Business Review on Negotiation and Conflict Resolution. Boston, MA: Harvard Business School Publishing, 2000, p. 90.

Փոխգիշման (բացատրության լույսով՝ փոխադարձորեն խոստումնալից առաջարկի) ունակ կառավարիչը, առավել քան սեփական անսխալականությանն անսասան հավատացողը, ընդունակ է նաև «հաղթանակ-պարտություն» ոճով սկսված գործարար զրույցը կամ բանակցությունները վերափոխելու, ուղղելու ցանկալի՝ «հաղթանակ-հաղթանակ» ընթացքի հունով³¹։ Սա նշանակում է կանխարգելել ապակառուցողական բախման ծագումը, կամ էլ մեղմել արդեն գոյացած բախման ընթացքը, և առհասարակ, գործարար հաղորդակցման բոլոր իրավիճակներում ապահովել ստեղծագործական, հարգալից, արգասաբեր մթնոլորտ։

Անգամ ինչ-որ հարցում կորուստ կրելով՝ առաջինը զիջման գնացող և այդկերպ աշխատակիցներին փոխգիշման վարվելակերպի օրինակ տվող կառավարիչը, վերջիվերջո, շահում է, քանի որ առարկայորեն ցույց է տալիս, որ իր համար առավել կարևոր են ոչ թե միակողմանիորեն սեփական դիրքը շեշտելը կամ նկրտումներն ի ցույց դնելը, այլ երկրորդ կողմի հետ երկուստեք շահավետ երկարատև փոխհարաբերությունները, հետագայում նույնպես արդյունավետ համատեղ աշխատանքը։

«Հաղթանակ-հաղթանակ» սկզբունքի գործադրման այս հիմնական պայմանները, կարծում եմ, անհրաժեշտ են նաև 21-րդ դարի կառավարաբանության թվարկված մյուս բնութագծերի փաստացի մարմնավորման համար։ Իսկապես, երկուստեք հաղթանակի տրամադրվածությամբ է միայն հնարավոր կազմակերպության ներսում արմատավորել ընդհանուր նպատակի զգացողություն, առավելագույնս նույնացնել կազմակերպության և անհատի շահերն ու ակնկալիքները, մղել աշխատակազմի բոլոր անդամներին ստեղծագործական համամասնակցության, ապահովել աշխատանքի բնույթի և աշխատողի անհատական առանձնահատկությունների ներդաշնակություն, ինքնուրույնություն և նախաձեռնողականություն ծավալելու ասպարեզ և հնարավորություն, փոփոխություններին ճկուն հարմարվելու կարողություն։

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հիմնավորվում է «կառավարման արդյունավետություն» և «արդյունավետ կառավարում» ըմբռնումների տարբերությունը։ Առաջին պլան է մղվում բուն կառավարչական աշխատանքի՝ «սուբյեկտ-օբյեկտ» փոխազդեցության ներդաշնակության ապահովման խնդիրը։ Որպես վերջինիս լուծումներից մեկը առաջարկվում է մասնագիտական գրականության մեջ լայնորեն քննարկվող՝ կառավարաբանության 21-րդ դարի հարա-

³¹ Խոսքային հաղորդակցման եռաբաղադրիչ՝ «բանավեճ – վիճաբանություն – վեճ» իրողության հանգամանալից վերլուծության, և, մասնավորապես, «վեճի» վերածվող «վիճաբանությունից» դեպի «վիճաբանությունը» մասնակիցների հանդուրժող և փոխհարգալից հաղորդակցմանը, անցնելու հնարքների մասին տե՛ս Վ. Միրզոյան, Հանդուրժող խոսք, Եր., 2017։

ցույցի բովանդակության մեջ ներառել «հաղթանակ–հաղթանակ» սկզբունքը: Բացահայտվում է դրա էությունը, կարևորությունը կառավարման արդյունավետության ապահովման համար, դիտարկվում են այդ սկզբունքի գործադրման որոշ առանձնահատկությունները:

Հիմնաբաներ. կառավարում, «արդյունավետ կառավարում», «կառավարման արդյունավետություն», կառավարաբանության 21-րդ դարի հարացույց, «հաղթանակ–հաղթանակ» սկզբունք, փոխադարձ վստահություն, փոխզիջում

Օգտագործված գրականություն

1. Պ. Հեյնե, Տնտեսագիտական մտածելակերպ, Եր., 2008, էջ 22:
2. Վ. Միրզոյան, Կառավարման փիլիսոփայություն, Եր.: Մեկնարկ, 2021, էջ 12–13, 115–121:
1. Վ. Միրզոյան, Արդյունավետ կառավարում և կառավարման արդյունավետություն // «Բանբեր ՀՊՏՀ», 2012, № 1, էջ 58–75:
2. Т. Кун, Структура научных революций / Пер. с англ., М.: Прогресс, 1977, с. 123:
3. McNamara C., New Paradigm in Management// <http://managementhelp.org/management/paradigms.htm>
4. И.К. Адизес, Идеальный руководитель: Почему им нельзя стать и что из этого следует / Пер. с англ., М., 2014, с. 35.
5. М. Ferguson, The New Paradigm: Emerging Strategic for Leadership and Organizational Change. N.Y., 1993.
6. Վ. Միրզոյան, Առաջնորդման փիլիսոփայություն, Եր., 2018, էջ
7. G. Nemerowicz, E. Rose, Education for Leadership and Social Responsibility. London, 1997.
8. M.E. Doyle, M.K. Smith, Shared Leadership // http://www.infed.org/leadership/shared_leadership.htm
9. Дж. Баркер, Парадигмы мышления: как увидеть новое и преуспеть в меняющемся / Пер. с англ., М., 2007, с. 135.
10. Г. Форд, Моя жизнь, мои достижения. Ереван: Айастан, 1990, с. 103.
11. Я.Л. Морено, Социометрия: Экспериментальный метод и наука об обществе, М., 2004; E. Mayo, The Social Problems of an Industrial Civilization. London: Routledge and Kegan Paul, 1949; M.P. Follett, The New State // http://sunsite.utk.edu/FINS/Mary_Parker_Follett/Fins-MPF-01.html
12. Դավիթ Մաք-Գրեգորի, Արահամ Մասլոուի, Ֆրեդերիկ Հերցբերգի և մյուս տեսաբանների հայացքների մասին հանգամանորեն տե՛ս Վ. Միրզոյան, Կառավարման փիլիսոփայություն, էջ 304–334:
13. Վ. Միրզոյան, Կառավարման փիլիսոփայություն, էջ 122–129:
14. В.П. Шейнов, Искусство торговли, М.: АСТ, 2010, с. 5.
15. L. Iacocca, Where have all the Leaders gone? New York, 2008, p. 108.
16. R. Dreeke, C. Stauth, The Code of Trust. New York: St. Martin's Griffin, 2019, p. 4.
17. Ш. Ричи, П. Мартин, Управление мотивацией / Пер. с англ., М., 2004, с. 94.
18. S. Godin, This is Marketing, New York, 2019, p. 27.

19. T.C. Keiser, Negotiating with a Customer You Can't Afford to Lose // Harvard Business Review on Negotiation and Conflict Resolution. Boston, MA: Harvard Business School Publishing, 2000, p. 90.

ПРИНЦИП «ПОБЕДА – ПОБЕДА» КАК УСЛОВИЕ УПРАВЛЕНЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ

Валерий Мирзоян

доктор философских наук, профессор, свободный исследователь

В статье обоснована разница между понятиями «эффективное управление» и «эффективность управления», тем самым на первый план теоретического анализа выдвинута задача обеспечения гармоничности во взаимоотношениях «субъекта» и «объекта» управления, что собственно и является сутью управленческой работы. Автор предлагает собственное определение понятия «парадигма», в свете которого рассматривает основные факторы изменения парадигмы управления, начиная со становления школы научного менеджмента до современных концепций. Проведён краткий анализ существующих точек зрения относительно происходящих изменений в управленческой работе и их соответствующих отражений в парадигме управления. Принцип «победа – победа» автором предлагается как важное дополнение к основным характеристикам парадигмы управления в XXI веке. Раскрыта суть этого принципа, дана его оценка в обеспечении максимально эффективной управленческой работы, а также рассмотрены некоторые особенности его практической реализации. Особо подчеркнута идея, что данный принцип ни в коем случае нельзя рассматривать лишь как определенную технологию и при его практическом внедрении соответственно ограничиться лишь организационными мероприятиями; менеджеру следует прежде всего заботиться о создании в организации атмосферы взаимного доверия.

Ключевые слова: управление, «управленческая эффективность», «эффективность управления», парадигма управления в XXI веке, принцип «победа – победа», взаимное доверие, компромисс

**PRINCIPLE «WIN–WIN»
AS A CONDITION OF MANAGEMENT EFFICIENCY**

Valeri Mirzoyan

Sc. D. in Philosophy, Professor, Freelancer

The article substantiates the difference between the concepts of «effective management» and «management efficiency»; thus, the task of ensuring harmony in the relationship between the «subject» and «object» of management is brought to the forefront of the theoretical analysis, which, in fact, is the essence of manager's task. The author offers his own definition of the concept of "paradigm", in the light of which he considers the main factors of changing the management paradigm, from the formation of the school of scientific management to modern concepts. A brief analysis of the existing points of view regarding the ongoing changes in management work and their respective reflections in the management paradigm is carried out. The principle «win – win» is proposed by the author as an important addition to the main characteristics of the management paradigm in the 21st century. The essence of this principle is revealed, its assessment is given in ensuring the most effective management work, and also some features of its practical implementation are considered. The idea was especially emphasized that this principle should by no means be considered only as a specific technology and, in its practical implementation, accordingly, it should be limited to only organizational measures; the manager should be concerned about creating an atmosphere of mutual trust in the organization.

Key words: management, «managerial efficiency», «management effectiveness», the paradigm of management in the XXI century, the principle «win – win», mutual trust, compromise

Ներկայացվել է՝ 22.08.2021 թ.

Ընդունվել է՝ 15.09.2021 թ.

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Արմեն Ճուղուրյան

Հյուսիսային համալսարան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

jarmen1@yandex.ru

Կառավարման (մենեջմենթի) և կառավարչական ունակությունների բազում սահմանումներ կան, որոնք բխում են բիզնես գործունեության նպատակադրումներից, սոցիալ-տնտեսական առաջընթացի կայունության ապահովումից կամ մարդկանց խմբերի վարքագծային կարգավորումներից: Սակայն մեր նպատակը մենեջմենթի «ոսկե սահմանման» փնտրտուքը չէ, այլ պարզապես մեկնաբանել է, թե ինչու է անհրաժեշտ կառավարել, և ինչպե՞ս պետք է կառավարել մեր ժամանակներում:

Իսկապես, եթե դիտարկում ենք կենդանիների վարքագիծը, նկատում ենք, որ հատկապես խմբային կյանքով ապրողները կիրառում են կառավարման հստակ սկզբունքներ և առավել կազմակերպված վարքագիծ են դրսևորում իրենց կենսագործունեության ընթացքում: Հատկապես այն առավել ցայտուն դրսևորվում է մեղունների և մրջյունների մոտ, որոնք մարդկանցից ոչ պակաս կառավարման գործիքակազմ են կիրառում. իրականացնում են աշխատանքի բաժանում, կիրառում են անվտանգության համակարգեր, կազմակերպում վերահսկողության գործառույթներ, ընդ որում ոչ թե ապրիորի, այլ կազմակերպված ճանապարհով:

Այպես, եթե աշխատասեր մեղունները նեկտար չեն բերում, ապա փեթակի նախամուտքի մոտ կանգնած զինվոր-մեղունները նրանց ներս չեն թողնում և նորից հետ են ուղարկում բերքահավաքի: Փեթակի ներսում էլ յուրաքանչյուր մեղու գիտի իր գործը, աշխատելով նեկտարի պաշարման, մայր մեղվի կերակրման, բոռերից պաշտպանման ոլորտներում: Եվ այս գործառույթներն իրականացվում են համակարգված, մեկը մյուսով լրացնելով, ու կարծես մեղվաընտանիքի չգրված կանոններով են ուղղորդվում, այսինքն բնագոյային կանոնակարգված բնույթ ունեն:

Վարքագծային ուղղորդման փայլուն օրինակ է նաև մրջնաբույնը, որի համայնքը նույնպես բաղկացած է աշխատող-մրջյուններից, զինվոր-մրջյուններից, մայր-մրջյունից, որը սերունդներ է ապահովում: Այստեղ նույնպես յուրաքանչյուրը գիտի իր գործառույթները, և դրանք անում է բնագոյային կանոնակարգված մոտեցումներով, առանց որևէ գրված օրենքների և պարտադրված վարքագծային նորմերի:³²

Այստեղից հարց է ծագում: Արդյոք չէ՞ն կարող մարդիկ էլ ընդօրինակել այդ միջատների բնական վարքագիծը և ազատորեն գործել ու արարել, չենթարկվելով ոչ օրենքների և ոչ էլ վարքագծային կանոնների,

³² Տե՛ս Ճուղուրյան Ա., Կառավարում, //Հյուսիսային համալսարան, 2021, էջ 6-7

չուղղորդվելով և ոչ մեկի կողմից ու չունենալով դրսից կարգավորիչ ներազդեցություն: Իմիջիայլոց, անարխիստական շարժումը, որը սկիզբ առավ դեռևս երեք դար առաջ, իր հիմքում դնում էր հենց անձի կամ հանրային ազատության գաղափարը, առաջարկելով կամավոր համագործակցության վրա հիմնվող ինքնավար հասարակություն:³³

Այստեղ շեղադրվում էր և անձնային գործելաոճի ազատությունը, և համայնքային խմբերի անկախությունը, որոնք կարգավորիչ ներազդեցության չափտի ենթարկվեն դրսից: Սակայն փորձը ցույց է տալիս, որ մարդիկ չկարողացան գործել անիշխանական միջավայրում, և միշտ էլ համակարգված կարգավորող ազդեցության տակ գտնվեցին տարբեր մակարդակների կառավարիչների կողմից, այսինքն դրսևորեցին ոչ թե քառասային, այլ կառավարվող վարքագիծ: Ընդ որում, այդ վարքագիծը կարող է իրագործվել ոչ միայն կառավարիչների ներազդեցության ճանապարհով, այլև ինքնակառավարման միջոցով: Սակայն վերջինս նույնպես անուղղակիորեն ենթարկվում է արտաքին կառավարչական ներազդեցության:

Անգամ նախնադարյան քարանձավային մարդը հասկացավ, որ առավել հեշտանում է կյանքը, երբ մարդիկ խմբերով են ապրում և ցեղապետի կողմից կառավարվում են թեկուզ ավտորիտար, բայց կարգաբերվող մոտեցումներով: Վարքագծային անիշխանությունը կրբերեր նրան, որ անկառավարելի կդառնար որսի տրամադրումը համայնքի անդամների միջև, կիրականացվեր աշխատանքի անկազմակերպ բաշխում և, ի վերջո, կստեղծվեր քառասային իրավիճակ ու մարդիկ կմատնվեին սովի և անկարողության: Ուրեմն անգամ քարանձավային մարդն էր գիտակցում, որ իր նպատակադրումները չէին կարող իրականանալ ապրիորի գործողություններով, դրանք ինչ-որ ձևով պետք է ուղղորդվեին այնպես, որ ի վերջո ցանկալի արդյունք ապահովվեին գոյատևման համար: Իսկ այդ ուղղորդումը պահանջում էր հատուկ հմտություններ ու կարողություններ, որոնց ամբողջությունը հիմա արդեն կարելի է ձևակերպել որպես կառավարման արվեստ:

Կառավարումը մեր օրերում հասարակության և անհատի գործունեության անբաժանելի մասն է կազմում: Անկառավարելի չէ ոչինչ, իսկ եթե գործողությունները դուրս են գալիս կառավարման ազդեցությունից, ապա դրանք կրում են ձախողման ռիսկեր: Այսպիսով, մենեջմենթը նախանշված նպատակներին հասնելու համար ապահովում է բնականոն ընթացք և կայունություն՝ սուբյեկտների կողմից իրականացնելով կարգավորիչ ներազդեցություն կառավարվող օբյեկտների վրա:


Եթե չիրականացվի կառավարում, այսինքն գործողությունների վրա կարգավորիչ ներազդում, ապա հստակ չի արձանագրվի, թե ի՞նչ նպատակադրումներ կան, ի՞նչ ճանապարհով կարելի է դրանց հասնել,

³³Տե՛ս Անարխիզմ, [//https://hy.wikipedia.org/wiki](https://hy.wikipedia.org/wiki)


ովքե՞ր են կարգաբերելու նախանշված նպատակադրումների իրացման ընթացքը, ովքե՞ր են հետևելու, թե ինչպես են դրանք իրագործվում և, ի վերջո, ովքե՞ր են կայացնելու որոշումներ, որոնք առանցքային են լինելու նպատակադրումներն իրականացնելիս: Հենց այս «ովքեր»-ն էլ մեր կյանքում հանդես են գալիս որպես կառավարիչներ (մենեջերներ):

Հավելենք նաև, որ մենեջմենթը (ֆրանսերեն՝ *ménagement* «ուղեկցելու, ուղղություն տալու արվեստ», լատիներենից՝ «ձեռքով ուղղություն տալ»), առավել լայն իմաստով նշանակում է տարբեր մակարդակների սոցիալ-տնտեսական համակարգերի և մոդելներում ընդգրկված նպատակադրումների հասնելու միջոց, որը մեր օրերում վերածվել է կիրառական գիտության:

Սոցիալ-տնտեսական զարգացվածության այսօրվա «սարդոստայնում» հայտնված անհատները կամ մարդկային խմբերը պարզապես կխճճվեն իրենց վարքագծային գործողություններում և կհայտնվեն քառասյին միջավայրում, եթե չունենան նպատակադրումներին հասնելու ունակություն, առավել ևս, եթե չենթարկվեն այդ նպատակադրումների հասանելիության կարգավորիչ ներազդեցության: Ընդ որում, այդ ուղղորդիչ ազդեցությունը կարող է ձևավորվել անհատի մոտ՝ որպես ինքնակառավարման կամ ինքնակազմակերպման միջոց, կոլեկտիվի մոտ՝ որպես կորպորատիվ կառավարման միջոց, կամ վերադասի մոտ՝ որպես գործադիր կառավարման միջոց: Սակայն բոլոր դեպքերում, կառավարում տեղի չի ունենա, եթե այն չգործի նախանշված համակարգի շրջանակում:




կառավարման
միջավայրի
կայունությունից



մինչև առաջադիմական
դինամիկ կառավարչական
փոփոխություններ

հրահանգավոր-
ված կառավա-
րումից



մինչև ստեղծարար
կառավարչական
գործելաձև

Գծապատկեր 1 Կառավարչական ունակությունների վերափոխումների էնթացքը³⁴

Սոցիալ-տնտեսական կյանքը ներկայումս շատ արագ է փոփոխությունների ենթարկվում, որն իր մարտահրավերներն է առաջադրում կառավարման գործընթացին: Եթե ոչ վաղ անցյալում կառավարման առանցքում դրվում էր վարչահրամայական մոտեցումը, գերիշխում էին վարչարարական որոշումները, ապա ներկայումս կառավարվող օբյեկտներն առավելապես ձգտում են վարքագծային ինքնակարգավորման, ստեղծարար կառավարչական գործելաձևի, «ներքևից» եկող նորամուծական կարգաբերումների: Եվ սա բխում է ոչ միայն հասարակության դեմոկրատացումից, տնտեսության ազատականացումից, այլև մրցունակ կառավարչական գործիքների կիրառման անհրաժեշտությունից, լուծումների ակտիվությունից, արհեստական բանակությամբ ներկայիս կառավարչական խնդիրներ իրականացնելիս, էլեկտրոնային կառավարման եղանակների լայնածավալ կիրառումից:

Ներկայումս շահեկան դիրքեր են գրավում այն կազմակերպությունները, որոնք չեն մերժում նորամուծական կառավարման մարտահրավերները և համարձակորեն ընդառաջ են գնում դրանց: Հատկապես, առաջնահերթ համարելով կառավարման համակարգերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, կառավարչական ստեղծարար գաղափարների գեներացումն ու իրագործումը հանգեցնում են ժամանակակից կառավարչի ունակությունների վերանայումների (գծապատկեր 1):

Ներկայումս էապես նվազում է կառավարման արդյունավետությունը, երբ կառավարիչները հիմնականում վերահսկողի դերում են հայտնվում: Այս դեպքում, կառավարվող օբյեկտները գտնվում են կաշկանդված գործունեության շրջանակում, հիմնականում չեն գնում փոփոխություններ և առաջադիմական քայլեր պարունակող գործողությունների, քանի որ ընդամենը սպասում են «վերևից» եկող հրահանգների և չեն ցանկանում որևէ նախաձեռնություն դրսևորել «ներքևից»:

³⁴ Տե՛ս Ճուղուրյան Ա., Կառավարում, //Հյուսիսային համալսարան, 2021, էջ 175

Բնականաբար, նման պայմաններում ուղղակի ոչնչացվում են նորամուծական կառավարման գաղափարները և կազմակերպությունները չեն կիրառում մրցունակ կառավարչական գործիքակազմ: Ուստի, ավանդական «վերահսկող կառավարիչը» վերափոխելով իր վարքագիծը, այժմ փորձում է ներկայանալ որպես «հնարավորություններ ընձեռող կառավարիչ»:³⁵

Ներկայումս լայն կիրառություն է գտնում ներառական կառավարումը, երբ կառավարվող օբյեկտներն իրենց մասնակցային դերակատարումն են ունենում կառավարչական որոշումներում: Լայն թափ է ստանում նաև կորպորատիվ կառավարումը, որի ներդրման շարժառիթը կառավարման համակարգի բարելավումն և ընկերության համար մրցակցային առավելությունների ապահովումն է: Եթե սրանք մեկնաբանվում են կորպորատիվ կառավարման լեզվով, ապա ազահությունը ընկերության, բաժնետերերի ու այլ շահառուների շահն անտեսելով և իրավունքները ոտնահարելով, սեփական շահը գերադասելով ընկերության հսկող բաժնետիրոջ կամ ղեկավարների կողմից որոշումների կայացումն է, այլոց գործունեությանն անհարկի միջամտումը: Ծուլությունը խնդիրների լուծման բացառումն է, անգործությունը կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարումը և այլն: Վախն անկախ դատողության կորուստն է, տեղեկատվության թաքցնելը, որոշումներ կայացնելիս առանց խնդրի էության մեջ խորանալու քվեարկելը:³⁶

Մասնակցային կառավարման մեթոդներն են բնակչության տեղեկացումն ու ներգրավումը, որպեսզի որոշումներ չկայացվեն մեկուսացված և համաձայնեցվեն շահառուների հետ:³⁷ Դրանով իսկ. համայնքի բնակիչներին մասնակից դարձնելով տեղական ինքնակառավարմանը, առաջին հերթին, տեղական իշխանությունները հնարավորություն են ունենում ընդունելու ավելի կշռադատված որոշումներ՝ առավել հանգամանալից ուսումնասիրելով հանրության կողմից բարձրացված խնդիրները: Այս պարագայում, հնարավոր է լինում գեներացնել նոր մտքեր, գաղափարներ և այս կամ այն հարցի վերաբերյալ լուծման նորամուծական գաղափարներ իրագործել: Մասնակցային կառավարման գործընթացի օբյեկտները, զգալով, որ իրենց խոսքը լսելի է դառնում կառավարող օբյեկտների շրջանակում և «ներքնից» եկող առաջարկություններն ու առարկությունները որոշակի ազդեցություն են ունենում կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների վրա, սկսում

³⁵ Տե՛ս Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն., Ունակությունների հենքով համալսարանական կրթության ապագան, Այլընտրանք գիտական հանդես, #2, 2020 ապրիլ-մայիս, էջ 145-146

³⁶ Տե՛ս Կորպորատիվ կառավարման հիմնահարցերը, ՓՄՁ

ԶԱԿ<http://smednc.am/hy/inner/655>

³⁷ Տե՛ս Մասնակցային կառավարում, <http://boon.am/>

են գիտակցել սեփական անձի դերի կարևորությունը, ավելի եռանդով են սկսում իրենց մասնակցությունն ունենալ կառավարման գործընթացում ծագած խնդիրների լուծման գործում:³⁸

Հետևաբար, կառավարչական ավանդական մոտեցումների ներկայիս վերափոխումներում առաջին հերթին շեշտադրումներ են կատարվելու արդյունավետ կառավարման գծով հնարավորություններ ձևավորող ունակությունների վրա, որոնք բերում են առաջադիմական դինամիկ կառավարչական փոփոխությունների:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Կառավարչական ունակությունների ձևավորման տեսլականը ներկայումս էական փոփոխությունների է ենթարկվում: Կառավարման համակարգում գերիշխող վարչական մեթոդները աստիճանաբար իրենց տեղը զիջում են ինքնակազմակերպման հենքով կառավարման մեթոդներին, որով հնարավորություն է ստեղծվում որոշումների կայացման գործընթացը սկսել ոչ միայն «վերևից», այլև նախաձեռնել «ներքևից», երբ կառավարվող օբյեկտները իրենց ակտիվ մասնակցություն են դրսևորում կառավարման համակարգում: Ինքնակարգավորվող կառավարման ենթահամակարգերի ձևավորումը հնարավորություն է ստեղծում ստեղծարար և մրցակցային կառավարչական ունակությունների գործնական իրացման համար:

Հիմնաբառեր. կառավարչական ունակություններ, ստեղծարար կառավարչական հմտություններ, կառավարման միջավայրի կայունություն, կառավարչական որոշումներ

Օգտագործված գրականություն

1. Անարխիզմ, [//https://hy.wikipedia.org/wiki](https://hy.wikipedia.org/wiki)
2. Կորպորատիվ կառավարման հիմնահարցերը, ՓՄՁ
ԶԱԿ <http://smednc.am/hy/inner/655>
3. Մասնակցային կառավարում, <http://boon.am/>
4. Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, https://celog.am/UploadedFiles/TrainigMaterials/T07_CitizenParticipation.pdf
5. Ճուղուրյան Ա., Կառավարում, //Հյուսիսային համալսարան, 2021, 200 էջ
6. Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն., Ունակությունների հենքով համալսարանական կրթության ապագան, Այլընտրանք գիտական հանդես, #2, 2020 ապրիլ-մայիս, էջ 145-146

³⁸ Տե՛ս Քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, https://celog.am/UploadedFiles/TrainigMaterials/T07_CitizenParticipation.pdf

О ТРАНСФОРМАЦИИ УПРАВЛЕНЧЕСКИХ НАВЫКОВ

Армен Джугурян

Северный университет, доктор экономических наук, профессор

Видение развития управленческих навыков в настоящее время претерпевает значительные изменения. Доминирующие административные методы в системе управления постепенно уступают место самоорганизующимся методам, которые позволяют начинать процесс принятия управленческих решений не только «сверху», но и «снизу», когда управляющие субъекты активно участвуют в системе управленческого процесса. Развитие саморегулируемого менеджмента дает возможность развивать творческие и конкурентоспособные управленческие навыки.

В статье анализируются преимущества коллективного управления, а также способы проявления корпоративного управления. Особое внимание уделяется управленческим решениям, основанным на взаимопонимании, которые учитывают совокупные интересы управляемых объектов. Социально-экономическая жизнь в настоящее время меняется очень быстро. Если не так уж давно в основе управления лежал административный подход, преобладали административные решения, то сейчас объекты, которыми управляют, проявляют тенденцию в большей степени поведенческому саморегулированию.

Ключевые слов: управленческие умения, творческие управленческие навыки, устойчивость управленческой среды, управленческие решения

ABOUT TRANSFORMATION OF MANAGERIAL SKILLS

Armen Juguryan

Northern University, Doctor of Sciences in Economics, Professor

The vision for building managerial skills is currently undergoing significant change. The dominant administrative methods in the management system are gradually giving way to self-organizing management methods, which enable the decision-making process to start not only from the "top" but also from the "bottom", when the governing entities are actively involved in the management system. The development of self-regulatory management provides an opportunity to develop creative-competitive executive skills.

The article analyzes the advantages of part to part management, as well as ways of manifesting corporate governance. Particular attention is paid to managerial decisions, based on mutual understanding, which take into account the combined interests of the managed objects. Socio-economic life is currently changing very rapidly. If not so long ago the administrative approach was the basis

of management, administrative decisions prevailed, but now the objects that are controlled, tend to be more behavioral self-regulation.

Keywords: managerial abilities, creative management skills, sustainability of the management environment, managerial decisions

Ներկայացվել է՝ 24.08.2021 թ.

Ընդունվել է՝ 11.09.2021 թ.

ԱՂԱՆԱՅԻ 1909 ԹՎԱԿԱՆԻ ԵՂԵՌՆԸ (ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Աշոտ Ներսիսյան

ԵՊՀ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ashot-nersisyan@mail.ru

Աղանայի 1909 թ. եղեռնին բազմաթիվ անդրադարձներ են եղել: Չնայած դրան, այս իրադարձություններին անդրադառնալը կարևորում ենք երկու տեսանկյունից. Առաջին. Կիլիկիայի իրադարձությունները լուսաբանելը նպաստավոր է Սահմանադրությունից հետո իթթիհաթականների՝ հայ քաղաքական ուժերի նկատմամբ որդեգրած անկեղծության աստիճանը լուրջ հաշվեկշռի ենթարկելու տեսանկյունից: Երկրորդ. Աղանայի ջարդերը պետք է հայ քաղաքական և հոգևոր ուժերին ստիպեին ավելի զգուշավոր կեցվածք որդեգրել նրանց նկատմամբ:

Արդյոք ք կարելի է կիսել Հր. Միմոնյանի այն տեսակետը, որ ջարդերի երրորդ պատճառը թուրքական ազգայնամոլությունն էր: Հարկավ կարելի է, բայց այն վերապահությամբ, որ այդ օրերի համար դժվար է վերջնականապես պնդել, որ «իթթիհաթն իրեն ծառայեցրեց աբդուլհամիդյան ռեժիմի պաշտոնական գաղափարախոսությունը՝ համիսլամականությունը»¹:

Իթթիհաթականները, որոնք այդ օրերին ավել շատ ունեին սեփական իշխանությունն ամրապնդելու խնդիր, հազիվ թե մտածեին համիսլամականության գաղափարախոսություն որդեգրելու մասին, մանավանդ, որ պայքարում էին դրա գաղափարախոս Համիդի ռեժիմի վերջնական տապալման համար: Համենայն դեպս գոնե իրենց իշխանությունը կորցնելու վտանգի պայմաններում:

Չենք կարծում նաև, որ ջարդերի լուրջ պատճառ էր հայ գաղթական գյուղացիների վերադարձը Կիլիկիա, որոնք հավատ էին ընծայել Սահմանադրության կարգախոսներին: Այն քանակի հայեր չէին վերադարձել, որ կարողանային ազդել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի վրա: Մանավանդ, որ Հր. Միմոնյանն ինքն էլ է գրում, որ «Կ. Պոլսի երիտթուրքական կառավարությունը մուսուլման վերաբնակների տարհանման հարցը 1908 թ. վերջին ընդհանրապես հանել էր օրակարգից (Ըստ նրա, մինչև այդ այն մի քանի գյուղերից քրդերին տեղահանելով՝ նրանց բնակավայրերը տվել էր հայերին – Ա. Ն.)»²:

Բավական տրամաբանական ենք համարում Կիլիկիայի աղետի պատճառների Հր. Միմոնյանի կողմից երկու մատնանշում, որոնցից մեկը հայերի պարծենկոտությունն ու ցուցադրական արարքներն էին, իսկ մյուսը՝ ինքնապաշտպանության նկատմամբ ցուցաբերած անհոգությունը: Իս-

¹ Նույն տեղում, էջ 8:

² Նույն տեղում, էջ 8-9:

կապես սահմանադրությունից հետո Օսմանյան կայսրության շատ վայրերում հայ քաղաքական ղեկավարները, ընդ որում Հր. Սիմոնյանը մատնանաշում է դաշնակցականներին, բայց վերջիններիս չէին զիջում նաև հնչակյանները, պարծենում էին, որ իրենք են առաջինը դուրս եկել Համիդի վարչակարգի դեմ և առաջ բերել Սահմանադրությունը: Սա գրգռում էր մահմեդական տարրերին: Ինչպես իրավացիորեն նկատել է Լեոն՝ հայ քաղաքական ղեկավարները «իրենք ալ քշուեցան հոսանքն, իրենք ալ խելագարված՝ առաջ նետուեցան պարապ սնոտի ցոյցերու եւ կեցցեներու անձնատուր»³:

Եվ ընդհանուր ոգևորության մեջ անտեսվեց երկու կարևորագույն հանգամանք. առաջին՝ լրիվ երկրորդական պլան մղվեց հայության ինքնապաշտպանության խնդիրը, երկրորդ՝ մոռացվեց մի կարևորագույն հանգամանք, որ երիտթուրքերին հայերի հետ համագործակցել էր ստիպել ոչ թե բռնապետության տապալման, այլ Թուրքիան մասնատելուց փրկելու անհրաժեշտության գաղափարը: Այնպես, որ միանգամայն ճիշտ է Հր. Սիմոնյանը, երբ գրում է. «Դատապարտելի էր հայ զանգվածի ավանդական կրավորականությունը, նրա անփույթ վերաբերմունքն իր ամենակենսական խնդրի՝ ինքնապաշտպանության նկատմամբ»⁴:

Անկախ ջարդերի բոլոր դրդապատճառներից, դրանք կանխելու միակ հնարավոր քայլը հայոց ինքնապաշտպանության խնդրից չհրաժարվելն էր: Այս դեպքում ջարդերի մյուս կարևոր պատճառները, որոնք մատնանշում է Հր. Սիմոնյանը դարձյալ չէին կարող անտեսվել: Իսկ այդ պատճառներն էին՝ Կիլիկիայի թուրքական վարչախմբի գործունեությունը և հայերի տնտեսական առավելությունը, որը հաճելի չէր կարող լինել այդ վարչակարգին:

Կիլիկիահայերի ջարդերի գլխավոր պատճառներից էր արևմտահայ հասարակական-քաղաքական շրջանակների անվերապահ նվիրումը Սահմանադրության բերած կարգախոսներին, այն դեպքում, երբ ի սկզբանե պարզ էր երիտթուրքերի՝ այդ նույն գաղափարներին տրվելու կեղծ լինելը:

Այս տեսանկյունից խնդրին մոտենալու դեպքում անհնար է համաձայնվել դաշնակցական տեսաբան Մ. Վարանդյանի հետ, որը հպանցիկ անդրադառնալով Կիլիկիայի ջարդերին, մասնավորապես գրում է. «Կասկածը մտեր էր մեր շարքերուն մեջ իթթիհատի քաղաքականութեան հանդէպ, բայց այդ ահաւոր օրերուն, իսլամի փոթորկայոյց ծովին մէջ, ուր բոլոր մը հայութիւնը, ամէն կողմէ պաշարուած ու վտանգուած, կը տարուբերէր տաշեղի պէս, միակ խարիսխը դարձեալ նա էր – Իթթիհատը: Չէ՞ որ այդ կազմակերպութիւնն էւս արիւն թափեր էր ազատութեան համար և կ'ուզէր

³ Տե՛ս Լեո, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարախոսութիւնը, Հ. Բ. Փարիզ, 1935, էջ 60:

⁴ Նույն տեղում, էջ 10:

Թուրքիոյ խաղաղ բարգաւաճումը սահմանադրական կարգերու մէջ⁵
(Ընդգծումը մերն է – Ա. Ն.):

Մեր ընդգծած միտքը, որի համաձայն Իթթիհատը ցանկանում էր սահմանադրական կարգերով Թուրքիայի բարգաւաճումը, խիստ կասկածելի է: Դա ակամա հաստատում է նույն Մ. Վարանդյանը: Այսպէս, վերը վերջերած պարբերությունից քիչ առաջ նա հետևյալն է գրում. «Գինովցած իր առաջին յաղթանակով, կոթնած իր հավատարիմ բանակին վրայ, իթթիհատը հաստատել էր կուսակցական դիկտատորութիւն: Նա իւրացուցեր էր վատթարագոյն նացիոնալիզմի, ազգայնամոլութեան հաւատամքը և կը ձգտէր ձուլել բոլոր այլազան ցեղերը օսմանցիութեան մէջ, ստեղծել Օսմանեան կայսրութենէն ոչ միայն մէկ պետութիւն, այլ **մէկ ազգ** – օսմանեան ազգը:

...Միութիւն ըսելով, Իթթիհատ կը հասկնար պարզապէս **ձուլում**...»⁶:

Իսկ Կիլիկիայում ջարդերի կազմակերպիչների առումով հետևյալն է գրում. «Մինչ Պոլիսը ազատութեան խրախճանքներ կը կատարէր, անդին տեղի կ'ունենար Կիլիկիոյ կոտորածը, ամբողջ հայկական գավառ մը կը վերածուէր մոխրակոյտի ու սպանդանոցի... Համիդականներու գործն էր:

...Համիդականներու գործըն էր, բայց հետագային պարզուեցաւ, որ Ատանայի եղեռնին մէջ – ուր 30.000 հայ զոհեր եկան խտացնելու հիներու շարքը – բնաւ անմասն չէին եղած իթթիհատական իշխանութիւնները»⁷:

Այսպիսով, Մ. Վարանդյանն ինքն է վկայում, որ, ա) Իթթիհատականները մէկ գլխավոր նպատակ էին հետապնդում՝ ստեղծել մէկ՝ օսմանյան ազգ, բ) նրանք ևս անմասն չէին Ադանայի ջարդերից: Ուրեմն, այլևս ինչ տրամաբանությամբ պետք էր հիմնավորել նրանց հետ համագործակցության շարունակությունը: Գուցէ միայն այն, որ կփոխվեին: Բայց եթե նրանք հայության նկատմամբ ոճիրի էին գնում այն ժամանակ, երբ մեծ էր Դաշնակցության հեղինակությունը, միթե դրան չէին դիմի հետո: Կարծում ենք, որ պատասխանը պարզ է: **Եվ սա պետք է մղեր առաջին պլանում պահել ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրը:**

Վերջապէս նրանց արագ սթափության պետք է մղեր հայազգի իթթիհատական պատգամավոր Հակոբ Պապիկյանի ճակատագիրը, որը Ադանա մեկնած խառը քննիչ հանձնաժողովի անդամ էր և որին այնտեղից վերադառնալուց հետո մեռած գտան իր բնակարանում (հանձնաժողովը, որը բաղկացած էր չորս անդամից, Ադանայում գործել է 1909 թ. մայիսին): Իսկ պատճառը նրա կազմած տեղեկագիրն էր: Վերջինս 1919 թ. հրատարակվել է Կ. Պոլսում, 2009-ին, Հալեպում և ամբողջությամբ զետեղված է Հր. Միմոնյանի վերոհիշյալ հատորի «Հավելվածներ» բաժնում⁸, որից էլ կփորձենք

⁵ Տե՛ս Միքայէլ Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 434–435:

⁶ Նույն տեղում, էջ 432:

⁷ Նույն տեղում, էջ 433–434:

⁸ Տե՛ս Հրաչիկ Միմոնյան, նշվ. աշխ. գիրք 4, էջ 1093–1114:

օգտվել: Որ իսկապես Ադանայի ջարդը մինչ այդ նմանօրինակը չի ունեցել, հաստատվում են Հ. Պապիկյանի հետևյալ տողերով. «Այս նահանգին ջարդերը շատ ու շատ զլած անցած են այն բոլորը՝ ինչ որ համիտեան վարչությունը այս տեսակին մեջ կազմակերպած է եւ ինչ որ իր բնութեամբ պիտի մնայ յավիտենական ամօթ մը Օսմ. Պատմութեան:

Համիտեան ջարդերու մեծ մասը, այսպէս ըստւած, ունէին տեսակ մը կանոնաւոր կազմակերպութիւն, կը խնայուէր տղայոց, կիներուն, հիւանդներուն, եւ կողոպուտի, հրդեհումի եւ քանդումներու մասին տեսակ մը սեղմում կը դնէին: Ատանայի մէջ ողջ-ողջ այրած են հիւանդները եւ վիրաւորները: Գիւղերու եւ շրջակայի ագարակներուն, Միսիսի եւ Համիտիէի գազաններուն, ինչպէս նաեւ Հասան – Պէյլիի (Պախշէի գագա) մէջ իբրեւ հարստութիւն եւ կալուած այլեւս ոչինչ կը մնայ. կիներէն եւ հինգ-վեց տարեկան տղաքներէն շատեր վիրաւորուած են. Անոնք մինչեւ իսկ առարկայ եղած են ամենադժպիի վարմունքներու»⁹:

Այլ մանրամասներ ներկայացնելը զանց առնելով, նշենք միայն, որ Հ. Պապիկյանը միանգամայն օրյեկտիվ կերպով և տրամաբանական հարցադրումներով կարողանում է ապացուցել, որ Ադանայի ողբերգությունը հին և նոր ռեժիմի միաժամանակյա դավադրության արդյունք էր: Ջարդերի մեղքը հայերի վրա բարդելու իշխանությունների ձգտումներին, նա հետևյալ խիստ տրամաբանական հարցադրումով է հակադրվում. «...կարելի չէ եղած գտնել փաստ մը, որ կարենար ենթադրել տալ, թէ հայերը կը սնուցանէին հայրենասիրական զգացումներու հակառակ գաղափար մը, այսինքն անջատողականութիւն. բան մը որ, մանաւանդ հրապարակաւ գնուած զէնքեր՝ չէին կրնար վերագրուիլ յետին նպատակներու: Եթէ հայերը Օսմ. Հայրենիքին հանդէպ գէշ զգացումներ սնուցած ըլլային, անոնք, Պոլսոյ դէպքերու ընթացքին, չպիտի նուիրուէին այնքան կատարեալ անձնուրացութեամբ եւ վեհանձնութեամբ՝ սահմանադրեան պաշտպանութեան եւ կարգի պահպանութեան համար, հակառակ այն մոլեգին վիշտին, զոր Ատանայի դէպքերը արթնցուցած էին անոնց սրտին մէջ»¹⁰:

Այսպիսով, իսկապես հայերը չեն դրել անջատողականության հարց և նվիրված են եղել սահմանադրությանը, որը նշանակում է, որ չէին կարող իրենք լինել նախահարձակը, ինչպես վկայում էին թուրքական իշխանությունները: Այդ դեպքում ինչպես բացատրել այն հանգամանքը, որ Հ. Պապիկյանը Ադանայի ջարդերի մեջ մեղադրում է և իթթիհատականներին: **Պատճառը հետևյալն է՝ իթթիհատականները իշխանության գալուց հետո հակասահմանադրական դիրքորոշում որդեգրեցին՝ դեմ լինելով Օսմանյան կայսրության մեջ ազգային փոքրամասնությունների և թուրք տարրի հավասարությանը:** Ահա, թե ինչու էին նրանք հրահրել և կազմակերպել այդ ջարդերը: Սա է պատմական ճշմարտությունը:

⁹ Նույն տեղում, էջ 1094:

¹⁰ Նույն տեղում, էջ 1108:

Իսկ այդ մեղսակցության մասին Հ. Պապիկյանը բազում վկայություններ է բերում, որոնց ճշտությունը կարողանում է ապացուցել: Փաստերի անաչառ և անկողմնակալ վերլուծությունների հիման վրա նրա կատարած ընդհանրացումը հետևյալն է. «Վերջացնել է առաջ ստիպուած եմ ամենախոր ցաւով աւելցնելու, որ **Իթթիհատ եւ Թերաքքը** կուսակցութեան անդամները Ատանայի վայրագ եղերերգութեան կազմակերպման եւ գործարութեան մասնակցած են : Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերիկացի միսիոնարներէ եւ լատին քահանաներէ:

...Այն պարագային, որ կուսակցութեան մասն կազմող ոճրապարտ անհատներ չարտաքսուին իր ծոցէն եւ իրենց արժանի պատիժը չի կրեն, **Իթթիհատ եւ Թերաքքը**ի վրայ ծանրացող մեղքերը անհերքելի պիտի մնային:

Ներկա ժամուս, ուր կառավարութիւնը, եթէ կարելի է այսպէս ըսել, բոլորովին մեր կուսակցութեան ձեռքը կը գտնուի, կրնանք գոհերուն անմիջական օգնութեան մը հասցնել, առանց բացառութեան յանցաւորները պատժել Օրէնքին բոլոր խստութիւնովը եւ, նման աղէտներու կրկնութիւնը արգիլող անվրէպ միջոցներ ձեռք առնել, ու այսպէս Կուսակցութեան եւ Կառավարութեան վարկը վերահաստատել եւ հայրենիքը փրկել»¹¹ (ընդգծումը մերն է – Ա.Ն.):

Մեր ընդգծած վերջին պարբերությունից այն տպավորությունն էս ստանում, որ Հ. Պապիկյանը միամիտ քաղաքական գործիչ էր: Բայց ավելի շատ նրան կարելի է կոչել ազնիվ, քան թե միամիտ, որովհետև լինելով իթթիհատական կուսակցության հայազգի անդամ, նա փորձել է փրկել իր կուսակցության վարկը: Նրա միամտությունը կայանում էր նրանում, որ թերևս ոչ բոլոր իթթիհատականներին էր համարում Ադանայի ողբերգությունը կոցկելու կողմնակից և հավատում էր իր կուսակցության անկեղծությանը՝ սահմանադրական Թուրքիա ձևավորելու իր ջանքերի մեջ: Մի անկեղծություն, որն արժեցավ նրա կյանքը:

Այսօրվա հեռավորությունից Հ. Պապիկյանին պետք է գնահատել ազնիվ և անաչառ իթթիհատական գործիչ, որի նախընտրած ուղու ընդհանրության հասնելու դեպքում, կարծում ենք ավելի շահեկան դրության մեջ կհայտնվեր Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում:

Իսկ նրա տեղեկագրի մատուցած փաստերը գալիս են ապացուցելու, որ

Առաջին. Ադանայի եղեռնի մեղսակիցները միաժամանակ և հին և նոր ռեժիմի կողմնակիցներն էին, որոնք գործնականում առաջնորդվում էին նույն նպատակներով:

Երկրորդ. Այդ ողբերգական իրադարձությունը արևմտահայ հասարակական-քաղաքական ուժերին պետք է մղելին առավել զգոնության, որը

¹¹ Նույն տեղում, էջ 1113–1114:

տվյալ իրավիճակում նշանակում էր ինքնապաշտպանական խնդիրների առաջնահերթություն:

Երրորդ. Ադանայի և առհասարակ Կիլիկիայի ջարդերի գլխավոր պատճառը քաղաքական էր, որի հիմքում ընկած էր «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսը:

Այս ամենում առավել քան համոզվելու համար ավելորդ չենք համարում անդրադառնալ այս մեծ ողբերգությանը տված Ջեմալ փաշայի գնահատականներին: Ջեմալ փաշան 1909 թ. կեսերին նշանակվում է Ադանայի կուսակալ և հետևաբար պնդում է, որ իրենից զատ «ոչ ոք այնքան խորապես ուսումնասիրած է հոգեբանական պատճառները այդ ջարդին, որ ամենացալալի դեպքերէ մէկն է Օսմանեան Սահմանադրութեան պատմութեան»¹²:

Իսկ այդ հոգեբանական պատճառներից կարևորագույնն, ըստ նրա, այն էր, որ «Կառուարութեանց առաջին պարտականութիւնն է ժողովրդին հասկցնել թէ ազատութիւնն անիշխանութիւն չի նշանակեր: Սակայն, դժբախտաբար Թուրքիոյ մէջ այդ տեսակ կառավարութիւն մը գոյութիւն չունէր 1908 տարւոյ վերջին երեք ամիսներու եւ 1909 առաջին մէկ քանի ամիսներու ընթացքին»¹³:

Կոնկրետ Ադանայում, համաձայն նրա արհեստածին վարկածի, անիշխանության հետևանքով իթթիհատական են դառնում պատահական անձնավորություններ, որոնք պաշտոնավարել էին նախկին ռեժիմի ընթացքում ևս, որոնք հակադրվում են տեղի հայկական հնչակյան և դաշնակցական գործիչներին: Ամեն մի կողմը ձգտում է առավել ուժեղ կազմակերպություններ ստեղծել: Փաստորեն Ջեմալը խնդիրն այնպես է փորձում մատուցել, որ Ադանայի իթթիհատականները տարբերվում էին Սահմանադրություն բերած իթթիհատականներից կամ որպես այդպիսին կեղծ էին, որի պատճառով էլ չեն կարողանում ստեղծված լարված իրավիճակը կայունացնել: Եվ ամենահետաքրքիրն այն է, որ այդ լարված իրավիճակի ստեղծման մեջ նա մեղադրում է հիմնականում հայերին: Ահա, թե ինչ է նա գրում. «1909 տարւոյ սկիզբը Ատանայի մէջ սկսան զանազան զրոյցներ շրջան ընել: Հայերը ըմբոստանալով թուրքերը պիտի բնաջնջէին եւ այդ առթիւ Եւրոպական նաւատորմը գալով պիտի գրաւեր ամբողջ նահանգները ու յետոյ պիտի կազմուէր Հայաստանը»¹⁴ (ընդգծումը մերն է – Ա.Ն.): Եվ իբրև թե թուրքերը հավատում էին այդ զրոյցներին:

Իրականում Ջեմալ փաշան հին հանկերգն է կրկնում, որով դեռևս Համիդի ժամանակներից մեղադրում էին հայերին և որի համաձայն, վերջիններս սեպարատիստներ էին և ցանկանում էին Թուրքիան մասնատել՝ Եվրոպական տերությունների օգնությամբ: Անժխտելի է, որ հայ քաղաքա-

¹² Տե՛ս **Պեհճեթ Ճեմալ**, Հայկական հարցը, Ճեմալ փաշայի յիշատակները, Թարգմ. Վահրամ Բաբանեան, ՀԱԱ, ֆ. 413, ց. 1, գ. 869, թ. 9:

¹³ Նույն տեղում, թ. 12:

¹⁴ Նույն տեղում:

կան կուսակցությունները մինչև 1908 թ. Սահմանադրությունն իրենց գործողություններով չեն անտեսել մեծ տերությունների միջամտության հույսը, բայց այդ նույնը պնդել Ադանայի եղեռնագործության համար չհիմնավորվող սուտ է, քանի որ հայ տարրը մինչև 1912 թ. ամենահավատարիմն էր Սահմանադրությանը: Սա անհերքելի է և ակնհայտորեն պարզ է Ջեմալի նպատակը՝ խեղաթյուրել պատմական իրադարձությունները: Եվ այս խեղաթյուրումով նա մեկ անգամ ևս ապացուցում է, որ իսկապես իթթիհատականները անմասն չէին Ադանայի ողբերգությունից:

Ջեմալը հատկապես մեղադրանքներ է տեղում հնչակյան հորինածին գործիչ ուն «մոնսենեոր Մուշեղի» հասցեին, որը իբրև թե ջարդերի հրահրողն էր: Ջեմալի վերլուծականներում հիմնականում այս անձնավորությունն է, որն իբրև Հայաստանի անկախության հասնելու իր ցանկություններով նպաստել է, որ թուրքերն Ադանայում կոտորեն հայերին: Այսպես, նա գրում է. «Եկաւ 1909 տարւոյ Ապրիլ ամիսը: Երկու կողմերու յարաբերութիւնները սաստիկ ձգուած էին: Ժամէ Ժամ կը սպասուէր ընդհարումներու կողմերու միջեւ:

Ի վերջոյ, ապրիլի 14 ուն մոնսենեոր Մուշեղ տուաւ ազդանշանը եւ հայերը նախադարձակ եղան եւ սկսաւ «Ատանայի դէպքը»¹⁵:

«Ապացուցելով», որ հայերն էին մեղավորը և նախահարձակ կողմը, Ջեմալն այնուհետև տեղի կառավարությանն էլ է մեղադրում ջարդերի համար, բայց ոչ դրանք հրահրելու կամ կազմակերպելու, այլ նախահարձակ եղած հայերի քայլերը չկանխելու համար: Կառավարությունը մեղավոր էր, «ճիշտը ժամանակին չկրցաւ կռահել այն բոլոր չարիքները, զորս այդ մարդը (Մուշեղը – Ա. Ն.) կարող էր ընել եւ ձեռք չառաւ անհրաժեշտ միջոցները»¹⁶:

Իսկ իրականում, ով էր Մուշեղը: Նա Ադանայի հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսն էր, որն առհասարակ ոչ մի դեր չի ունեցել ջարդերի կազմակերպման հարցում և որին Ադանայի իրադարձություններից անմիջապես հետո թուրքերը սկսում են մեղադրել: Ընդհակառակը՝ նա փորձել է կանխել աղետը, բայց ջարդերի իսկական կազմակերպիչները «նախ՝ հասարակաց ուշադրութիւնը Կիլիկիոյ աղէտէն դարձնելու համար ճղճիմ խնդիրներ կ'նետեն հրապարակ, **կրէկօրեան** խնդիր մը կ'հանեն և նոյն իսկ կ'ըսկսին հայոց տրուած օսմանիյէներուն վրայ **հայ** անուան տէղ **կրէկօրեան** նշանակել և կ'հասնին իրենց նպատակին, թէն խիստ անցաւոր կերպով, որով ազգ. Բշխանութիւնք և օրաթերթեր պահ մը կ'սկսին այդ անհեթեթ խնդրով զբաղիլ, մինչեւ որ կ'մարի և բարձրէն հրաման կ'տրուի դարձեալ հայ անունը գործածել, կառավարութիւնը չյաջողիր նոր ազդեցութիւն մը ստեղծել, երկրորդ՝ այս կերպով չյաջողելով այժմ կ'սկսին հայերն ամբաստանել իբրեւ պատճառ Կիլիկիոյ աղէտին և նոյն իսկ առաջ կ'երթան Ատանայի դժբախտ

¹⁵ Նույն տեղում, թ. 12:

¹⁶ Նույն տեղում, թ. 13:

Առաջնորդն՝ Մուշեղ եպիսկոպոսն ամբաստանելու և զայն իբրեւ յանցաւոր նկատելով եզիպտական կառավարութենէն պահանջելու...»¹⁷:

Իրականում Մուշեղ եպիսկոպոսը ի գործու չլինելով կանխելու աղետը, անցնում է նավահանգստային Մերսին քաղաքը: Նրան թուրքական իշխանությունները ջարդերից հետո պահանջում են եզիպտական իշխանություններից, այն դեպքում, երբ մինչև այդ Մերսինից նրա դիմումները՝ «ցամաք ելնելու՝ կ'արգիլեն և սպառնալիքներու տակ կ'ստիպեն զայն անցնելու Եզիպտոս: Եթէ յանցաւոր էր՝ ինչու՝ Թուրքիա անոր մուտքը արգիլեցին ուրեմն»¹⁸:

Ինչպէս համոզվում ենք, այս անձը ամեննին կապ չունէր ջարդերի հրահրման հետ: Բացի այդ, հայերն ինչու պետք է ջարդեր հրահրեին, երբ Ադանայի նահանգում հիմնականում իրենց ձեռքում էր տնտեսությունը, իսկ Սահմանադրությունն էլ բերելու էր քաղաքական նոր հնարավորություններ:

Եվ վերջապէս, Ջեմալը այնքան «տրամաբանված» է բացատրում հայերի անհամեմատ շատ զոհեր տալու հանգամանքը, որ ասելու ոչինչ չի մնում. «Ատանայի ջարդին 17 հազար հայեր ու 1850 իսլամներ մեռան: Այս թիւերը ցույց կուտան, թէ Ատանայի մէջ եթէ հայերը թուով անելի ըլլային թուրքերէն, այս գործը հակառակ արդիւնքը կուտար եւ հայերը թուրքերը կը ջարդէին»¹⁹:

Ուրեմն, եթէ հայերը թվաքանակով մահմեդականների համեմատ ավելի քիչ էին, ապա տրամաբանական է, որ նրանք ավելի շատ զոհեր պետք է տային: Առհասարակ այն տպավորությունն էս ստանում, որ Ջեմալն անընդհատ ցանկանում է մեղադրել հայերին, որոնցում հաճախ ինքնադրսևորվում է խակ տրամաբանությամբ: Թուրքերի շատ լինելու հանգամանքն ըստ նրա լրիվ արդարացնում էր 17 հազ. հայերի կոտորածը: Ավելորդ չենք համարում նշել, որ 1909 թ. սկզբին Ադանայի նահանգի (գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու հարավային մասում, Միջերկրական ծովի ափին, կազմելով մոտավորապէս 39.9000 քառ կմ տարածք) 500.000 բնակչության կեսը քրիստոնյա էր, իսկ մյուս կեսը ներառում էր տարբեր ազգերի ներկայացուցիչ մահմեդականների²⁰: Սա նշանակում է, որ թուրքերը հայերի հանդեպ մեծամասնություն չէին էլ կազմում:

Ընհանրացնելով նշենք, որ՝ ա) Ջեմալ փաշայի այս հուշերը ստահող են և այնտեղ արտահայտված նրա դիրքորոշումներն երկդիմի, բ) նա և իթթիհատական մյուս պարագլուխներն ուղղակիորեն և անուղղակիորեն խառն են եղել Կիլիկիայի կոտորածներին, որի համար առիթ է հանդիսացել Համիդի այսպէս կոչված հետադիմական շարժումը, գ) հին ռեժիմի

¹⁷ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1909, թիւ 1–10, 12–19, 21–41, էջ 602:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 413, ց. 1, գ. 869, թ. 13:

²⁰ Տե՛ս Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 14:

կողմնակիցները գնացել են ջարդերին՝ դրսևորելով իրենց վրեժխնդրությունը հայության նկատմամբ, որին համարել են թուրքիան մասնատել և Համիդին գահագուրկ տեսնել փորձող գլխավոր տարրը, իսկ իրթիհաթականները երկդիմի ընթացք որդեգրելով՝ չեզոքացնել այդ տարրի քաղաքական ազդեցությունը:

Ավելացնենք, որ Ադանայի նահանգի հայության թիվը մինչև կոտորածները կազմել է մոտավորապես 150–200.000., իսկ բնակչության ընդհանուր թիվը՝ մոտավորապես 500.000²¹:

Ադանայի իրադարձությունների մանրամասները մեր նպատակի մեջ չի մտնում: **Դրանց մեր այս անդրադարձը կարևորում ենք այնքանով, թե որքանով ազդեցին արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքի վրա և հայ քաղաքական միտքը, որը մեծամասամբ հավատով էր լցված դեպի իրթիհաթականները և Սահմանադրությունը, որքանով այդ դեպքից հետո փոխեց իր հավատը դրանց նկատմամբ: Ցավոք, այն դեպքում, երբ բոլորի համար արդեն տարակույս չկար, որ իրթիհաթականները խառն էին Ադանայի հայության դավադրությանը, արևմտահայ հասարակական - քաղաքական ուժերը շարունակեցին իրենց համագործակցությունը նոր վարչակարգի հետ՝ ի վնաս արևմտահայության ինքնապաշտպանության առաջնահերթության գիտակցման:**

Սա վերաբերվում է նախ և առաջ իրթիհաթականների հետ ամենասերտ հարաբերություններ ունեցած և այս կուսակցության պարագլուխների հետ Համիդի վարչակարգի փոփոխման տեսական հիմքերը մշակած Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը: Հայտնի ճշմարտություն է, որ Կիլիկիայի ջարդերը տեղի ունեցան այն օրերին, երբ Համիդյան ռեժիմի կողմնակիցները փորձում էին գնալ դրա վերականգնմանը: Բնական է, որ այս օրերին Դաշնակցությունը պետք է կանգներ իրթիհաթականների կողքին: Այդպես էլ եղավ, բայց Կիլիկիայի աղետի պատասխանատուների որոնման և պատժելու հարցը այս կուսակցության ղեկավարների համար աստիճանաբար մղվեց երկրորդական պլան: Մի կողմից դա բնական էր, որովհետև եթե ինչ – ինչ կասկածներ էլ լինեին այդ մեծ ողբերգության մեջ նրանց մեղսակցության հետ կապված, միևնույն է՝ նոր կարգերն ավելի հրապուրիչ հեռանկարներ էին բերում այս կուսակցության և նաև հայ մյուս հասարակական – քաղաքական շրջանակների համար: Որպեսզի համոզվենք, թե ինչ տրամաբանությամբ են զարգանում իրադարձությունները՝ Կիլիկիայի ջարդերի պատասխանատուների որոնման և պատժելու առումով, դիմենք փաստերի:

Այսպես, Կ. Պոլսի ՀՅԴ Պատասխանատու մարմնի կողմից «4/17 Ապրիլ, 1909, Կ. Պոլիս» թվակիր գրության մեջ, հասցեագրված Ժնև՝ Արևմտյան բյուրոյին, նախ տեղեկություն է հաղորդվում Կ. Պոլսում տեղի ունեցող ի-

²¹ **Համբարձում Առաքելյան**, Զեյթուն, տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսություն, Թիֆլիս, 1896, էջ 48–49:

րադարձությունների մասին: «Ամբողջ երկու օր՝, - կարդում ենք այնտեղ, - Երեքշաբթի եւ Չորեքշաբթի օրերը, քաղաքը առաւ կատարեալ անիշխանութեան վիճակ: Անսպասելի կերպով գորքը Երեքշաբթի առաւօտուն շատ կանուխ պաշարեց խորհրդարանը եւ Այս Սոֆիայի հրապարակը: Զօրանոցներու մէջ կապած էին նախապէս իրենց սպաները: Ինչպէս կերելի, շատ գաղտնի կազմակերպութիւն մը ղեկավարութեամբ կրօնավորներու եւ այլ անձնավորութեանց՝ գործած էր անշշուկ:

Առաջին օրուան ընթացքին՝ ապստամբական շարժումը երթալով ուժեղացավ. հավատարիմ կարծուած Սելանիկի զօրքերուն մեծամասնութիւնը միացաւ ապստամբներուն. Մեկ կամ երկու վաշտ հազիւ կարգապահ մնաց»:²²

Ինչպէս համոզվում ենք, նույնիսկ Սելանիկի գորքը, որը կարևորագույն մասնակցություն էր ունեցեր հեղաշրջման կազմակերպման գործում, արդեն տատանվում էր, որը նշանակում է, որ հետադիմականների ազդեցությունը բավական լայն շրջանակներ էր ընդգրկում:

Այնուհետև գրությունից տեղեկանում ենք, որ ապստամբները պահանջում են Հիլմի փաշայի դահլիճի անկումը և Սահմանադրության իրականացում՝ համաձայն կրոնական Շերիի օրինագրքի: Հետաքրքիր են հետևյալ տողերը՝ «Բայց խոր ատելություն մը կը շեշտուէր հանդէպ Միութիւն եւ Յառաջդիմութիւն կոմիտէին եւ ետքէն յայտնի եղաւ որ մտադրութիւն կար սպաննելու Ահմեդ Ռիզան եւ Իթթիհատի մէկ քանի կարելոր անդամները: Այս քրիթիկական բռնակէին՝ երեսփոխաններէն մաս մը հաւաքուած էր խորհրդարանը, ուր սակայն զինուորներ կը մտնէին սպառնալից երեւոյթով: Ամբոխը երթալով օրուան ընթացքին մէջ հետզհետէ առաւ սպառնալից կերպարանք սպաննուեցաւ նույնիսկ խորհրդարանի դռան առջեւ երեսփոխան մը, ինչիսէս նաեւ մեկ – երկու նախարար»²³:

Այս փաստերը, որոնք նոր են դրվում գիտական շրջանառության մեջ, վկայում են, որ իսկապես համիդյան վարչակարգի վերականգնումը մազից էր կախված:

Այդ հաստատվում է նաև նրանով, որ Հիլմի փաշայի դահլիճը հրաժարական է տալիս, զինվորները վերադառնում են իրենց զորանոցները և ի նշան հաղթանակի, անընդհատ կրակում են օդի մեջ: Ամբողջ քաղաքը հայտնվում է խուճապի մեջ: Հաջորդ օրվա առավոտյան գորքերը դարձյալ հավաքվում են նույն հրապարակը, բայց շուտով ցրվում: Այդ օրն անիշխանությունը շարունակվում է մինչև երեկո: Պակաս հետաքրքիր չեն տեղեկագրի հետևյալ տողերը. «Այսօր արդեն պարզուրած է, որ պալատը մատ ունի այս բողոքին մէջ եւ Սահմանադրութիւնը լուրջ վտանգի մէջ է: Իթթիհատի բոլոր կարելոր անդամները պահուած կամ հեռացած են քաղքէն: Զինո-

²² Տե՛ս Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. Զ. հատոր, Բէյրութ, 2010, էջ 269:

²³ Նույն տեղում, էջ 270:

ւորները զօրանոցներէն դուրս չեն գար, բայց անիշխանութեան մէջ են: Քաղաքին մէկ այլ տեղ սպանություններ կը կը պատահին: Պէտք է ըսել որ մինչեւ հիմա ժողովուրդին ուղղուած ո՛չ մէկ առանձին թշմանմունքին չնշմարուեցաւ. յատկապէս քրիստոնեաներու նկատմամբ հոգածու զգուշութիւն մը եւ բարեկամական տրամադրութիւն զգալի էր զինուորներուն մէջ: Բոլոր նշանները ցույց կու տան որ դէպքերը վայրկեանէ վայրկեան գահավէժ ընթացքով կը յառաջանան եւ կարող են սպառնալից դառնալ նաեւ մեզի նկատմամբ»²⁴:

Ինչո՞վ կարելի է բացատրել քրիստոնյաների նկատմամբ բարեկամական տրամադրության առկայությունը զինվորների մէջ: Կարծում ենք, այն ցանկությամբ, որ ցույց տան, որ սահմանադրականները վտանգավոր են նաև նրանց համար:

Այնուհետև գրությունից տեղեկանում ենք, որ այն մտահոգությամբ, որ դէպքերը կարող են սպառնալից ընթացք ունենալ նաև Դաշնակցության համար, վերջինիս նախաձեռնությամբ ապրիլի 16 –ին և 17 – ին (նոր տոմարով) տեղի են ունենում Ահրարի, Իթթիհատի, թուրքական այլ կազմակերպությունների, լրագրողների համատեղ ժողովներ, որպէսզի համագործակցություն առաջ բերեն Սահմանադրության պաշտպանության համար: ՀՅԴ ջանքերը հաջողությամբ են ավարտվում: Բոլոր կուսակցություններից և խմբավորումներից կազմվում է խառը կոմիտե՝ «Խորհրդակցաբար եւ գործակցաբար վարելու քաղաքական գլխաւոր խնդիրները, դադրեցնել կուսակցական պայքարը եւ բոլոր ուժերը լարել՝ ընդդէմ ռեաքսիոնի»²⁵:

Կարելի է այն եզրակացությունը հիմնավորել, որ թուրքական կազմակերպությունները, այդ թվում և իթթիհաթականները, երբ իրենց իշխանության հասնելու ձգտումներին վտանգ էր սպառնում, համագործակցում էին հայ քաղաքական կազմակերպությունների հետ, իսկ երբ այդ վտանգը չէզոքանում էր, հայության և այդ կուսակցությունների համաօսմանյան զարգացմանը միտված ծրագրերի նկատմամբ որդեգրում էին ժխտողական կամ խուսանավողական կեցվածք:

Սույն գրությունը կարևոր տեղեկություն է տալիս նաև այն մասին, թե ինչ են ծրագրել իթթիհաթական զինվորականները՝ հակասահմանդարական ուժերը չեզոքացնելու ուղղությամբ: Այդ մասին կարդում ենք. «Մյուս կողմէն արդէն վճռականպէս ստոյգ է, որ Էնվեր եւ Նիսալի՝ գլուխն անցած 5 – 10.000 զորաբանակի մը կու գան դէպի Պոլիս, պաշտպանելու Սահմանադրությունը: Այս գիշեր կը հասնին հոս»²⁶:

Թե ի՞նչ է տեղի ունենում այնուհետև՝ ակնհայտ է: Ի վերջո, հակասահմանդարական ուժերը տապալվեցին: Իսկ ինչպիսի՞ ավարտ ունեցան

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

հետապնդումները Ադանայի իրադարձությունների հետ կապված ճշմարտությունները բացահայտելու տեսանկյունից:

Նույն գրության մեջ այդ մասին հետևյալն ենք կարդում. «Ատանային եկած լուրերը քրիթիկական են. ջարդը տեղի ունեցած է, բայց չենք գիտենք ինչ համեմատություններով. Այս օրուան հեռագիրները կը հաղորդեն այսպես. «ջարդ, բոցեր, թալան»: Միւս գավառներէն մեր ստացած հեռագիրները ջարդի երկիւղ չեն յայտնէր, բայց, ինչպէս կ'երևի իմացած են արդէն Պոլսոյ անցուղարձերը եւ վրդովման մեփ են»²⁷:

Բավական կարևոր եզրակացությունների տեղիք են տալիս գրության վերջին տեղերը «Մենք կը մնանք փասիվ բայց հաշտարարի դերին մէջ՝ կուսակցութեանց վերաբերմամբ, այս ճգնաժամի միջոցին արտահայտելով մեր համակրութիւնը Իթթիհատի, իբրեւ սահմանադրութեան կողմնակից»²⁸:

Եզրակացությունը մեկն է՝ Դաշնակցությունը մնալու էր իթթիհատի համակիրը՝ որպես սահմանադրության կողմնակցի, առանց լուրջ հաշվեկշռի ենթարկելու այն հանգամանքը, թե այս սահմանադրական կեցվածքը այդ կազմակերպությունը որդեգրել էր Թուրքիան գահավիժումից փրկելու, թե իսկապես սահմանադրական կամ համեմատաբար ժողովրդական Թուրքիա ստեղծելու համար: Շատ ժամանակ չպահանջվեց՝ համոզվելու համար, որ նա առաջնորդվում էր առաջին պատճառով:

Իսկ ինչ վերաբերվում է Ադանայի դեպքերին, ապա, ինչպես համոզվում ենք, Կ. Պոլսում այնքան էլ պարզ չէր, թե ինչ էր այնտեղ կատարվել: Ծանոթանալով հետագա փաստերին, մենք համոզվում ենք, որ աստիճանաբար հետին պլան են մղվում Ադանայի իրադարձությունների բացահայտմանն ուղղված կուսակցության ջանքերը: Եթե սկզբնական շրջանում դա կարելի է բացատրել նաև նրանով, որ ամբողջ ուշադրությունը կենտրոնացված էր հետադիմական ուժերի չեզոքացման ուղղությամբ, ապա՝ անտրամաբանական է այն կեցվածքը, որը հետագայում որդեգրեցին հայ քաղաքական և մասնավորապես խորհրդարանական ուժերը՝ այդ իրադարձությունների խորքային պատճառների լուսաբանության տեսանկյունից: Որ իսկապես այսպես էր, երևում է ՀՅԴ Իզմիրի կոմիտեի ՀՅԴ Արևմտյան բյուրոյին 7/20 ապրիլին/1909թ/ ուղղված գրությունից, ուր կարդում ենք.

«Անշուշտ մինչև հիմա տեղեկացած ըլլալու էք Ռումելիի բանակը՝ որում մէջ կը գտնուին պուլկար, յոյն, հրեայ եւ մասամբ հայ կամավորներ, քայլ առ քայլ կը շրջապատէ Պոլիսը կամ ավելի ճիշդ՝ Ելտըզը: Երկրի բազմաթիւ վայրերէն միջազգային եղբայրութեան ու հաւասարութեան սկզբունքով կամաւորներ կը զինուորագործին քալելու համար Պոլսոյ վրայ եւ մի անգամ ընդ միշտ հիմնայատակ կործանելու ելտըզեան բռնակալութիւնը:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

Կարնոյ մեր ընկերները արդեն կ' իմացնեն թե թուրք կամաւորներու հետ ճամբայ ելած են:

Մենք եվս հոս միջոցներ ձեռք առինք, որպէսզի Ռոտոսթոյի, Իզմիրի եւ Պշուսայի շրջաններէն հայ կամաւորներ շուտով կազմակերպուին եւ միանան ազտական բանակին հետ:

Նոյն առաջարկը կ'ընենք եւ ձեզի: Չէ՞ք կրնարհայ – թուրք – յոյն կամաւորներու լեզուն մը հանել Իզմիրէն, վարձելով յատուկ նավ մը եւ իջնելով Տէտէադա՝ միանալու արշաւող բանակին: Եւ եթէ հնարաւոր չէ միջազգային լեզունի մը կազմութիւնը, հայերը առանձնապէս չէ՞ն կրնար ձեռնարկել նոյն գործին, բան մը՝ որ անգամ մը եւս բարոյական մեծ կարելութիւն պիտի ունենար հայ ժողովրդին համար»²⁹:

Մի բան ակնհայտ է, որ հայերն ամենուրեք ցանկանում էին չեզոքացնել Համիդի վերականգնման վտանգը, որը տվյալ իրավիճակում արգելք էր հանդիսանում այլ ուղղություններում եւս զգոն լինելու, ինքնապաշտպանական միջոցառումներն իրականացնելու ոչ թե հոգուտ ռեժիմի վերջնական տապալման, այլ սեփական անվտանգությունը պաշտպանելու համար: Չէ՞ որ, ի վերջո, իթթիհաթականները ցանկացան ամեն կերպ խույս տալ հայերի հոգուտ սահմանադրության վերականգնմանը իթթիհատականների հետ միավորվելու ջանքերից, որը նշանակում է, որ վերջիններս խուսափել են այդ ուղղությամբ մասնավորապէս Դաշնակցություն կուսակցությանը հնարավորություն ընձեռելուց: Եվ Ելտըզի գրավումն իրականացվեց բացառապէս Էնվերի եւ Նիզադի գլխավորած ուժերի կողմից: Այս ամենի գիտակցումը, ցավոք, շատ ուշ տեղի ունեցավ, որի շուտ լինելու դեպքում առվել առաջնային կարող էր դառնալ հայերի ինքնապաշտպանական խնդիրների կազմակերպումը:

Կ. Պոլսի Պատասխանատու մարմնի 1909թ. 16/29 ապրիլին ուղված մեկ այլ գրության մեջ Ադանայի եւ Կիլիկիայի ջարդերի մասին հետևյալն ենք կարդում. «Ատանայի եւ Կիլիկիոյ ջարդերուն նկատմամբ մինչեւ այսօր ալ մանրամասնութիւնները կուշանան/ այդ օրն արդեն հետադիմական շարժումը ճնշված էր – Ա.Ն./ հասնիլ, անշուշտ մէկ կողմէն ստեղծուած ահռելի կացութեան եւ միւս կողմէն՝ փոստի ու հեռագրի յատուկ կամայական կարգադրութեանց պատճառով: Այսօր շատ ստոյգ աղբիւրէ կրցանք իմանալ թէ կոտորածը կարծրվածէն աւելի ահաւոր հանգամանք ունի. Ոմանք գոհերու թիւը կը հասցնեն մինչեւ 20.000 – ի. փոքրամասնութիւն կազմող վայրերու մէջ հայերը ամբողջովին ոչնչացած են: Սկիզբէն Ատանայի մէջ հայերը ցոյց տուած են երկու օրի չափ մեծ ընդդիմութիւն. Սակայն ետքէն միջամտած է կանոնաւոր զորքն ու ռետիֆը (պահեստի զինվոր – Ա.Ն.) եւ գործած է, ինչպէս կը վկայէ ականատես ֆրանսացի երկրաչափ մը, անլուր գազանութիւն: Ատանայի վալին կը յայտարարէ եղեր որ իրենք ջարդը կազմակերպած են եղեր իթթիհատի հրահանգով: Թէ ո՞րքան հիմք ունի այս յայտարար-

²⁹ Նոյն տեղում, էջ 271:

րութիւնը, քննութիւնները ցոյց պիտի տան վաղը, Բայց սա ստոյգ է որ ջարդը կազմակերպուած է սիստեմաթիք կերպով: Կը մտածենք յատուկ մարմին մը ուղարկել Ատանա եւ ջարդի այլ վայրեր՝ կազմուած վիրաբոյժներէ, բժիշկներէ եւ այլն: Երեսփոխան ընկերները հարցը պիտի դնեն Համիտի դրամներէն օգնութեան հասնիլ արկածեալներուն եւ յատուկ զինուորական ատեան մը գրկել նաեւ Պոլիսէն, յանցաւորները ենթարկելու խիստ պատիժի»³⁰:

Այստեղ հետաքրիր է այն, որ Ադանայի վալին հայտարարել է, որ ջարդի հրահանգը ստացել են իթթիհատից: Թե որքանով է այս կազմակերպությունը խառը եղել այս դավադրությանը, վերևում համազվեցինք: Բայց վալու կողմից ամբողջ մեղքն իթթիհատի վրա գցելը չի հիմնավորվում: Ակնհայտ է, որ նա այդպէս պետք է արտահայտվեր, որովհետև քաջ գիտեր, որ հեռացվելու է: Իսկ ինչ վերաբերվում է հայերի այն ցանկություններին, որ այնտեղ անհրաժեշտ է հատուկ հանձնաժողով կազմել և ճշտելով մեղավորներին պատժել, ապա դա կարելի է ուշացած ձեռնարկ համարել: Պնդումը մեղսակիցներին գտնելու և պատժելու ուղղությամբ դատապարտված էր ձախողման, մանավանդ, որ դրանով շահագրգռված չէին իթթիհատականները: Իսկ Դաշնակցության կողմից նրան հակադրվելը ձեռնտու չէր համարվում:

Դրանում ավելի համոզվելու համար, դիմենք այլ փաստերի ևս: Այսպէս, ՀՅԴ Կ. Պոլսի Պատասխանատու մարմնին ուղղված Արևմտյան Բյուրոյի 1909թ. մայիսի 17 – ի նամակում կարդում ենք. «Կոտորածի ծավալի մասին այսօր ձեզանից ստացած հեռագիրը բաւական լաւատես է. – դժբախտաբար քիչ հաւատ ներշնչող: Պետք է աշխատիլ ըստ կարելւոյն ճշդիւ ստուգելու եւրոպական մամուլին տեղեկութիւնները պէտք է տրուին նաեւ մեր սեփական աղբիւրներից, որովհետեւ ամէն տեսակ ծախու, ցածհոգի գրչակներ դարձեալ սկսում են թունաւորել մթնոլորտը հայկական «պրովասիոններ»ի, «սեպարատիզմի» եւ այլ ինստիտուացիաների (զպարտությունների – Ա. Ն.) աղաղակներով:

Ինքնապաշտպանությունը պետք է լիներ հայ քաղաքական ուժերի գերիխնդիրը նաև Սահմանադրությունից հետո, երբ իթթիհատականները դեռևս թույլ էին: Բերենք սրա ճշմարտությունը մեկ անգամ ևս հիմնավորող մեկ փաստ: Բեյրութի(Օոցի) ՀՅԴ կոմիտեի Կ. Պոլսի Պատասխանատու մարմնին ուղղված 1909թ. մայիսի 18 – ի նամակում կարդում ենք. «Ատանայի անտանելի եւ աղիտաբեր դէպքերէն վերջ մեր բարեխնամ կառավարութիւնը կը շարունակէ իր անտարբեր ընթացքը, այլեւայլ ձեւերու տակ ընկճելու համար հայ ազգը: Այս անգամ զինուորական տուրք գանձելու ձեռք զարկած են. աւօթ եւ անբացատրելի է այս ընթացքը: Ազգը հիմա իր ցավերը եւ վերքերը հազիւ հազ կը կարողանայ դարմանել, կարենալով փոքր ինչ նիւթական օգնութիւն հասցնել Ատանայի ցաւատանջ ժողովուրդին, թէ՛ պիտի զինուորական տուրք տայ: Կ'երեւի թէ սահմանադրական կառավարութեան ձեւին տակ բռնութիւն է որ կը շարունակուի, հայոց զինուորագրումը ականջի ե-

³⁰ Նույն տեղում:

տել նետելով: Իրաւացի կերպով ժողովուրդին բողոքը Ձեզ ներկայացնելով կը խնդրենք որ հարկ եղած միջոցները խորհուին ու գործադրուին»³¹:

Եզրակացությունը նույն է՝ նոր կառավարությունը ամեննին հակված չէր հայ և թուրք տարրին նույն քաղաքական, զինվորական, իրավական և տնտեսական հարթության վրա դիտարկելու:

Մեզ մնում է ավելացնել, որ ջարդերը տեղի են ունենում ապրիլի 1–3-ը ընդհատյալ և 12–13-ին:

Ս. Զավարյանը, որն Ադանայի ջարդերից հետո Կիլիկա էր անցել, ՀՅԴ Կ.Պոլսի Պատասխանատու մարմնին 1919թ. հունիսի 9/22 – ին ուղղած նամակում գրում է. «Բոլոր վայրերում տեղական վարչութեան կամ ազդեցիկ անդամների հրահանգով նախ քան կոտորածը հաւաքած են ռեդիֆնեւրը(պահեստի զինվորներ- Ա.Ն.), զենք բաժնած, կամ պաշտոնեաների ձեռնպահութեան շնորհիւ (այսինքն արեւելյան ձեւի հրահանգով) խուժանը գրաւել է զենքի պահեստները: Դա է որ կռուի տեղ կոտորածի ձեւ է տուել: Այդ զենքերը մինչեւ օրս չեն հաւաքուած: Մեղաւորները ազատ են:

Ըսի որ կոտորած են ամենաազդեցիկ, ամենաաշխատաւոր, ամենախելօք, ամենաքաջ հայ անդամները: Միայն Հաջինը 3 – 4000 աշխատաւոր տղամարդ է կորցրել: Իսկ սպանուած ընդհանուր աշխատաւորներու թիւը երեւի 15.000էն պակաս չէ»³²:

Զոհերի թիվն հասել է ավելի քան 30.000-ի³³:

Հր. Սիմոնյանն ուսումնասիրելով փաստերը գալիս է այն եզրակացության, որ «1909 թ. ապրիլի 1–13-ը տեղի ունեցած ջարդի զոհերի և դրանից հետո ստեղծված անտանելի պայմանների հետևանքով մահացածների ընդհանուր թիվը» մոտեցել է 40.000-ի³⁴:

Միանգամայն ճիշտ է ասված, որ «Այս ջարդերը մեկընդմիջտ հաստատեցին, որ թուրքական քաղաքական մտքի ցանկացած դրսևորման համար բազմազգ Օսմանյան փլատակների վրա նոր ազգային թուրքական պետությունը չի կարող կայանալ՝ առանց այդ կայսրության մյուս ազգերի (և առաջին հերթին հայերի) էթնիկ գտման ու հայրենագրկման, բնաջջման և ուծացման»³⁵:

Հետադիմական շարժման ճնշումից և Աբդուլ Համիդի գահընկեցությունից հետո (ապրիլի 14-ին, նոր տոմարով՝ 27-ին³⁶), արևմտահայ հասա-

³¹ Նույն տեղում, էջ 282:

³² Նույն տեղում, էջ 285:

³³ Տե՛ս **Գասպարյան Ռ.**, Հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 47:

³⁴ Տե՛ս **Միմոնյան Հ.**, նշվ. աշխ., Գիրք 4, էջ 31:

³⁵ Տե՛ս **Համբարձումյան Վ. Վ.**, Բրիտանական կայսրության փոխիյուպատոսի ժամանակավոր պաշտոնակատար Լոուիս Չեմբրսը 1909 թ. ջարդերի մասին, տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, հունվար, 1(643), էջ 155–162:

³⁶ Տե՛ս **Հասրաթյան Մ. Ա., Օրեշկովա Ս. Ֆ., Պետրոսյան Յու. Ա.**, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1983, էջ 211:

րական-քաղաքական ուժերը բավական տևական մի ժամանակ, մինչև 1912 թ., շարունակեցին հավատ ընծայել իթթիհաթականների և նրանց բերած Սահմանադրության կետերի իրականացման նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1909 Ադանայի եղեռնը բազմիցս ուսումնասիրվել է հայ պատմագրության կողմից: Պատճառները վերագրվում էին կամ 1909 թվականի մարտի 31-ին հեղաշրջման փորձով մի քանի օրով կրկին իշխանության եկած Աբդուլ Համիդին, կամ իթթիհաթականներին: Հոդվածով ապացուցվում է, որ երկու կողմերն էլ հավասար դեր են խաղացել Ադանայի հայության եղեռնի կազմակերպման գործում:

Հիմնաբառեր. Ադանա, Կիլիկիա, եղեռն, հայեր, թուրքեր, իթթիհաթականներ, Դաշնակցություն, շերիաթչիական շարժում, Սահմանադրություն, Աբդուլ Համիդ, ինքնապաշտպանություն, տեղեկագիր

Օգտագործված գրականություն

1. Միմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009:
2. Լեօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարախոսութիւնը, Հ. Բ. Փարիզ, 1935, էջ 60:
3. Միքայէլ Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան, 1992, էջ 434–435:
4. Հրաչիկ Միմոնյան, նշվ. աշխ. գիրք 4, էջ 1093–1114:
5. Պէհճէթ Ճեմալ, Հայկական հարցը, Ճեմալ փաշայի յիշատակները, թարգմ. Վահրամ Բաբանեան, ՀԱԱ, ֆ. 413, ց. 1, գ. 869, թ. 9:
6. «Արևելյան մամուլ», 1909, թիւ 1–10, 12–19, 21–41, էջ 602:
7. ՀԱԱ, ֆ. 413, ց. 1, գ. 869, թ. 13:
8. Վեր. Համբարձում Յ. Աշճեան, Ատանայի եղեռնը եւ Գոնիայէ յուշեր, Նիւ Եորք, 1950, էջ 14:
9. Համբարձում Առաքելեան, Զեյթուն, տեղագրական, ազգագրական եւ վարչական տեսութիւն, Թիֆլիս, 1896, էջ 48–49:
10. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. Զ. հատոր, Բէյրութ, 2010, էջ 269:
11. Գասպարյան Ռ., Հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 47:
12. Միմոնյան Հ., նշվ. աշխ., Գիրք 4, էջ 31:
13. Համբարձումյան Վ. Վ., Բրիտանական կայսրության փոխյուպատոսի ժամանակավոր պաշտոնակատար Լոուիս Չեմբրսը 1909 թ. ջարդերի մասին, տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, հունվար, 1(643), էջ 155–162:
14. Հասարայան Մ. Ա., Օրեշկովա Մ. Ֆ., Պետրոսյան Յու. Ա., Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1983, էջ 211:

ГЕНОЦИД 1909 ГОДА В АДАНЕ (КРИТИЧЕСКИЙ АНАЛИЗ)

Ашот Нерсисян

ЕГУ, доктор исторических наук, профессор

Геноцид 1909 года в Адане неоднократно исследовался армянской историографией. Причины приписывались либо Абдулу Хамиду, который снова пришел к власти через несколько дней после попытки переворота 31 марта 1909 года, либо иттихадистами. В статье доказывается, что обе стороны сыграли равную роль в организации геноцида армян в Адане.

Ключевые слова: Адана, Киликия, геноцид, армяне, турки, иттихадисты, Дашнакцутюн, Движение шариата, конституция, Абдул-Хамид, самооборона, бюллетень

THE GENOCIDE OF 1909 IN ADANA (CRITICAL ANALYSIS)

Ashot Nersisyan

YSU, Doctor of Science in History, Professor

The genocide of 1909 in Adana has been repeatedly studied by Armenian historiography. The reasons were attributed either to Abdul Hamid, who came to power again a few days after the coup d'état on March 31, 1909, or Ittihadists. The article proves that both sides played an equal role in organizing the Armenian genocide in Adana.

Key words: Adana, Cilicia, Genocide, Armenians, Turks, Ittihadists, Dashnaktsutyun, Sharia Movement, Constitution, Abdul Hamid, Self-defense, Bulletin

Ներկայացվել է՝ 04.09.2021 թ.

Հնդրունվել է՝ 11.10.2021 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1921 Թ. ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

Լարիսա Մանուկյան
ՀՊՏՀ դասախոս
manukyan.larisa.sahaki@mail.ru

«Ժամանակները կողոպտիչները եղան իմ ցեղի»:
Ավետիս Ահարոնյան

Հայկական հարցի առնչությամբ Լոնդոնում մեծ պետությունների նախաձեռնությամբ 1920-1921թթ. տեղի են ունեցել մի քանի խորհրդաժողովներ: 1920թ. փետրվարի 12-24-ը հրավիրված խորհրդաժողովի մասին վկայում է ՀՀ պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանը մարտի 18-ին Ալ. Խատիայանին ուղղված նամակում. որ անգլիական կառավարության ցանկությամբ 1920թ. փետրվարին Լոնդոնում տեղի ունեցավ Խաղաղության համաժողով, որտեղ «առաջին հերթին դրվեց նաև մեր հարցը»: Մասնակցում էին ինքը, փաշան:³⁷

Բարեբախտություն եղավ մեզ համար Խաղաղության համագումարի Լոնդոն փոխադրելը: Ըստ նրա, անգլիական հասարակական կարծիքը բացորոշ հակաթուրքական է, պաշտպանում են Հայաստանի շահերը: Թուրքիայի դատի փաստաբաններն անուղղակի կերպով մեր դեմ եղան մի քանի կենսական հարցերում: Իսկ ֆրանսիական հասարակական կարծիքն ու մամուլը բուռն եռանդով պաշտպանեցին թուրքերին:³⁸ Ամերիկյան պաշտոնապես չի մասնակցում:

1920թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ը տեղի ունեցած Լոնդոնի խորհրդաժողովում, իսկ 1921թ. հունվարին Փարիզում Անտանտի գլխավոր խորհրդի նիստում Ֆրանսիան հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու պահանջով: Թուրքիան հրաժարվեց ենթարկվել Սևրի դաշնագրի պահանջներին: Դաշնակիցները, որպեսզի պարտադրեն իրենց կամքը, նույնիսկ զիջումների գնով հրավիրեցին Լոնդոնի խորհրդաժողովը:

Քեմալական Թուրքիան օգտվեց քաղաքական նպաստավոր պայմաններից, քանի որ Հայաստանում 1920թ. դեկտեմբերի 2-ին հաստատվել էին խորհրդային կարգեր, իսկ 1921թ.-ին փետրվարյան ժողովրդական ապստամբությունն էր: Թուրքիան ճարպիկ դիվանագիտությամբ մի կողմից բանակցում էր Լոնդոնում՝ դաշնակիցների հետ, մյուս կողմից էլ նրա պատվիրակները Մոսկվայում էին, որն ըստ էության ճնշում էր դաշնակիցների վրա՝ զգույշ լինելու, որպեսզի Թուրքիան

³⁷ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ՝ ՀԱԱ, ֆոնդ 200, մաս 1, գ. 290, թ. 68:

³⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 200, մաս 1, գ. 290, թ. 69:

ամբողջապես չհակվի դեպի Խորհրդային Ռուսաստանը: Այդ առիթով «Երկիր»-ը գրել է. «Փարիզի Խորհրդաժողովի տուած որոշման համաձայն Արևելեան առկա խնդիրները վերջնականապես լուծելու համար նոր Խորհրդաժողով մը պիտի գումարի յառաջիկա փետրուար ամսոյ 21-ին Լոնտոնում: Դաշնակիցները հրավիրել են հույն և թուրք կառավարություններին, իսկ հայերի մասին խոսք չկա: Լոնտոնի պատճառն այն է, որ հաղթող դիվանագիտությունը չէն ուզած յարաբերութեան մէջ մտնել հայկական ներկայ կառավարութեան հետ, բոլորիս ծանօթ նկատառումներով և վերապահութեամբ, թե ոչ անոր համար, որ Հայկական խնդրին լուծումը թողած է միջազգային դիվանագիտական ուրիշ օտկանի մէջ: Այդ ուրիշ օտկանը, ինչպէս յայտնի է Ազգերու դաշնակցութիւնը կրնայ միայն ըլլայ»:³⁹

Այնուհետև առաջ անցնելով, հողվածագիրը ավելացնում է. «Բայց պետք է հիշել, որ Հայկական հարցը իր արձագանքը գտավ Ազգերի լիգայի ընդհանուր ժողովում գերազանցապէս որպէս մարտիրոսագրուած ցեղի մը փրկութեան հետ կապ ունեցող մարդասիրական խնդիր մը, ան ալ Միլլիական վերջին արշաւանքին առիթով»:⁴⁰

Այստեղ խնդիրը նաև այն էր, թե Խորհրդային Հայաստանը պատրաստ էր ընդունելու Միացյալ Հայաստանի գաղափարը, չէ՞ որ փոխվել էր իրականությունը: Եթե Խորհրդային Հայաստանը հրաժարվեր որպէս իրավահաջորդ պայքարել Սևրի դաշնագրի պահպանման համար, հետևաբար նա կկորցնէր Միացյալ Հայաստանի կառավարություն լինելու իր ազգային, քաղաքական, ինչպէս նաև միջազգային դիվանագիտական հանգամանքը, դրա հետ նաև այն բոլոր իրավասություններն ու իրավունքները, որ նա ուներ որպէս այդպիսին:

Լոնդոնում Մ. Քեմպլը իր կամքից անկախ պետք է բացեր բոլոր խաղաթղթերը, ուստի հայկական պատվիրակությունները պետք է կարողանային օգտվել այդ հարմար առիթից և նպատակահարմար ու հիմնական լուծում տալ Հայկական հարցին:

Ահա ստեղծված նման բարդ պայմաններում էր հրավիրվելու միջազգային նոր խորհրդաժողովը:

1921թ. փետրվարին Հայկական հարցը միաժամանակ դրվել էր և՛ Լոնդոնի, և՛ Մոսկվայի խորհրդաժողովներում, այսինքն երկու տարբեր քաղաքական շրջանակներում էր քննարկվելու այն: Հաղթած պետությունները Սան Ռեմոյում և Սևրում Հայաստանի մասին արտահայտած իրենց հանդիսավոր ելույթները ոչ միայն պարտավոր էին հարգել, այլև իրականացնել դրանք:

Մյուս կողմից, Խորհրդային Ռուսաստանը որպէս տարածաշրջանի ավելի շահագրգիռ կողմ ստիպված էր նույնպէս իր վերաբերմունքը

³⁹ Տե՛ս Երկիր, Կ. Պոլիս, 30 հունվար 1921:

⁴⁰ Նույն տեղում:

ճշտել հայկական անկախ պետության նկատմամբ, մանավանդ, որ այդ նորաստեղծ պետության մեջ պետք է մտնեին նաև նախկին ցարական Ռուսաստանին կցված հայկական նահանգները:

Խորհրդային Ռուսաստանն արդեն հայտնել էր իր սկզբունքային դիրքորոշումը՝ հռչակելով ազգերի ինքնորոշման իրավունքը: Բայց հարցի լուծման համար բավական չէր այդ հանդիսավոր հայտարարությունը: Անհրաժեշտ էր դրան տալ առարկայական, փաստական իմաստ ու բովանդակություն: Պետք էր սատարել հայկական անկախության ամրապնդմանը, մանավանդ պաշտպանել Հայաստանին, որպեսզի վերջինս կարճ ժամանակամիջոցում ի վիճակի լիներ իր սահմաններում ընդգրկել հայկական բոլոր տարածքները, սահմանի որ կողմում էլ դրանք լինեին:

Մեր կարծիքով հասել էր ժամանակը, որ Հայկական հարցով զբաղվող երկու կենտրոնները՝ Եվրոպան, թե՛ Խորհրդային Ռուսաստանը խոսքից գործի անցնեին և իրականացնեին հայ ժողովրդին իրենց տված խոստումները: Քանի որ և՛ Լոնդոնի, և՛ Մոսկվայի խորհրդածողովներին պետք է մասնակցեին Թուրքիան, որի հետ էր կապված Հայկական հարցի լուծումը: Եվրոպական պետությունները և Խորհրդային Ռուսաստանը առիթ ու հնարավորություն ունեին շատ կտրուկ ձևով պարտադրել իրենց կամքը և Թուրքիայից պահանջել հեռանալ այն երկրամասերից, որոնք հայկական էին իրենց պատմական, էթնիկական տվյալներով: Դրանք հայկական այն նահանգներն էին, որոնց վերաբերյալ Եվրոպան իր վճիռը կայացրել էր Սևրի դաշնագրով և ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով, իսկ Ռուսաստանը 1918 թվականի իր հրովարտակով: Մնում էր միայն Թուրքիային պարտադրել իրագործել դրանք: Խնդրի լուծումը ոչ միայն կապահովեր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, այլև Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումն ու զարգացումը, դրանով և միմիայն դրանով էր պայմանավորված նաև Արևելքի ժողովուրդների խաղաղությունն ու զարգացումը:

Եվ այսպես 1921 թվականի փետրվարի 21-ից մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցավ Անտանտի պետությունների նոր խորհրդածողով՝ մերձավոր-արևելյան հարցը քննարկելու համար: Մասնակցել են Անտանտի պետությունները՝ Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Ճապոնիա, Հունաստան և առաջին աշխարհամարտում պարտված Գերմանիան և Թուրքիան: Բազմաթիվ հարցերի թվում Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկով քննարկվեց նաև 1920թ. Սևրի հաշտության պայմանագրի վերանայման հարցը:

Լոնդոն էր ուղարկվել թուրքական երկու պատվիրակություն՝ Կ. Պոլսի և Անկարայի: Խորհրդածողովի բացումից անմիջապես հետո Կ. Պոլսի պատվիրակությունը հրաժարվեց իր լիազորություններից, և նրա ղեկավար Ռեշիդ փաշան հայտարարեց, որ Անկարայի պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյը լիազորվում է արտահայտելու միացյալ թուրքական տեսակետը:

Փետրվարի 24-ին Բեքիր Սամի բեյը հայտարարեց, թե Անատոլիայի արևելյան սահմանը պետք է մնա թուրք-պարսկական սահմանագիծը, որի շարունակությունն է Երևանի և Թուրքիայի միջև դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով ճշտված սահմանագիծը: Միաժամանակ պահանջում էին.

1. Եվրոպական մասում 1913թ. սեպտեմբերի 16-ի թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերականգնում, այսինքն՝ Արևելյան Թրակիայի վերադարձը Թուրքիային:
2. Հարավում Կիլիկիայի և նրանից արևելք ընկած շրջանների՝ Ուրֆա և այլն, վերադարձը Թուրքիային:
3. Արևելքում՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով գծված սահմանի պահպանում:
4. Արևմուտքում՝ Իզմիրի մարզի վերադարձը Թուրքիային:

Ըստ էության, Անկարայի պատվիրակության ներկայացրած այս ծրագիրը արտահայտում էր 1920թ. հունվարին ընդունված «Ազգային ուխտի» բոլոր հիմնական սկզբունքները: Այսինքն չէր ճանաչում հայերի ինքնորոշման իրավունքը, օրինականացնում էր Կարսի նահանգի և Հայաստանի մյուս տարածքների զավթումը՝ հենվելով Ալեքսանդրապոլի իրենց ստորագրած անօրինական պայմանագրի վրա և ոչ մի լուրջ երաշխիք չէր ապահովում Թուրքիայի կազմում բռնի թողնված ազգային փոքրամասնությունների համար:

Լոնդոնի խորհրդածոդովում Հայաստանը ևս ներկայացված էր գույգ պատվիրակություններով՝ առաջինը Ավետիս Ահարոնյանի և երկրորդը՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի շահերը պաշտպանող «Հայ Ազգային պատվիրակությունը» Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ:⁴¹

Խորհրդածոդովում հայ պատվիրակները պահանջեցին պահպանել Սևրի պայմանագրի Արևմտյան Հայաստանին վերաբերող հոդվածները, իսկ Կիլիկիային տալ ինքնավարություն:

Եթե 1920թ. ապրիլին արդեն Սան Ռեմոյի խորհրդածոդովում անհնար էր համարվում այդ տարածքները ետ գրավել Թուրքիայից, ապա 1920թ. հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտությունից հետո դրա պահանջը անմտություն էր: Հայկական պատվիրակությունների հույսը, թե դաշնակիցները ռազմական և նյութական աջակցություն ցույց կտան հայերին գուր էր, քանի որ նրանք վաղուց էին հրաժարվել Հայաստանին զինվոր կամ դրամ տրամադրել:

Նման իրավիճակում հայկական երկու պատվիրակություններն ամբողջությամբ չմիավորվեցին, ինչպես թուրքականը, այլ շարունակեցին փոփոխված իրադրության պայմաններում էլ հանդես գալ յուրաքանչյուրն

⁴¹ Տե՛ս Սամուել Պողոսեան, Պողոս Նուպարը Եւ Հայկական Հարցի զարգացումները 1912-1921թթ., Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 2005, թ. 1-12, էջ 441:

իր պատվիրակության անունից, միմյանցից տարբեր հարցադրումներով: Միաժամանակ Պողոս Նուբարը հանդես էր գալիս իբրև երկուսի նախագահ՝ արդեն գոյություն չունեցող ՀՀ կառավարության մանդատով: Անտանտի պետություններին դա չէր անհանգստացնում, քանի որ Հայաստանն այսպես կոչված «դաշնակից» պետություններից մեկն էր, իսկ Սևրի դաշնագիրը ստորագրել էր նաև Ավետիս Ահարոնյանը:

Լոնդոնի խորհրդաժողովի փետրվարի 26-ի նիստին ներկա էին հայ պատվիրակներ Ավետիս Ահարոնյանը, Պողոս Նուբար փաշան, գեներալ Հակոբ Բագրատունին և Լոնդոնում ՀՀ-ն գործերի նախկին հավատարմատար հայագրի Մալքունը: Բացելով նիստը Անգլիայի արտգործնախարար լորդ Քերզոնը հայտարարեց, որ «... նիստը հրավիրված է, որպեսզի հայկական պատվիրակությանը հնարավորություն ընձեռվի շարադրելու իր տեսակետը ներկա իրադրության վերաբերյալ: Կոնֆերանսը կունկնդրի պատվիրակությանը և կզեկուցի Գերագույն խորհրդին: Սակայն կոնֆերանսն առաջին հերթին պետք է իմանա երկու բան, այն է՝ ո՞վ է հայերի անունից խոսողը և հանուն ում է նա դիմում կոնֆերանսին»:⁴²

Պատասխանելով լորդ Քերզոնի հարցին Պողոս Նուբար փաշան նշեց. «որ պատերազմի սկզբից ի վեր ինքը ներկայացրել է Թուրքիայի հայերին: Ռուսաստանում հին կարգերի անկումից հետո հիմնվեց Երևանի Հանրապետությունը, որը կազմեց հատուկ պատվիրակություն պարոն Ահարոնյանի նախագահությամբ: Այդ երկու պատվիրակությունները գործել են համատեղ, հուսալով ապահովել թուրքական և ռուսական Հայաստանի միավորումը: Անկասկած վերջին իրադարձությունները բարդացրել են կացությունը, բայց դա չի արգելում երկու պատվիրակություններին համատեղելու և շարունակելու իրենց միասնական ջանքերը»:⁴³

Խորհրդաժողովին ներկայացրած Հայկական ծրագրի հիմքը Սևրի պայմանագիրն էր: Սակայն 1921թ. փետրվարին Խորհրդային Հայաստանում սկսված Փետրվարյան ապստամբությունը չէր կարող իր ազդեցությունը չթողնել ինչպես Լոնդոնում տեղի ունեցող դաշնակցային խորհրդաժողովի, այնպես էլ Մոսկվայում այդ օրերին սկսված խորհրդաթուրքական բանակցությունների վրա, քանի որ երկու դեպքում էլ շոշափվում էր Հայկական հարցը:

Հայկական պատվիրակությունները տեղյակ էին նաև այն մասին, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, արևմուտյան մեծ տերությունների մոտ հարց էր առաջացել, թե հնարավոր էր թույլ

⁴² Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1918-1923), խմբ. Ջ. Ս. Կիրակոսյանի, Ե, 1972, էջ 697-698:

⁴³ Նույն տեղում, էջ 698:

տալ, որ ստեղծվի մեկ հայկական պետություն, ինչպես նախատեսված էր Սևրի պայմանագրով՝ արդեն Անդրկովկասում գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի չորս նահանգների միավորմամբ:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Նուբար փաշան իր ելույթում շեշտեց. «... թե՛ Ռուսիոյ վերատիրացումը կովկասեան Հայաստանին՝ չի կրնար արգելք դառնալ թրքական Հայաստանի մասին Սևրի մէջ ընդունուած որոշումին գործադրութեան»:⁴⁴

Նորից անդրադառնալով այդ հարցին, Պողոս Նուբար փաշան պատասխանել է. «Այն, որ Հայաստանին խորհրդային կարգեր են պարտադրվել, չպետք է ետ պահի տերություններին երկրի մյուս մասերը, այն է՝ թուրքական Հայաստանի չորս վիլայեթները ազատագրելուց: Պետք է հիշել, անկասկած, որ Հայկական հարցը ծագեց Թուրքիայում: Թուրքիայում հայկական ջարդերն էին, որ դրդեցին տերություններին ջանալու հայերի ազատագրության համար: Պարտված Թուրքիայի հետ էր և ոչ թե նախկին դաշնակից Ռուսաստանի, որ տերությունները կնքեցին Սևրի պայմանագիրը»:⁴⁵

Այնուհետև, շարունակելով, նա դիմել է դաշնակիցներին, որպեսզի նրանք թուրքերից ազատագրեն հայկական չորս վիլայեթները. «Ճիշտ է, անշուշտ, որ չորս վիլայեթներն օկուպացված են քեմալական զորքերի կողմից, բայց դաշնակիցները ճնշում գործ դնելու տարբեր միջոցներ ունեն, որոնք կարող են օգտագործել էվակուացումն ապահովելու համար»:⁴⁶

Խորհրդաժողովում Պողոս Նուբար փաշան ներկայացրեց նաև Կիլիկիայի հարցը, որն ըստ նրա, բոլորովին տարբեր էր: Եթե հայերը խնդրել են Սևրի պայմանագիրը կիրառել իրենց սեփական երկրի նկատմամբ, ապա նույնը չի կարելի պահանջել Կիլիկիայի համար: Ուստի ընդունում են, որ Կիլիկիայի տարածքի մեծ մասը պետք է մնա թուրքական գերիշխանության տակ, սակայն 150000 հայեր, ովքեր Ֆրանսիայի շնորհիվ հայրենադարձվել են զինադադարի կնքումից հետո, չպետք է թողնվեն թուրքական տիրապետության տակ:⁴⁷

Հետևաբար, հայերը դիմում են Ֆրանսիային, որը նրանց պաշտոնական հովանավորն է, որպեսզի նա չլքի հայերին և Կիլիկիայի համար ձեռք բերի վարչական ինքնավարություն՝ խառը ժանդարմերիայով, որը

⁴⁴ Տե՛ս Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 477:

⁴⁵ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1918-1923), խմբ. Ջ. Ս. Կիրակոսյանի, Ե, 1972, էջ 698:

⁴⁶ Նույն տեղում, էջ 699:

⁴⁷ Նույն տեղում, էջ 700:

կապահովի հայ ազգաբնակչությանը և նրա անդորրը: Պողոս Նուբարը ավելացրել է նաև. «Անհնար է պատկերացնել, որ մի պատերազմից հետո, որն այսքան շատ ժողովուրդների վերականգնեց իրենց երկրներում, հայերը, ովքեր սոսկալի տառապանքներ են կրել և ովքեր մարտնչել են դաշնակիցների կողքին, այն միակ ժողովուրդն են լինելու, որի համար սեփական երկրում նույնիսկ մեկ անկյուն չի կարող վերապահվել»:⁴⁸

«Սևրի պայմանագրով ճանաչված հայկական պետության անունից» խորհրդածողովում հանդես եկավ Ավետիս Ահարոնյանը: Նա նիստի մասնակիցներին բացատրեց Հայաստանում տեղի ունեցող բարդ իրադարձությունների բնույթը: «... Քեմալական ներխուժումը Հայաստան,- ասել է նա,- իրականում ուղղված էր Սևրի պայմանագրի և դաշնակիցների դեմ: Դա ապացուցվում է պարտությունից հետո Հայաստանին պարտադրված առաջին իսկ պայմաններով, որպեսզի Հայաստանի կառավարությունը հրաժարվի Սևրի պայմանագրից»:⁴⁹

Ահարոնյանը կրկին հիշեցրեց, որ հայերի ցեղասպանության հետևանքով Թուրքիայում կոտորվել են 1,5 մլն հայեր և Թուրքահայաստանը հայերի համար վեր է ածվել մի լայնածավալ գերեզմանոցի:

Միաժամանակ նա ընդունում է, որ Երևանի կառավարությունը բանակցությունների մեջ է մտել քեմալականների հետ ստիպված, բայց Եվրոպայում իր ներկայացուցչին հրահանգել է չճանաչել այդ անխուսափելի պայմանագիրը և մերժել բոլոր պարտավորությունների օրինականությունը:

«Թուրքերն այժմ ավերում են իրենց ներխուժած շրջանները և սիստեմատիկ կերպով ջանում են հայկական տարրը փոխարինել մահմեդականով: Հայկական պատվիրակությունը կողջունի դաշնակիցների հանձնաժողովի ուղարկումն այդ վայրերը՝ ստուգելու համար իրերի ներկա կացությունը: Թուրք ազգայնականները, ներխուժելով Հայաստան, ճգնում են ցույց տալ, որ անհնարին է Սևրի պայմանագրի իրագործումը, իսկ նրանց իդն է հայկական տերիտորիայի վրայով ձեռք մեկնել թուրանական տարրերին»:⁵⁰

Ասվածը խորհրդածողովի մասնակիցների վրա ազդեցություն չթողեց, քանի որ նրանք առաջնորդվում էին իրենց սառը հաշիվներով:

Ուստի լորդ Քերզոնը նշեց, որ հայկական երկու պատվիրակություններն էլ պահանջում են, որ Գերագույն խորհուրդը ամբողջովին կանգնի հանուն Սևրի պայմանագրի, բայց Պողոս Նուբարն ինքն ընդունում է, որ առջնում լորդ դժվարություններ կան: Քերզոնը Հայկական հարցի լուծման դժվարությունները բաժանեց երեք խմբի՝ «... այն է՝ բոլշևիզմը Ռուսահայաստանում, Մուստաֆա Քեմալի կողմից հայկական

⁴⁸ Նույն տեղում, էջ 700-701:

⁴⁹ Նույն տեղում, էջ 700-701:

⁵⁰ Նույն տեղում, էջ 701:

տերիտորիայի մեծագույն մասի գրավումը և տերությունների անգոր լինելը՝ մեծ ուժեր ուղարկելու ի օգնություն Հայաստանի»:⁵¹

Նման իրավիճակում Քերզոնը հայկական պատվիրակություններ- ըից փորձեց իմանալ, թե ըստ նրանց, “ո՞րոնք են համարում Հայաստանի էական տերիտորիալ սահմանները”: Քերզոնը պատվիրակներին հիշեց- րեց, որ Սան Ռեմոյի խորհրդաժողովը Հայաստանի սահմանների որոշ- ման հարցը վերապահել էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին: Ըստ նրա գծած քարտեզի սահմանն ընդգրկում է մի շարք թուրքական հողամասեր, ինչպես նաև Տրապիզոնի նավահանգիստը: Այդ առնչությամբ նա երկու հարց ուղղեց հայկական պատվիրակություններին՝ նրանց կարծիքը իմանալու համար.

1. «Ո՞րոնք են Հայաստանի անհրաժեշտ սահմանները, որոնք խնդրում են երկու պատվիրակությունները:

2. Ո՞րոնք են մարդկային և դրամական այն աղբյուրները, որոնք կկարողանա տրամադրել Հայաստանը՝ իր անկախությունը ձեռք բերելու համար»:⁵²

Պողոս Նուբար փաշան իր պատասխան ելույթում նշեց, որ «Ամենը, ինչ իրենք պահանջել են, Տրապիզոնի վրայով դեպի ծով ելք ունենալն է: Ինչ վերաբերում է պրեզիդենտ Վիլսոնի սահմանագծի մնաց- յալ մասին, ապա դժվար է կարծիք հայտնել, քանի որ հայերը չգիտեն, թե ինչ է այն ընդգրկում: Իրենք պատրաստ են, սակայն, հարմարվել»:⁵³

Լորդ Քերզոնը խնդրեց նաև պարոն Ահարոնյանին տեղեկացնել Մուստաֆա Քեմալի և Հայաստանի միջև կնքված պայմանագրի մասին, նախքան այդ երկրի խորհրդայնացումը: Հետաքրքրվեց, թե ի՞նչ է պարու- նակում պայմանագիրը, ինչ սահմաններ է անցկացնում Հայաստանի և Թուրքիայի միջև, այն ճանաչվում է հայկական պատվիրակության կող- մից թե ոչ, պայմանագիրը կնքվել է թուրքերի կողմից Հայաստան ներխու- ժելուց առաջ, թե՞ հետո:

Ահարոնյանը ՀՀ կառավարության հրահանգի համաձայն պա- տասխանեց, որ պայմանագիրը պարտադրվել է ուժով, ուստի մերժվում է հայերի կողմից: Սահմանագիծը որքանով ինքը տեղեկացված է, մոտա- վորապես անցնում է Արփաչայ գետով, մինչև նրա Արաքսի մեջ թափվելը, Կարսը և Կադզվանը զիջելով թուրքերին, այնուհետև Արաքսից այն կողմ սահմանը շրջվում է արևմուտք և անցնում է Երևանի երկարությամբ:

Այս բացատրություններից հետո լորդ Քերզոնը հայտարարեց, թե մեծ պետությունները այժմ ի վիճակի չեն զիվորական օգնություն ուղարկել հայերին, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնն էլ շեշտում է, որ

⁵¹ Նույն տեղում, էջ 702:

⁵² Նույն տեղում, էջ 702:

⁵³ Նույն տեղում, էջ 703:

Սևրի պայմանագրով նախատեսված Հայաստանի սահմանները ճշտելու հարցում շատ դժվարություններ կան:

Ապա լորդ Քերզոնն անդրադարձավ Նուբար փաշայի առաջարկությանը՝ Կիլիկիայում հայերի պաշտպանության վերաբերյալ և այդ առնչությամբ դիմեց ֆրանսիական կառավարությանը:

Ի պատասխան Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերթոնը հայտարարեց, թե Կիլիկիայում անհնար է առանձին վարչություն կազմել, քանի որ այն նախատեսված չէ Սևրի դաշնագրով: Ապա ավելացրեց, որ «...Ֆրանսիան վճռել է անել ինչ որ կարող է ապահովելու համար լիակատար երաշխիք հայկական փոքրամասնությանը: ...Բոլոր դեպքերում կպահի Ֆրանսիան իր պարտավորությունները, ինչպիսին էլ որ լինեն նրա հարաբերությունները Թուրքիայի հետ»:⁵⁴

Սակայն, ինչպես Պողոս Նուբարի, այնպես էլ Ավետիս Ահարոնյանի (նա իր ելույթում խեղաթյուրում էր իրականությունը, չխոսելով 1920թ. թուրք-հայկական պատերազմի և Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման իրական դրդապատճառների մասին), ելույթից պարզ երևում էր, որ նրանք փորձում էին ամեն կերպ վերադարձնել անդառնալիս Թուրքիայի կողմից գրավված Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը: Ինչ վերաբերում է Կիլիկիայի հարցին, Պ. Նուբարը փորձում էր Ֆրանսիայի ներկայացուցիչներին համոզել Կիլիկիայում հաստատել ինքնավարություն, մինչդեռ Ֆրանսիան 1920թ. ապրիլին Սան Ռեմոյի խորհրդածոդովում, ապա Սևրի պայմանագրով արդեն համաձայնվել էր Կիլիկիան վերադարձնել Թուրքիային: Լոնդոնի խորհրդածոդովի օրերին Ֆրանսիան անջատ բանակցություններ էր վարում Բեքիր Սամի բեյի հետ, որն ավարտվեց մարտի 9-ին ֆրանս-թուրքական համաձայնագրի ստորագրությամբ: Այդ համաձայնագիրը հայտնի էր Բեքիր Սամի – Բրիան անունով: Այն փաստորեն մերժում էր «ազգային օջախ» ստեղծելու առաջարկը, մեկ անգամ ևս հաստատելով Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունը Հայկական հարցում:

Թուրքական պատվիրակությունը՝ օգտվելով անգլո-ֆրանսիական ներկայացուցիչների հետ ստորագրած գաղտնի գործարքներից, մերժեց հայ պատվիրակների բոլոր պահանջները, ուստի Լոնդոնի խորհրդածոդովը Հայկական հարցի առնչությամբ ավարտվեց անարդյունք:

Լոնդոնի խորհրդածոդովում լորդ Քերզոնը փորձում էր դրական առումով ներկայացնել Անգլիայի կառավարության քաղաքականությունը, սակայն այդ խաբիրդածոդովի ժամանակ Անգլիային չհաջողվեց որևէ փոփոխություն մտցնել թուրքական պատվիրակության ներկայացրած ծրագրում: Ապա Լոզանում արդեն հաշտվեց քեմալական Թուրքիայի հետ, մոռանալով և՛ հայերին, և՛ Հայկական հարցը:

⁵⁴ Նույն տեղում, էջ 703-704:

Այդուհանդերձ լորդ Քերզոնը թուրք պատվիրակներին հայտարարեց, թե ճիշտ է Սան Ռեմոյի դաշնագրից հետո հանգամանքները ինչ որ չափով փոխվել են, բայց թուրքերի և հայերի շահերը պահանջում են, որ երկու երկրների միջև փոխադարձ համաձայնությամբ սահմանագիծ գծվի, որով հնարավորություն կտրվի հայերին ապահովելու իրենց գոյությունը:

Մարտին Լոնդոնի խորհրդաժողովը նորից անդրադարձավ Հայկական հարցին և հայտարարեց. «Ինչ կվերաբերի Հայաստանին՝ ներկայ դաշնագիրը կարելի է ճշդել, պայմանով, որ Թուրքիա ընդունի հայկական «Ազգային Տան» մը կազմութիւնը իր արևելեան սահմաններուն վրայ և ընդունի որոշումը յանձնաժողովի մը, որ պիտի կազմուի Ազգաժողովին կողմէ: Այս յանձնաժողովը տեղին վրայ պիտի քննէ այդ հոդամասին հարցը»:⁵⁵

Այսպիսով, Լոնդոնի խորհրդաժողովում հակառակ բոլոր հավաստիացումներին, որ դաշնակիցները չեն հրաժարվելու «Միացյալ և Անկախ Հայաստան» ստեղծելու մտքից, այդուհանդերձ մարտի 12-ին առաջարկված նախագծի մեջ ամենևին չէր խոսվում այդ մասին, այլ առաջ էր քաշվում փաստորեն «ազգային օջախի հարցը ասիական Թուրքիայի արևելյան սահմանների մեջ»:

«Ազգային օջախ»-ի հարցը առաջ քաշվեց Լոնդոնի խորհրդաժողովում, սակայն այնքան անորոշ ձևակերպում էր, որ մեր կարծիքով, ոչ ոք դրա մասին հստակ պատկերացում իսկ չունեցրեց:

Ահա թե ինչ է գրել այդ մասին Ալ. Խատիսյանը. «Օճախը կը նկատուէր իրաւախտութեան միջոց մը Թուրքիոյ հովանաւորութեան տակ հայերու համար, ինքնավարութիւն մը ստեղծելով: Այդ, հարկաւ, խոշոր զիջում մըն էր թուրքերուն:

1921թ. Սեպտեմբեր 21-ին Ազգերու Լիկան միաձայնութեամբ բացատրեց, որ ինքը կը գտնէ, թէ այդ օճախը պէտք է միանգամայն անկախ ըլլայ Թուրքիայէն: Իսկ Լոզանի մէջ 1923թ. Յունուար 6-ին հայկական խնդիրով զբաղող յանձնախումբի նախագահ Մոնթանա արտայայտուեցաւ այն մտքով, թէ այդ օճախը թրքական հոդամաս է որուն վրայ կրնան հայերը հաւաքուիլ, որպէսզի այնտեղ ազատ կերպով մշակեն ու զարգացնեն «իրենց լեզուն, աւանդական սովորութիւնները եւ քաղաքակրթութիւնը»:⁵⁶

Փաստն այն է, որ դաշնակիցները միացյալ Հայաստանի փոխարեն Լոնդոնում հայկական պատվիրակություններին առաջարկեցին Թուրքիայի արևելյան տարածքներում «Ազգային օջախ»-ի ստեղծում: Քանի որ

⁵⁵ Տե՛ս Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 479-480:

⁵⁶ Տե՛ս Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 341-342:

թուրքերը ոգևորված ձեռք բերված զիջումներով ընդդիմացան նաև դրան, ուստի այդ ծրագիրը Թուրքիային ոչինչ չէր պարտավորեցնում և ըստ էության մնաց թղթի վրա:

Այս ամենից պետք է եզրակացնել. «...Եթե մեր դիվանագիտությունն ու քաղաքականությունը փոքր չափով իսկ լինել զգաստ և հեռատես, ձեռք բերել հարևանների բարեկամությունը և մեծ պետությունների անկեղծ համակրանքը, թիրքերի առաջխաղացումն ու յաջողությունները եթե չկասեցնեին իսկույն, գեթ կիսով չափ պակաս կը լինեին»:⁵⁷

Փաստորեն, դաշնակից մեծ պետությունների գործնական քայլերն ուղղված էին իրենց շահադիտական նպատակների իրագործմանը: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր տեր դառնալ ոչ միայն նախկին գաղտնի պայմանագրերով նախատեսված իրենց «հասանելիք» տարածքներին, այլև, եթե հնարավոր էր, ավելիին, ոչ թե տեր կանգնել փոքր ժողովուրդներին տված խոստումներին:

Մարգարեական է Ավետիս Ահարոնյանի հետևյալ խոսքը. «Գնա՛, գնա՛, հայ ժողովուրդ, քալե՛ ...Դեռ սպառուած չեն մեր յոյսերը, դեռ կորած չէ մեր Հայրենիքը ...Մենք դեռ կը պայքարինք եւ պիտի յաղթենք»:⁵⁸

ԱՄՓՈՓԱԳԻՐ

1921թ. դաշնակից պետությունների կողմից հրավիրված Լոնդոնի խորհրդածոդովում քննարկվեց նաև Սևրի պայմանագրի վերանայման խնդիրը: Փոփոխված իրադրության պայմաններում թուրքական միավորված պատվիրակությունը ներկայացրեց իր պահանջները: Խորհրդածոդովին ներկա հայկական երկու պատվիրակությունները՝ Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ պահանջեցին պահպանել Սևրի պայմանագրի Արևմտյան Հայաստանին վերաբերող հոդվածները, իսկ Կիլիկիային տալ ինքնավարություն: Երկարատև քննարկումները, փաստացի հիմնավորումները, հայկական զույգ պատվիրակների բազմակողմանի ջանքերը արդյունք չտվեցին: Լոնդոնի խորհրդածոդովում հակառակ դաշնակիցների բոլոր հավաստիացումներին, որ չեն հրաժարվելու «Միացյալ և Անկախ Հայաստան» ստեղծելու մտքից, որոշվեց Թուրքիայի արևելյան սահմանների մեջ ստեղծել «Ազգային օջախ հայերի համար»:

Հիմնաբառեր. Լոնդոնի խորհրդածոդով, Հայկական հարց, Ավետիս Ահարոնյան, Պողոս Նուբար փաշա, Սևրի պայմանագիր, լորդ Քերզոն, Միացյալ և Անկախ Հայաստան

⁵⁷ Տե՛ս Ժողովուրդ, 7 նոյեմբերի 1920, N181:

⁵⁸ Տե՛ս Հայրենիք ամսագիր, մայիս 1930, N7, էջ 79

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի ազգային արխիվ՝ ՀԱԱ, ֆոնդ 200, մաս 1, գ. 290, թ. 68:
2. ՀԱԱ, ֆոնդ 200, մաս 1, գ. 290, թ. 69:
3. Երկիր, Կ. Պոլիս, 30 հունվար 1921:
4. Սամուել Պողոսեան, Պողոս Նուպարը Եւ Հայկական Հարցի զարգացումները 1912-1921թթ., Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 2005, թ. 1-12, էջ 441:
5. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1918-1923), խմբ. Ջ. Ս. Կիրակոսյանի, Ե, 1972, էջ 697-698:
6. Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 477:
7. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1918-1923), խմբ. Ջ. Ս. Կիրակոսյանի, Ե, 1972, էջ 698:
8. Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 479-480:
9. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 341-342:
10. Ժողովուրդ, 7 նոյեմբերի 1920, N181:
11. Հայրենիք ամսագիր, մայիս 1930, N7, էջ 79

АРМЯНСКИЕ ДЕЛЕГАЦИИ НА ЛОНДОНСКОЙ КОНФЕРЕНЦИИ 1921 ГОДА

Лариса Манукян

На Лондонской конференции, созванной союзниками в 1921 году, обсуждался также вопрос о пересмотре Севрского договора. В изменившейся ситуации совместная турецкая делегация представила свои требования. Две армянские делегации, присутствующие на конференции, во главе с Аветисом Агароняном и Погосом Нубар-пашой, потребовали сохранения статей Севрского договора, касающихся Западной Армении, и предоставления автономии Киликии. Длительные дискуссии, фактические обоснования и многогранные усилия двух армянских делегатов не дали результатов. На Лондонской конференции, вопреки всем заверениям союзников о том, что они не откажутся от идеи создания «Единой и Независимой Армении», было решено создать «Национальный дом» для армян в пределах восточных границ Турции.

Ключевые слова: Лондонская конференция, Армянский вопрос, Аветис Агаронян, Погос Нубар-паша, Севрский договор, лорд Керзон, Независимая и объединённая Армения

ARMENIAN DELEGATIONS AT THE CONFERENCE OF LONDON OF 1921

Larisa Manukyan

At the London Conference convened by the Allies in 1921, the issue of revising the Treaty of Sèvres was also discussed. In the changed situation, the joint Turkish delegation presented its demands. Two Armenian delegations attending the conference, led by Avetis Aharonyan and Boghos Nubar Pasha, demanded that the articles of the Treaty of Sèvres concerning Western Armenia be preserved and that autonomy for Cilicia be granted. Lengthy discussions, factual justifications and multifaceted efforts of the two Armenian delegates did not yield any results. At the London Conference, contrary to all the assurances of the allies that they would not give up the idea of creating a 'United and Independent Armenia', it was decided to create a 'National home' for Armenians within the eastern borders of Turkey.

Key words: London Conference, Armenian Question, Avetis Aharonyan, Boghos Nubar Pasha, Treaty of Sèvres, Lord Curzon, Independent and United Armenia

Ներկայացվել է՝ 14.07.2021 թ.

Ընդունվել է՝ 04.09.2021 թ.

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սարգսյան Հրաչյա

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

hrachyasargsyan9@gmail.com

Մարդկային կապիտալի բնորոշումները թերևս տրվել են անցյալ դարի կեսերից, սակայն իրենց վերջնական դրսևորումները չեն ստացել տնտեսագիտությունում և մինչ օրս էլ տարբեր մեկնաբանումներով են հանդես գալիս: Ունենալով կենսաապահովման և զարգացման վարքագծային հատուկ դրսևորումներ, մարդը միշտ էլ համարվել է տնտեսության զարգացման առանցքային շարժիչ ուժը և իր գործունեությամբ հայտնվել է տեսաբանների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: սկզբնական շրջանում որպես աշխատուժ և աշխատանքային ռեսուրս, իսկ այնուհետև՝ որպես մարդկային կապիտալ:

Դեռևս դասական տնտեսագիտության ներկայացուցիչները առանձնակի արժևորել են մարդուն, որպես ազգային հարստության ձևավորման և տնտեսության առաջընթացի առանցքային գործոնի: **Ուլիյամ Պետին** իր «Քաղաքական հանրահաշիվ» աշխատությունում (1676 թ) փորձ է արել վիճակագրական հաշվարկներով գնահատել երկրի ազգային հարստությունը, շեշտադրելով, որ հարստության կուտակման հիմնական աղբյուրը ոչ թե նյութական ռեսուրսներն են, այլ աշխատուժի օգտագործումը: Ընդ որում, չափահաս մարդու աշխատանքը ազգային հարստության հաշվարկներում նրա կողմից գնահատվում էր կրկնակի անգամ թանկ՝ քան անչափահասինը, իսկ նավաստու աշխատանքը՝ եռակի էր արժևորվում, քան գյուղացունը:¹ Իր հերթին, **Ֆրանսուա Քենեն** որպես կապիտալ դիտարկում էր ոչ այնքան հողը, որքան դրա վրա աշխատող գյուղացուն, վերջինիս աշխատանքը համարելով տնտեսության առաջընթացի աղբյուր:² Ընդ որում, այդ ժամանակաշրջանի հետազոտողները աշխատանքի արտադրողականությունը, համախառն եկամուտը և ազգային հարստության աճը արդեն իսկ փոխկապակցում էին աշխատուժի արդյունավետ օգտագործման հետ:

Տնտեսագիտության մեջ մարդկային գործոնի առանցքային դերը հատկապես արժևորվեց **Ադամ Սմիթի** կողմից, ով «Ազգերի հարստությունը» աշխատությունում (1776 թ.) խորքային վերլուծության ենթարկեց

¹ Տե՛ս Аникин А.В., Юность науки: Жизнь и идеи мыслителей —экономистов до Маркса, М., Политиздат, 1975, стр. 54.

² Տե՛ս Физиократы. Избранные экономические произведения, М., Эксмо, 2008, стр 87-88.

աշխատողի մասնագիտական և կրթական մակարդակի փոխադրեցությունը աշխատանքի արտադրողականության աստիճանի հետ, հստակ նշելով, որ աշխատանքի արտադրողականությունը առաջին հրթրին պայմանավորված է աշխատողի հմտությունների և ճարպկության, և նոր միայն մեքենաների և սարքավորումների հետ, որոնցով նա աշխատում է: Ըստ Սմիթի, աշխատանքի բաժանման, ինչպես նաև մասնագիտացման արդյունքում, աշխատանքի արտադրողականությունը կաճի՝ ի հաշիվ աշխատողների մասնագիտական հմտությունների բարձրացման, աշխատանքի մի տեսակից մյուսին անցնելու համար անհրաժեշտ ժամանակի կրճատման, ինչպես նաև աշխատանքի գործիքների կատարելագործման և մեքենաների ստեղծման պայմանների: ³ Լինելով Սմիթի տեսության հետևորդ, **Դավիթ Ռիկարդոն** իր «Քաղաքատնտեսություն և հարկային համակարգի սկզբունքներ» աշխատությունում (1817 թ) ընդգծում է, որ ցանկացած տնտեսական համակարգի հետամնացության հիմքում պետք է փնտրել աշխատուժի անբավարար պրոֆեսիոնալիզմը և ազգաբնակչության տարբեր շերտերի կրթական մակարդակի անբավարարվածությունը:⁴

Կարլ Մարքսը իր «Կապիտալ» աշխատությունում (1867 թ.) մարդու աշխատանքը դիտարկեց արդեն որպես հավելյալ արդյունքի ստացման միջոց: Նա ավանսավորված կապիտալը բաժանեց երկու մասի՝ հաստատունի և փոփոխունի: Ընդ որում, եթե հաստատուն կապիտալը փոխակերպվում է արտադրության միջոցների և արտադրության ընթացքում հավելած չի ունենում, ապա փոփոխուն կապիտալը փոխակերպվում է աշխատուժի և արտադրության ընթացքում փոխում է իր արժեքը, ձևավորելով հավելյալ արդյունք: Հետևաբար հաստատուն կապիտալը (c) հանդիսանում է արժեքի ստեղծման պայման է, այլ ոչ թե աղբյուր, քանի իսկ փոփոխուն կապիտալի (v) արժեքն անընդհատ փոփոխվում է: Հենց այս առումով, մարդը իր աշխատանքի ընթացքում ստեղծում է նոր արժեք (v+m), որը հավասար է աշխատուժի արժեքին (v) գումարած որոշակի ավելցուկ (m):⁵

Այսպիսով, դասական տնտեսագիտությունը, թեպետ մարդու դերակատարումը առաջնային է համարում և այն արժևորում է տնտեսության զարգացման գործընթացում, սակայն դեռևս մարդկային կապիտալը չի դիտարկում որպես առանձին կատեգորիա: Ավելին, դասական

³ Տե՛ս Գալստյան Գ., Մարգարյան Հ., Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները, ուս. ձեռնարկ ԵՊՀ հրատ., 2016, էջ 45:

⁴ Տե՛ս Риккардо Д., Начало политической экономии и налогового обложения, М., Государственное издательство политической литературы, 1955, стр.124.

⁵ Տե՛ս Գալստյան Գ., Մարգարյան Հ., Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները, ուս. ձեռնարկ, //ԵՊՀ հրատ., 2016, էջ 79:

հետազոտողների ուշադրության կենտրոնում էին գտնվում մարդու աշխատուժի ոչ թե ձևավորման, այլ օգտագործման հիմնախնդիրները:

Մարդկային կապիտալի ժամանակակից տեսության ձևավորումը սկիզբ առավ միայն XX դարի կեսերին, որի հիմնադիրը **Թեոդոր Շուլցն** էր: Այնուհետև, **Գերի Բեքերը** զարգացրեց այդ տեսությունը և 1964 թվականին հրատարակեց «Մարդկային կապիտալ» գիրքը, որը դասական աշխատություն հանդիսացավ այդ ոլորտում:

Բայց մինչ այդ, մարդկային կապիտալի տեսության ձևավորման դրույթները արդեն իսկ սկսեցին դրսևորվել մի շարք հետազոտողների աշխատություններում: Այսպես, XX դարի առաջին տասնամյակում հետազոտողները փորձեցին ձևակերպել կիրառելու վիճակագրական և տնտեսամաթեմատիկական մեթոդներ՝ գնահատելու մարդու արժեքը տնտեսական համակարգում, կրթական ազգային համակարգի ազդեցությունը երկրի ազգային հարստության աճի վրա:⁶

Հատկանշական էր, որ տնտեսագետ հետազոտողների մի խումբ (**Ֆ. Լիստ, Ս. Ուոլշ, Ս. Միլլ**) մարդկային կապիտալի հիմքում դիտարկում էին ոչ այնքան մարդուն, որքան նրա կարողությունները աշխատանքի նկատմամբ, հաշվի առնելով անհատի կրթությունը, որակավորումը, աշխատանքային հմտությունները: Նրանք գտնում էին, որ մարդու կարողությունների մի մասը բնատուր է, իսկ մյուս մասը ձեռք է բերվում մարդու կողմից՝ իր կենսագործունեության ողջ ընթացքում: Հատկապես այդ դրույթները իրենց զարգացումը ստացան **Ռ. Դոռնբուշի, Ս. Ֆիշերի, Կ. Շմանկեզի** աշխատություններում, որոնք աշխատուժի որակական հատկանիշները սկսեցին մեկնաբանել ոչ միայն անհատի ֆիզիկական հնարավորությունների, այլև նրա մշակութային, բարոյահոգեբանական հավասարակշռվածության տեսանկյունից: Այստեղ մեծ նշանակություն էր տրվում անհատի որակական հատկանիշներին, որոնք առնչվում էին աշխատանքային միջավայրում նրա ներդաշնակ գործունեությանը, որոշումներ կայացնելու ունակությանը, աշխատանքային կոնֆլիկտների հաղթահարմանը:

Մասնագետների կարծիքով, մարդկային կապիտալի տեսության ձևավորմանը, որպես առանձին գիտական ուղղություն, նպաստեցին մի քանի սոցիալ-տնտեսական գործոններ, ինչպիսիք են.

1. բարձր գիտատեխնիկական արդյունքների ձևավորմամբ ինովացիոն տնտեսության անցման գործընթացի մեկնարկը, որը ոչ միայն առաջացրեց ստեղծարար մտածելակերպ ունեցող որակյալ աշխատողների պահանջ, այլև դրանց ձևավորման գործիքակազմի ուսումնասիրություն,

⁶ St' u Ельмеев В.Я., Человек труда вместе человеческого капитала: перспективы человека в глобализирующемся мире, //Санкт-Петербургское философское общество, СПб, 2003, стр. 319-351.

2. բարձր նյութատարությամբ տնտեսական գործընթացների նահանջը, և փոխարենը ինտելեկտուալ աշխատատարությամբ նոր տեխնոլոգիաների ակտիվացումը, որի հետևանքով թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների ինքնարժեքում մեծ տեսակարար կշիռ կազմեցին աշխատանքային ծախսումները,
3. սոցիալ-տնտեսական հարաբերություններում հումանիզմի էական դրսևորումները, երբ մարդկային արժեքները առաջնահերթություն համարվեցին տնտեսության կառավարման տարբեր համակարգերում,
4. ինտելեկտուալ և ստեղծարար ներուժի օգտագործման բարձր սոցիալ-տնտեսական հատույցը, երբ կայուն գործարարության և մրցունակության ապահովման առաջնային գրավական հանդիսացավ որակյալ աշխատուժի հավաքագրումն ու օգտագործումը:⁷

Մարդկային կապիտալի տեսության ջատագովները պնդում էին, որ նյութական բարիքների թողարկման և ծառայությունների մատուցման գործընթացներում արժեքի հավելաձև անմիջականորեն կարող է ապահովվել միայն արտադրության նյութական և անձնական գործոնների համակցման, այսինքն՝ հենց մարդկային կապիտալի ներագդեցության շնորհիվ: Հետևաբար, մարդկային կապիտալի՝ որպես արտադրության առանցքային գործոնի առանձնացումը կարևորվում է այն առումով, որ գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում հատկապես մարդկային կապիտալի կուտակումը, նպաստում է համեմատական ու մրցակցային լրացուցիչ առավելությունների ձևավորմանը, ապահովում է արտադրության անհամեմատ ավելի բարձր արդյունավետություն:⁸

Ուսումնասիրելով **Գ. Բեքերի** աշխատությունները, հետազոտողները մեջբերում են, որ «մարդկանց մեծամասնության համար «կապիտալ» բառը նույնացվում է բանկային հաշիվների, կազմակերպությունների բաժնետոմսերի, հոսքային գծերի... հետ, որոնք կապիտալի տարատեսակ են այն իմաստով, որ ակտիվներ են, որոնց միջոցով եկամուտ կամ այլ օգտակար արդյունքներ են ստացվում: Սակայն ուսուցումը դպրոցում, վերապատրաստման ծրագրերը, առողջապահությանն ուղղված ծախսերը, ինչպես նաև դասախոսությունները վեհ արժեքների մասին նույնպես հանդիսանում են կապիտալ և կոչվում են «մարդկային կապիտալ», քանի որ մարդիկ չեն կարող առանձնանալ իրենց գիտելիքներից, կարողություններից, հմտություններից կամ այլ

⁷ St' u Хайкин М., Эволюция теории человеческого капитала, <http://nlr.ru/news/20170427/haikin.pdf>

⁸ St' u Մարգարյան Հ., Մարկոսյան, Խաչատրյան Ն., Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը, //ԵՂՀ հրատ., 2016, էջ 12:

արժեքներից այն կերպ, ինչպես կարող են ձեռքագատվել ֆինանսական և ֆիզիկական ակտիվներից»:⁹

Տնտեսագիտությունում կապիտալն ավանդաբար մեկնաբանվել է որպես արժեք ձևավորող կամ հավելյալ արժեք ստեղծող միջոց, որն ունի ավանսավորման, կուտակման, փոխակերպման, շարժունության, վերարտադրման և ինքնաճման հատկություններ: Այս առումով, մարդկային կապիտալի հայեցակարգի ձևավորման հիմքում դրվում է կապիտալի էության վերաբերյալ ավանդական պատկերացումների վերաիմաստավորումը, համաձայն որի, կապիտալ է համարվում այն ամենը, ինչը համապատասխանում է հետևյալ չափանիշներին.

- որոշակի ժամանակահատվածում ապահովում է եկամտի որոշակի հոսք,
- ձևավորվում է ներդրումների արդյունքում,
- ունի ինքնաաճելու հատկություն:¹⁰

Հետևաբար, հետազոտողները հենց այս առումով են դիտարկում մարդկային կապիտալը, քանի որ վերջինս հանդիսանալով անհատի անբաժանելի մաս, նրան ապահովում է եկամտային ներհոսքեր ինչպես նաև՝ ոչ տնտեսական օգուտներ, պահանջում է որակի բարձրացման և ընդլայնման առումով ներդրումներ, աշխատանքային հմտությունների, կարողությունների, գիտելիքների, փորձի ձևավորման համար վերարտադրման ծախսեր, որոնք ի վերջո հանգեցնում են ոչ միայն մարդկային կապիտալի պաշարմանը, այլև կուտակային աճին:

Այս առումով, XX դ. երկրորդ կեսից, տնտեսության մեջ մարդկային կապիտալի դերի նկատմամբ հետազոտողների վերաբերմունքի արմատական փոփոխությունը, հետարդյունաբերական հասարակությունում մտավոր պոտենցիալի՝ որպես արտադրության աճի կարևոր ռազմավարական բաղադրիչի նոր ըմբռնումը եկան հաստատելու, որ հենց մարդկային կապիտալն է իր գերիշխող դերով դառնում ժամանակակից ինովացիոն տնտեսության՝ որպես տնտեսության զարգացման հաջորդ՝ բարձր փուլի ստեղծման գլխավոր գործոնը:¹¹

Աղյուսակ 1.

Մարդկային կապիտալի բնութագրումները ըստ տարբեր հետա-

⁹ Տե՛ս Շահնազարյան Հ., Մարդկային կապիտալը որպես գիտելիքահենք տնտեսության ձևավորման գլխավոր գործոն, <https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/08/>

¹⁰ Տե՛ս Մայիլյան Ֆ., Մարդկային կապիտալում կատարվող ներդրումների առանձնահատկությունները, //Բանբեր ՀՊՏՀ, 2018, #2, էջ 10-11:

¹¹ Տե՛ս Ասատրյան Գ., Մարդկային կապիտալը և նրա հումանիստական չափումը, Լրաբեր հասարակական գիտությունների <http://lraber.asj-oa.am/6160/>

գոտոդների¹²

Տարի	Հետազոտող	Մահմանումը
1961	Շուլց	Մարդկային կապիտալը, իր կրթական և առողջապահական բաղադրիչներով նպաստում տնտեսական աճին:
1964	Բեքեր	Մարդկային կապիտալը գիտելքների, տեղեկատվության, գաղափարների, կարողությունների և առողջական վիճակի համախումբն է, որը հանդես է գալիս որպես հիմնական արտադրողականության գործոն:
1970	Թյուրոու	Մարդկային կապիտալը գիտելիքների և կարողությունների վրա հիմնված բարիքներ արտադրելու անհատի ունակությունն է:
1978	Բոուեն	Մարդկային կապիտալը գիտելքների, ունակությունների, աշխատանքային էներգիայի և շարժառիթների համակցությունն է, որով թողարկվում են ապրանքներ և մատուցվում ծառայություններ՝ կոնկրետ ժամանակում:
1991	Կրիտսկի	Մարդկային կապիտալը ավանսավորված ռեսուրս է, ի սկզբանե ներառելով կրթության, դաստիարակության, աշխատանքային կարողությունների ներդրումներ:
1998	Սոյուարդ	Մարդկային կապիտալը առավելապես ինտելեկտուալ է, բաղկացած գիտելիքների և բարձր որակավորում ունեցող աշխատանքային հմտություններից:
2000	Բաժենովա	Մարդկային կապիտալը գիտելիքների, ունակությունների, կրթության մակարդակի, արտադրական փորձառության, ինտելեկտուալ պոտենցիալի համախումբն է:
2007	Գենկին	Մարդկային կապիտալը անհատի բնատուր կարողությունների, տաղանդի, պրոֆեսիոնալիզմի համախումբն է, որը ձևավորում է հանրային բարիքներ:
2012	Ստուկաչ	Մարդկային կապիտալը ներկայացնում է երկու կտրվածքով՝ բազային և հետագա զարգացմանը ենթակա:
2013	Նոսկովա	Մարդկային կապիտալը գիտելքների, հմտությունների և կարողությունների պաշարն է, որն ապահովում է անհատի և հասարակության բարեկեցություն:
2016	Բորշեվա	Մարդկային կապիտալը գիտելքների, ստեղծարար գործունեության համակցությունն է, որի օգտագործումը հանգեցնում է տնտեսական աճի:

Հետևաբար, աշխատանքային ռեսուրսները հետազոտողների կողմից դիտարկվեցին ոչ թե պարզապես աշխատուժ, այլ կապիտալ, այն


¹² Ст' u Владимирова Ц., Развитие теории человеческого капитала организации в цифровой экономики, //Российское предпринимательство, том 19, #9, 2018, стр. 2674.

դիտարկելով վերջինիս առնչվող բոլոր հատկություններով, ինչպիսիք են ավանսավորումը, կուտակումը, հավելյալ օգուտներ ստանալու նպատակադրումը, ներդրումների ճանապարհով արդիականացումը, վերարտադրությունը, փոշիացման ռիսկերը:

Մարդկային կապիտալի առավել ընդհանրական բնորոշմամբ ներկայացվում է որպես աշխատուժի գիտելիքների, կարողությունների, փորձի և հմտությունների համախումբ, որի որակական բարելավումը տեղի է ունենում առողջապահական, կրթական, որակավորման բարձրացման, սոցիալ-մշակութային և այլ ուղղություններով իրականացվող շարունակական ներդրումների շնորհիվ՝ դրանից ստացվելիք հատույցի ավելացման նպատակով:¹³ Սակայն դրան զուգահեռ, հետազոտողները իրենց բնորոշումն են տալիս մարդկային կապիտալը սահմանելիս, ընդհանրականից բացի, որոշ առումներով տարբերակիչ մեկնաբանություններ ներկայացնելով (տե՛ս աղյուսակ 1):

Սակայն, մինչ մարդկային կապիտալի տարբեր մեկնաբանումների վերլուծելը, նպատակահարմար ենք համարում ներկայացնելու տնտեսական համակարգում մարդկային կապիտալի դրսևորման առանձնահատկությունները (տե՛ս գծապատկեր 1.): Ի տարբերություն դասական տնտեսագետների կողմից կապիտալի դրսևորման բնութագրումների, մարդկային կապիտալն ունի իրեն հատուկ ձևավորման և օգտագործման դրսևորումները: Նախ պետք է ընդգծել, որ եթե նյութական և ֆինանսական կապիտալը ձեռքբերովի չէ և այն ավանսավորվում է կազմակերպվող տնտեսական գործունեության շնորհիվ, ապա մարդկային կապիտալը ի սկզբանե ձեռքբերովի է: Ծնվելով, անհատը արդեն իսկ ունի մարդուն բնորոշ ստեղծարարության, ձեռներեցության, կազմակերպչական հմտությունների պոտենցիալ, որն արդեն իսկ չափահաս տարիքում կարող է տարբեր աստիճաններով դրսևորվել: Սակայն, այդ բնատուր հատկությունները, մարդու կենսագործունեության ընթացքում զարգանում են և լրացվում են կապիտալի օգտակարությանը աջակցող ձեռքբերովի այլ կարողություններով: Հետևաբար, ի տարբերություն տնտեսական համակարգում կիրառվող նյութական և ֆինանսական կապիտալի, ավանսավորված մարդկային կապիտալը բնատուր օգտակար հատկանիշներով չի բավարարվում և անընդհատ աճ է ապրում, իր կենսագործունեության ընթացքում կրելով դինամիկ փոփոխություններ և ձգտելով կատարելիության:

¹³ St' u Нуреев Р., Человеческий капитал и проблемы его развития в современной России //Общественные науки и современность, № 4., 2009, стр. 45.



Գծապատկեր 1. Մարդկային կապիտալի դրսևորման առանձնահատուկ հատկանիշները տնտեսական համակարգում¹⁴

Մարդկային կապիտալը, ի տարբերություն դասական կապիտալի մեկնաբանման պատկերացումների, ունի վերարտադրության իր առանձնահատկությունները: Եթե նյութական կապիտալը, օգտագործվելով տնտեսական գործունեությունում, աստիճանաբար մաշվում է ոչ ընթացիկ ակտիվների մասով և արդյունքում մարդու ներագդեցությամբ արդիականացման և լրացումների պահանջ է զգում, ապա մարդկային կապիտալը չի մաշվում, այլ վերարտադրվում է ազգաբնակչության ծնելիության շնորհիվ:¹⁵ Ավելին, մարդկային կապիտալի վերարտադրությունը, ի տարբերություն տնտեսական համակարգում ավանդական ճանաչում ստացած կապիտալի, մշտապես ուղեկցվում է որակական բարեփոխումներով, և յուրքանցյուր սերունդ տարբերվում է նախորդից՝ ձեռք բերած գիտելիքների, աշխատանքային հմտությունների և ստեղծարար կարողությունների լրացուցիչ պաշարով:

Հատկանշական է նշել, որ հավելյալ արդյունք ապահովելու տե-

¹⁴ Կազմվել է հեղինակի կողմից:

¹⁵ St' u Khachatryan N., Sargyan H., National Value system impact on the economy of Armenia //Wisdom, Vol.14, #1, 2020, pp. 105-111.

սանկյունից մարդկային կապիտալը նույնպես ունի առանձնահատկություններ: Այսպես, եթե նյութական կապիտալի բաղադրիչներ հանդիսացող ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների օգտագործումը հետամուտ է լինում հավելյալ արդյունքի ստացմանը՝ հիմնականում ձեռնարկատիրական շահույթի տեսքով,¹⁶ ապա մարդկային կապիտալի օգտագործման պարագայում հավելյալ արդյունքը քննարկվում է օգտակար պոտենցիալի կտրվածքով, քանի որ մարդկային կապիտալում գեներացված անհատի ստեղծարարությունը, սոցիալ-բարոյական հոգեկերտվածքը, հումանիզմը ձևավորում են հավելյալ ոչ նյութական բարիքներ, որոնք անգհատելի են հասարակության համար (օրինակ մանկավարժի, կոմպոզիտորի կամ հանրային կառավրչի աշխատանքը): Ուստի կարծում ենք, որ մարդկային կապիտալի պարագայում տեղին է նշել ոչ թե հավելյալ եկամուտների կամ շահույթի, այլ օգտակար պոտենցիալի ձևավորումը (տե՛ս գծապատկեր 1.):

Դասական տնտեսագիտությունը արդեն իսկ ապացուցել է, որ կապիտալի օգտագործման նպատակադրումներից առաջնային է համարվում ոչ միայն հավելյալ արդյունքի ստացումը, այլև ներդրված կապիտալի պարբերաբար ինքնաճման ապահովումը: Այստեղ էլ, մարդկային կապիտալը հանդես է գալիս այն առանձնահատկությամբ, երբ հատկապես ինովացիոն տնտեսության պայմաններում հայտնվում է խիստ մրցակցային պայմաններում և անընդհատ ձգտում է որակական աճի, ինչպես նաև օգտագործման հատույցի կատարվողության: Մարդկային կապիտալը իր որակական հատկանիշներով աճի արագընթաց տեմպեր է արձանագրում ավանդական կապիտալի նկատմամբ, քանի որ անհատի ստեղծարարությունը, առաջնորդությունը, պրոֆեսիոնալիզմը, մտավոր ներուժը շատ ավելի են արժեվորվում հետինդուստրիալ դարաշրջանում:¹⁷

Եվ վերջապես, կուտակման առումով մարդկային կապիտալին նույնպես հատուկ են առանձնահատուկ դրսևորումներ: Նախ, ի տարբերություն նյութական և ֆինանսական կապիտալի, որոնք վերականգնվում, ընդլայնվում և կուտակվում են մարդու ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ, մարդկային կապիտալի կուտակման աղբյուր է հանդիսանում առաջին հերթին ազգաբնակչության քանակական հավելվածը (տե՛ս գծապատկեր 1.): Այսինքն, մարդկային կապիտալի կուտակվում է առաջին հերթին բիոլոգիական ճանապարհով: Սակայն,

¹⁶ Տե՛ս Денисов В.Т., Авдеева Е.С. Готовность человеческого капитала к стратегическим преобразованиям промышленного предприятия // Креативная экономика, 2015. № 3, стр. 343-354.

¹⁷ Տե՛ս Ермоченко О.Н. Теории воспроизводства человеческого капитала и определение структуры кадрового потенциала // Транспортное дело России, 2009, № 12, стр. 67-69.

կուտակման ոչ պակաս կարևոր աղբյուր է հանդիսանում կրթության, առողջապահության կազմակերպումը, ինչպես նաև փորձառության պաշարումը և աշխատուժի շարժունությունը: Եթե բիոլոգիական աղբյուրը մի կողմից ապահովում է մարդկային կապիտալի կուտակման քանակական կողմը, ապա մյուս կողմից, մասնագիտական կարողությունների աճը, փորձառության փոխանցումը սերունդներին, աշխատուժի շարժունության շնորհիվ փորձի ձեռքբերումը որակյալ մարդկային կապիտալի կուտակման լուրջ գործոններ են հանդիսանում:¹⁸

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մարդկային կապիտալի հատույցը չի դրսևորվում զուտ տնտեսական դրսևորումներով, եկամտի կամ շահութաբերության աճով, այլ այն առավել ընդգրկուն է, և ներառում է օգտակար պոտենցիալ, որը կարող է մարդկային կապիտալի օգտագործման արդյունքում հանդես գալ ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական արդյունքներով:

Մարդկային կապիտալը, ի տարբերություն նյութական կապիտալի, ունենալով ոչ նյութական բաղադրիչներ, տնտեսական համակարգում բազմակարծություն է ձևավորում ինչպես արժևորման, այնպես էլ օգտակար ծառայության ժամկետների սահմանման առումներով:

Հիմնաբաներ. մարդկային կապիտալ, օգտակար պոտենցիալ, կապիտալի հատույց, կապիտալի վերարտադրություն, կապիտալի որակական բաղադրիչներ

Օգտագործված գրականություն

1. Аникин А.В., Юность науки: Жизнь и идеи мыслителей –экономистов до Маркса, М., Политиздат, 1975, стр. 54.
2. Физиократы. Избранные экономические произведения, М., Эксмо, 2008, стр 87-88.
3. Գալստյան Գ., Մարգարյան Հ., Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները, ուս. ձեռնարկ ԵՊՀ հրատ., 2016, էջ 45:
4. Риккардо Д., Начало политической экономии и налогового обложения, М., Государственное издательство политической литературы, 1955, стр.124.
5. Գալստյան Գ., Մարգարյան Հ., Տնտեսագիտական մտքի պատմության հիմունքները, ուս. ձեռնարկ, //ԵՊՀ հրատ., 2016, էջ 79:

¹⁸ St' u Bapna R., Langer N., Mehra A., Gupta A. Human Capital Investments And Employee Performance : An Analysis Of It Services Industry // Journal of Management Science, 2013, № 3, p. 641-658.

6. Ельмеев В.Я., Человек труда вместе человеческого капитала: перспективы человека в глобализирующемся мире, //Санкт-Петербургское философское общество, СПб, 2003, стр. 319-351.
7. Хайкин М., Эволюция теории человеческого капитала,
<http://nlr.ru/news/20170427/haikin.pdf>
8. Մարգարյան Հ., Մարկոսյան, Խաչատրյան Ն., Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը, //ԵՊՀ հրատ., 2016, էջ 12:
9. Շահնազարյան Հ., Մարդկային կապիտալը որպես գիտելիքահենք տնտեսության ձևավորման գլխավոր գործոն, <https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/08/>
10. Մայիլյան Ֆ., Մարդկային կապիտալում կատարվող ներդրումների առանձնահատկությունները, //Բանբեր ՀՊՏՀ, 2018, #2, էջ 10-11:
11. Ասատրյան Գ., Մարդկային կապիտալը և նրա հումանիստական չափումը, Լրաբեր հասարակական գիտությունների <http://lraber.asj-oa.am/6160/>
12. Владимирова Ц., Развитие теории человеческого капитала организации в цифровой экономики, //Российское предпринимательство, том 19, #9, 2018, стр. 2674.
13. Нуреев Р., Человеческий капитал и проблемы его развития в современной России //Общественные науки и современность, № 4., 2009, стр. 45.
14. Khachatryan N., Sargyan H., National Value system impact on the economy of Armenia //Wisdom, Vol.14, #1, 2020, pp. 105-111.
15. Денисов В.Т., Авдеева Е.С. Готовность человеческого капитала к стратегическим преобразованиям промышленного предприятия // Креативная экономика, 2015. № 3,стр. 343-354.
16. Ермоченко О.Н. Теории воспроизводства человеческого капитала и определение структуры кадрового потенциала // Транспортное дело России, 2009, № 12, стр. 67-69.

ЭКОНОМИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА И ОСОБЕННОСТИ ИХ ПРОЯВЛЕНИЯ

Грачья Саргсян

Аспирант факультета экономики и менеджмента ЕГУ

Основные харктерные черты проявления человеческого капитала в экономической системе являются авансирование и воспроизводство капитала, которое осуществляется за счет сочетания биологического и экономического влияния, когда рост капитала обусловлен не только

прогрессом увеличения населения, но и вложением в нем знаний, профессионализмом работы, здравоохранения.

Кроме того, отдача от человеческого капитала не является результатом чисто экономического роста производства, дохода или прибыльности. Она более содержима и включает полезный потенциал, который может возникнуть в результате использования человеческого капитала, как с экономической, так и с неэкономической точки зрения. Человеческий капитал, в отличие от материального капитала, имеет нематериальные компоненты в экономической системе, как с точки зрения оценки, так и с точки зрения определения срока полезного использования.

Ключевые слова: человеческий капитал, полезный потенциал, рентабельность капитала, воспроизводство капитала, качественные составляющие капитала

ECONOMIC CHARACTERISTICS OF HUMAN CAPITAL AND EXERTION FEATURES

Hrachya Sargsyan

Postgraduate student of YSU department of Economics and Management

These are the main features of the manifestation of human capital in the economic system.

First, capital advancement - reproduction, which is realized through the combination of biological and economic influence, when the growth of capital is conditioned not only by the progress of the population growth, but also by the investment of knowledge, work professionalism, health program. Secondly, the return on human capital does not come from purely economic output, income or profitability growth, but it is more inclusive and contains useful potential that can result from the use of human capital - both economically and non-economically outcomes. Third, human capital, unlike tangible capital, has intangible components in the economic system, both in terms of valuation and the definition of useful life.

Keywords: human capital, useful potential, return on capital, reproduction of capital, quality components of capital

Ներկայացվել է՝ 19.07.2021 թ.

Ընդունվել է՝ 12.09.2021 թ.

**ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՑԱՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎՐԱ**

Լիլիթ Միրզոյան

տնտեսագիտության մագիստրոս, ՀՊՏՀ
lilit_mirzoyan-1997@mail.ru

Սոնա Ստեփանյան

տնտեսագիտության մագիստրոս, ՀՊՏՀ
sstepanyan@yahoo.com

Արման Համբարձումյան

տնտեսագիտության մագիստրոս, ՀՊՏՀ
arman_stepanjan@yandex.ru

Տրանսֆերային գնագոյացման քաղաքականությունը մեծապես կապված է ընկերության կազմակերպական կառուցվածքից, որը բնութագրվում է ստորաբաժանումների ինքնավարության աստիճանով: Ընկերության կողմից տրանսֆերային գնագոյացումն օգտագործելու չորս հիմնական պատճառ կա. հարկային խնայողություններ, կատարողականի չափման դյուրացում, առևտրային որոշումների համար համապատասխան տեղեկատվության տրամադրում, նպատակային համահունչ որոշման ընդունման հեշտացում:

Տրանսֆերային գնագոյացումով կատարվում է ապրանքի և ծառայությունների փոխադարձ փոխանցում: Դա տեղի է ունենում, երբ երկու հարակից ընկերություններ, այսինքն՝ մայր ընկերություն և դուստր ձեռնարկություն, կամ ընդհանուր դուստր ձեռնարկության կողմից վերահսկվող երկու դուստր ձեռնարկություններ, իրար հետ առևտուր են անում, ինչպես օրինակ, երբ ԱՄՆ-ում տեղակայված Coca-Cola-ի դուստր ընկերությունը, ինչ-որ բան է վաճառում Ֆրանսիայում գտնվող Coca-Cola-ի դուստր ձեռնարկությանը:

Դա եկամտի բաշխման մեխանիզմ է տարբեր ստորաբաժանումների միջև, որոնք համատեղ մշակում, արտադրում և շուկա են դուրս բերում ապրանքներ և ծառայություններ: Տրանսֆերային գնագոյացումը վերաբերում է ապրանքների, ծառայությունների կամ գույքի օգտագործման համար հարակից կողմերի միջև գանձվող վճարների սահմանմանը, վերլուծությանը, փաստաթղթավորմանը և ճշգրտմանը:

Տրանսֆերային գնագոյացման մասին առաջին հիշատակումները հանդիպում են Անգլիայում 19-րդ դարի վերջին: Միջազգային մակարդակով տրանսֆերային գնագոյացման օրենսդրական կարգավորումը առաջին անգամ տեղի ունեցավ 1976 թվականին: Մասնավորապես, ընդունվեցին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմա-

կերպության «Միջազգային ներդրումների և բազմազգ ձեռնարկությունների մասին» հռչակագիրը (1976թ.) և «Տրանսֆերային գնագոյացման և բազմազգ ձեռնարկությունների մասին» ուղեցույցը (1979թ.):

2019 թվականի դրությամբ տրանսֆերային գնագոյացման կարգավորումները ադապտացվել են աշխարհի 124 երկրների կողմից: Այդ կարգավորումները ուղենշային նշանակություն ունեն պետությունների համար՝ առավել թափանցիկ դարձնելու հարկային քաղաքականությունը և ուղղված են ապահովելու ամբողջ աշխարհում տրանսֆերային գնագոյացման արդարությունը և ճշգրտությունը:

Այս համատեքստում առանձնացվում են տրանսֆերային գնագոյացման իրականացման չորս հիմնական պատճառներ.

Հարկային խնայողություն. Տրանսֆերային գնի կիրառման ամենահայտնի խթանը երկրներում գործող հարկային դրույքաչափերի տարբերությունն է: Եթե շահութահարկի դրույքաչափերն ավելի բարձր են B երկրում, քան A երկրում, հետևապես մայր գործարքային ընկերությունը A- ից մատակարարում է B- ի դուստր ձեռնարկություն՝ ձևավորելով առավել քիչ հարկային պարտավորություն:

Շահաբաժնի, ռոյալթիի, վարկի տոկոսագումարի փոխանցում և այլն. Տրանսֆերային գինը միայն մեկն է այն եղանակներից, որով գործարքային կորպորացիաները կարող են միջոցներ փոխանցել:

Փոխարժեքի փոփոխություններ. Տրանսֆերտային գնագոյացումը կարող է հանդիսանալ վերազգային կորպորացիայի դրամական և ֆինանսական կառավարման կարևոր տարր: Երբ ենթադրվում է, որ արժեզրկումն անխուսափելի է, հավանական է, որ կորպորացիան, հնարավորության սահմաններում, տրանսֆերտային գնագոյացման մեխանիզմի միջոցով տեղափոխի շահույթը և կանխիկ մնացորդները երկրից դուրս:

Նպատակային համահունչ որոշում կայացնելը. Ներքին արտադրանք թողարկելը չի կարող լինել ընկերության համար ամենաշահավետ տնտեսական որոշումը: Գնման բաժինը կարող է ի վիճակի լինել ձեռք բերել նմանատիպ ապրանք ավելի ցածր գնով, քան փոխանցման գինը, միևնույն ժամանակ մատակարարող ստորաբաժանումը կարող է օգտագործել կարողությունը՝ ավելի շահավետ գործունեություն իրականացնելու համար:

Մի շարք վերլուծաբաններ տրանսֆերային գնագոյացումը սկզբնական շրջանում մեկնաբանում էին որպես հարկերից խուսափելու մանիպուլյացիա:¹⁹ Վերջինս էլ դարձավ հետևանք այն բանի, որ իսկական «որս» էր սկսվել խոշոր ընկերությունների նկատմամբ: ԱՄՆ Սենատի հետաքննությունը Իռլանդիայի իշխանություններին մեղադրել էր Apple Inc.-ին հարկային հատուկ վերաբերմունք ցուցաբերելու մեջ: ԵՄ

¹⁹ St' u Taibbi Matt (2011): "Corporations to Get Tax Holiday? You're Kidding?", Rolling Stone.

հակամենաշնորհային հանձնակատար Խոսկին Ալմունիան էլ, իր հերթին, նախաձեռնել էր այս խոշոր ընկերությունների (Apple, Google, Starbucks և Fiat) հետաքննությունը՝ պարզելու, թե արդյոք ընկերությունների հարկային գործարքները Իռլանդիայի, Նիդերլանդների և Լյուքսեմբուրգի հետ անօրինական պետական օգնություն են ենթադրում:²⁰

Վտանգը կայանում է նրանում, որ թվարկված կորպորացիաները որդեգրում են տրանսֆերային գնագոյացման ագրեսիվ ռազմավարություններ՝ շահույթն արհեստականորեն տեղափոխելու այն երկրներ, որտեղ կան ավելի ցածր հարկեր կամ ավելի լավ հարկային արտոնություններ: Վերջիններս նմանատիպ ընկերություններին անարդար առավելություններ են տալիս մրցակիցների նկատմամբ՝ խախտելով ԵՄ հակամենաշնորհային օրենքը:

Ըստ կոնգրեսի գեկույցի՝ Apple ընկերության հարկային գործառնությունների դեկավար Ֆիլիպ Բուլոքը ասել էր, որ ընկերությունը իռլանդական կառավարության հետ համաձայնագրերի միջոցով ստացել էր հարկի իջեցված դրույքաչափ: Մինչդեռ Իռլանդիայի կորպորատիվ հարկի դրույքն արդեն զգալիորեն ցածր էր ԱՄՆ-ի հարկային դրույքաչափից 12,5%-ով: Սակայն վերջին 10 տարիների ընթացքում Apple ընկերությունը վճարել է ընդամենը 2% կամ ավելի ցածր հարկեր՝ իր 74 միլիարդ դոլար օֆշորային եկամտի դիմաց:

Apple, Google, Starbucks և Fiat ընկերությունները շարունակում էին պնդել, որ արտերկրում վճարում են իրենց բոլոր օրինական հարկերը: Միննույն ժամանակ, Իռլանդիան նույնպես հերքել էր ցանկացած մասնակցություն անօրինական գործերին:

Արդյունքում ԵՄ Գլխավոր դատարանի 2020 թվականի հուլիսի որոշումը փաստեց և հաստատեց այն փաստը, որ Apple ընկերության տրանսֆերային քաղաքականությունը ագրեսիվ համարել չի կարելի և ընկերության գործերում պետական անօրինական աջակցություն գոյություն չունի:²¹

Չնայած վերը նշված որոշմանը ԵՄ հակամենաշնորհային հանձնաժողովը անընդհատ վերահսկողություն է իրականացնում ակտիվ տրանսֆերային գնագոյացում իրականացվող ընկերությունների նկատմամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա մեր երկրում տրանսֆերային գնագոյացման կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում իրենց կիրառությունն են ստացել 2020 թվականի հունվարի 1-ից: ՀՀ Հարկային օրենսգրքի «Տրանսֆերային գնագոյացման

²⁰ Տե՛ս Duhigg, Charles (April 29, 2012) ["How Apple Sidesteps Billions in Taxes"] New York Times. (Retrieved 4-20-12.).

²¹ Տե՛ս <https://www.internationaltaxreview.com/article/b1n4c5gxmcymbg/a-us-perspective-on-transfer-pricing-and-eu-state-aid>

կարգավորումները» գլուխը նվիրված է վերջինիս կարգավորմանը, որի համաձայն, եթե հարկ վճարողի հարկային տարվա ընթացքում իրականացրած բոլոր վերահսկվող գործարքների հանրագումարը գերազանցում է 200 միլիոն դրամը, ապա վերահսկվող համարվող գործարքների նկատմամբ կիրառվում են տրանսֆերային գնագոյացման կարգավորումները և հարկ վճարողը պարտավորվում է վերահսկվող գործարքների մասին ծանուցում ներկայացնել հարկային մարմին:

Պարզած ձեռքի հեռավորության տիրույթի ստորին սահմանը/շեմը որոշվում է հետևյալ եղանակով՝

- եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.25-ի արտադրյալը ամբողջ թիվ է, ապա նշված ստորին սահմանը պետք է լինի ֆինանսական ցուցանիշի արժեքի՝ այդ արտադրյալին հավասար թվի և նշված արտադրյալին անմիջապես հաջորդող թվից ավելի մեծ թիվ ունեցող ֆինանսական ցուցանիշի արժեքի միջին թվաբանական արժեքը,

- եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.25-ի արտադրյալը կոտորակային թիվ է, ապա նշված ստորին սահմանը պետք է լինի այն ֆինանսական ցուցանիշի արժեքը, որը համարժեք է այդ կոտորակային թվի ամբողջ մասին, գումարած մեկ:

Պարզած ձեռքի հեռավորության տիրույթի վերին սահմանը/շեմը որոշվում է հետևյալ եղանակով՝

- եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.75-ի արտադրյալը ամբողջ թիվ է, ապա նշված վերին սահմանը պետք է լինի ֆինանսական ցուցանիշի արժեքի՝ այդ արտադրյալին հավասար թվի և նշված արտադրյալին անմիջապես հաջորդող թվից ավելի մեծ թիվ ունեցող ֆինանսական ցուցանիշի արժեքի միջին թվաբանական արժեքը,

- եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.75-ի արտադրյալը կոտորակային թիվ է, ապա նշված վերին սահմանը պետք է լինի այն ֆինանսական ցուցանիշի արժեքը, որը հավասար է այդ կոտորակային թվի ամբողջ մասին, գումարած մեկ:

Ենթադրենք՝ ֆինանսական ցուցանիշների արժեքների սկզբնական խումբն է 5%, 7%, 12%, 3%, 1%, 13.25%, 11%, 5%, 6.5%: Արժեքները դասավորվում և համարակալվում են ըստ աճման կարգի:

Ստորին սահմանը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1. Արժեքների թիվը բազմապատկվում է 0.25-ով՝ $9 \times 0.25 = 2.25$

2. Քանի որ ստացված արդյունքը կոտորակային թիվ է, ապա օգտագործվում է այդ թվի ամբողջ մասը՝ 2-ը:

3. Ստորին սահմանի/շեմի համարը (արժեքը) կհաշվարկվի հետևյալ կերպ՝ $2+1=3$

4. Ստորին սահմանը/շեմը հավասար կլինի 3-րդ արժեքին՝ 5%:

Վերին սահմանը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1. Արժեքների թիվը բազմապատկվում է 0.75 -ով՝ $9 \times 0.75 = 6.75$

2. Քանի որ ստացված արդյունքը կոտորակային թիվ է, ապա օգտագործվում է այդ թվի ամբողջ մասը՝ 6 -ը:

3. Ստորին սահմանի/շեմի համարը (արժեքը) կհաշվարկվի հետևյալ կերպ՝ $6+1=7$

4. Ստորին սահմանը/շեմը հավասար կլինի 7 -րդ արժեքին՝ 11% :

Արդյունքում պարզած ձեռքի հեռավորության տիրույթը կլինի 5% -ից 11% :

Հարկման ոլորտում տրանսֆերային գնագոյացման մեխանիզմի գործունեությունը ավելի լավ պատկերացնելու համար ընդունենք, որ գործ ունենք զարգացած (օր.՝ ԱՄՆ) և զարգացող (օր.՝ Հայաստան) պետություններում գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ՝ պայմանականորեն նշելով ABC (մայր ընկերություն) և XYZ (դուստր ընկերություն) համապատասխանաբար: Երկու կազմակերպություններն են զբաղվում են փոքր շարժիչների արտադրությամբ: Ենթադրենք՝ մայր գործարանը, որը գտնվում է տնտեսապես զարգացած երկրում, արտադրում է շարժիչի բոլոր մասերը, իսկ տնտեսապես զարգացող երկրում գտնվող XYZ ընկերությունը միայն հավաքում և կոմպլեկտավորում է ABC-ից ստացված մասերը:

Արտադրական նման սխեման ընտրելու հիմնական շարժառիթը ընկերության հարկային բեռը թեթևացնելն է քանի որ զարգացած երկրում շահութահարկի դրույքաչափը 35% է, իսկ զարգացող երկրում՝ 18% :

Այսպիսով՝ միավոր շարժիչի միջազգային շուկայական գինը $9\ 000$ ԱՄՆ դոլար է, իսկ թողարկման ինքնարժեքը՝ $6\ 000$ ԱՄՆ դոլար ($5\ 400\$$ ՝ շարժիչի մասեր, $600\$$ ՝ փաթեթավորման, կոմպլեկտավորման և տարայավորման ծախսեր):

Եթե շարժիչը ամբողջությամբ կոմպլեկտավորվի մայր գործարանում, ապա շահութահարկի գումարը միավոր շարժիչի հաշվով կկազմի՝

$$(9\ 000 - 6\ 000) \times 35\% = 1\ 050\$:$$

Վերջինս կրճատելու նպատակով ABC մայր ընկերությունը հարկվող բազայի մեծ մասը միտումնավոր տեղափոխում է զարգացող երկրում գործունեություն ծավալող XYZ դուստր ընկերություն՝ միավոր շարժիչի կիսաֆաբրիկատային կոմպլեկտի գծով սահմանելով ընդամենը $5\ 500$ ԱՄՆ դոլար տրանսֆերային գին՝ պատճառաբանելով, որ վաճառում է «կիսատ» արտադրանք»: Ինչի արդյունքում ABC մայր ընկերության ամբողջական պարտավորությունները շահութահարկի գծով կկազմեն.

Երկիր	Հարկային պարտավորություն	Հաշվարկ
Զարգացած	35\$	$(5\,500\$ - 5\,400\$) \times 35\%$
Զարգացող	522\$	$(9\,000\$ - (5\,500\$ + 600\$)) \times 18\%$
Ընդամենը	557\$	35\$ + 522\$

Այս կերպ կազմակերպությունը, կիրառելով տրանսֆերային գին, հնարավորություն է ստեղծում շարժիչի վաճառքի արդյունքում ձևավորվող շահութահարկի պարտավորությունը միավորի հաշվով նվազեցնել 1 050\$-ից մինչև 557\$, քանի որ ավելի բարձր դրույքաչափ ունեցող երկրից (զարգացած) հարկման բազան տեղափոխեց ավելի ցածր դրույքաչափ ունեցող երկիր (զարգացող):

Այսպիսով՝ տրանսֆերային գնով վերազգային կազմակերպությունները շեղվում են հարկման ընդգրկում բազայից: Ներկայացված օրինակում զարգացած երկրում գործող կազմակերպությունը կարող էր իր արտադրանքի թողարկումը ամբողջացնել և արտահանել միջազգային շուկա՝ վաճառքի, բայց այդ ճանապարհը հարկման առումով նախընտրելի չէր: Այդ իսկ պատճառով արտադրանքը միջազգային շուկա հասավ տարանցիկ ճանապարհով՝ տրանսֆերային վաճառքի գին սահմանելով շահութահարկի ցածր դրույքաչափ ունեցող երկրում գործող և գնորդ հանդիսացող դուստր կազմակերպության համար, որն էլ պատրաստի արտադրանքը ամբողջովին վերավաճառեց միջազգային շուկայում, արդեն իսկ շուկայական գներով:

Կատարված ուսումնասիրության հիմնական նպատակն է տրանսֆերային տարբեր գների գործնական կիրառության հիման վրա գնահատել մեթոդները և դրանց կիրառման ազդեցությունը տարբեր բիզնես ռազմավարության վրա: Վերլուծել տարբեր կորպորատիվ ձեռնարկությունների կողմից տրանսֆերային գնագոյացման միջոցով իրականացված հարկային մանիպուլյացիաները՝ համաձայն ՏՀԶԿ ուղեցույցների:

ՏՀԶԿ ուղեցույցները պարունակում են տրանսֆերային գնագոյացման տարեկան փաստաթղթերի ձևավորման լայն պահանջներ և խիստ տույժեր անհամապատասխանության բացահայտման դեպքերում:

Ըստ ուղեցույցների ամենակարևորը **պարզած ձևերի հեռավորության սկզբունքի** պահպանումն է: Փոխկապակցված կողմերի միջև կատարվող բոլոր գործարքները պետք է կատարվեն նշված սկզբունքի պահպանմամբ: Այնուամենայնիվ, բացառիկ դեպքերում ընկերությունը կարող է որոշում կայացնել **չկիրառել պարզած ձևերի հեռավորության սկզբունքը**: Միայն ու միայն այն պարագայում, երբ տնօրենների խորհուրդը, ինչպես նաև աուդիտը հստակ կերպով փաստաթղթավորում են այլ սկզբունք կիրառելու դրդապատճառները և բացահայտում են

վերջինիս ազդեցությունը շահույթի վրա՝ այն ներկայացնելով տարեկան հաշվետվություններում:

Տրանսֆերային գների մանիպուլյացիա (ՏԳՄ). Այն ֆիքսում է շուկայական գնագոյացումը ոչ շուկայական հիմունքներով, ինչը, ընդհանուր առմամբ, հանգեցնում է կազմակերպության հարկի ընդհանուր ծավալի խնայելուն՝ հաշվապահական շահույթը բարձր տոկոսադրույթային հարկային դաշտից ցածր դաշտ տեղափոխելով: Որպես հետևանք կարելի է ասել, որ մեկ երկրի նկատմամբ հարկային պարտավորությունները տեղափոխվում են մեկ այլ երկիր: Տրանսֆերային գնագոյացման հիմքում ընկած է տրանսֆերային գների մանիպուլյացիայի բացահայտումը:

Ենթադրենք՝ առկա է կոշիկի արտադրության ԱԲԳ ձեռնարկություն, որը Հայաստանում ունի դուստր կազմակերպություն: Հայաստանի դուստր ձեռնարկությունը կոշիկ է արտադրում 5000 ՀՀ դրամ ինքնարժեքով և մատակարարում ԱԲԳ կազմակերպություն: ԱԲԳ կազմակերպությունը վաճառում է իր երկրում 20,000 ՀՀ դրամով: Կարող ենք ենթադրել, որ այն տրանսֆերային գինը, որը պետք է ստանա դուստր ընկերությունը հավասար կլինի ինքնարժեքի և ողջամիտ շահույթի գումարին: Ենթադրենք՝ Հայաստանում շահութահարկի տոկոսադրույթը հավասար է 20 տոկոս, իսկ ԱԲԳ կազմակերպության երկրում՝ 35 տոկոս:

Դեպք 1 – ԱԲԳ կազմակերպությունը դուստր կազմակերպությունից որոշում է գնել արտադրանքը 10,000 ՀՀ դրամով՝

	Դուստր կազմակերպություն	ԱԲԳ կազմակերպություն	Ընդհանուր
Ինքնարժեք	5,000	10,000	
Վաճառքի գին	10,000	20,000	
Հասույթ	5,000	10,000	15,000
Հարկ	1,000	3,500	4,500
Զուտ շահույթ	4,000	6,500	10,500

Ընդհանուր առմամբ, ԱԲԳ-ի կողմից վճարված հարկերից հետո ընդհանուր շահույթը (ներառյալ դուստր ձեռնարկությունը) կազմում է 10,500 ՀՀ դրամ մեկ միավորի համար:

Դեպք 2 – ԱԲԳ կազմակերպությունը դուստր կազմակերպությունից որոշում է գնել արտադրանքը 15,000 ՀՀ դրամով՝

	Դուստր կազմակերպություն	ԱԲԳ կազմակերպություն	Ընդհանուր
Ինքնարժեք	5,000	15,000	
Վաճառքի գին	15,000	20,000	
Հասույթ	10,000	5,000	15,000
Հարկ	2,000	1,750	3,750
Զուտ շահույթ	8,000	3,250	11,250

Ընդհանուր առմամբ, ԱԲԳ-ի կողմից վճարված հարկերից հետո ընդհանուր շահույթը (ներառյալ դուստր ձեռնարկությունը) կազմում է 11,250 ՀՀ դրամ մեկ միավորի համար:

Դեպք 3 – ԱԲԳ կազմակերպությունը դուստր կազմակերպությունից որոշում է գնել արտադրանքը 20,000 ՀՀ դրամով՝

	Դուստր կազմակերպություն	ԱԲԳ կազմակերպություն	Ընդհանուր
Ինքնարժեք	5,000	20,000	
Վաճառքի գին	20,000	20,000	
Հասույթ	15,000	0	15,000
Հարկ	3,000	0	3,000
Զուտ շահույթ	12,000	0	12,000

Ընդհանուր առմամբ, ԱԲԳ-ի կողմից վճարված հարկերից հետո ընդհանուր շահույթը (ներառյալ դուստր ձեռնարկությունը) կազմում է 12,000 ՀՀ դրամ մեկ միավորի համար:

Դեպք 4 – ԱԲԳ կազմակերպությունը դուստր կազմակերպությունից որոշում է գնել արտադրանքը 30,000 ՀՀ դրամով՝

	Դուստր կազմակերպություն	ԱԲԳ կազմակերպություն	Ընդհանուր
Ինքնարժեք	5,000	30,000	
Վաճառքի գին	30,000	20,000	
Հասույթ	25,000	-10,000	15,000
Հարկ	5,000	-3,500	1,500
Զուտ շահույթ	20,000	0	13,500

Ընդհանուր առմամբ, ԱԲԳ-ի կողմից վճարված հարկերից հետո ընդհանուր շահույթը (ներառյալ դուստր ձեռնարկությունը) կազմում է 13,500 ՀՀ դրամ մեկ միավորի համար:

Տրանսֆերային գնագոյացման կարևորությունը տարեցտարի աճում է՝ դառնալով հարկման հիմնական միջազգային խնդիրը, որին բախվում են պետությունները: Հատկապես գրավիչ են տրանսֆերային գնագոյացման գործիքները, քանի որ հիմնականում անտեսանելի են հասարակության համար, իսկ դրանց հայտնաբերումը դժվար և թանկ է կարգավորող մարմինների համար:

Այս գործընթացը կենսական կարևորություն ունի կորպորացիաների համար, քանի որ էական ազդեցություն է ունենում հատվածային, ողջ արտադրանքի և համաշխարհային շահույթների վրա: Այն կարևոր է նաև ֆոնդային շուկաներում. քանի որ ազդում է շահաբաժնի, բաժնետոմսի գնի և կապիտալի վերադարձի վրա: Տրանսֆերային գնագոյացումը կարևոր է նաև պետության համար, քանի որ վերջինս ազդում է այն հարկերի վրա, որը պետությունը կարող է գանձել կազմակերպություններից:

Տրանսֆերային գնագոյացումը, ինչպես գիտությունն ու տեխնոլոգիան, չեզոք երևույթ է: Դրա օգտագործումը կամ նույնիսկ չարաշահումը, չի կարելի համարել ակնհայտ հանցագործություն: Տրանսֆերային գնագոյացումն ապօրինի գործողություն չէ. դա կարող է իրականացվել զուտ բիզնես նկատառումներից ելնելով՝ առանց կառավարությանը կամ որևէ շահագրգիռ կողմին խաբելու կանխամտածված փորձի: Ուստի տրանսֆերային գնագոյացումը սովորաբար ընկալվում է որպես թույլատրելի և սովորական պրակտիկա, և ոչ թե հարկերից խուսափելու գործիք: Իսկ ինչ վերաբերում է տրանսֆերային գների մանիպուլյացիային, ապա այն իրենից ենթադրում է տարբեր մեթոդներ, որոնց օգտագործմամբ կազմակերպությունները շահույթը հարկային բարձր տոկոսադրույք ունեցող երկրից տեղափոխում են ցածր տոկոսադրույք ունեցող երկիր, այդ երկրներում ստեղծում են դուստր ձեռնարկություններ, որոնք օգտագործվում են խոշոր ընկերությունների կողմից հարկերից խուսափելու և նրանց ընդհանուր շահույթն ավելացնելու համար:

Ուսումնասիրությունից հասկանում ենք, որ

- կան շատ գործոններ, որոնք ազդում են տրանսֆերային գնագոյացման վրա, և տրանսֆերային գնագոյացումն ինքնին շատ ընդգրկուն թեմա է, և լավ հետազոտություն կատարելու համար տարիներ են պահանջվում:
- դեռևս հստակեցված չեն ճշգրիտ մեթոդները՝ ընկերության կողմից արտասահմանյան փոխկապակցված ձեռնարկությանը վաճառված ապրանքներն ու ծառայությունները գնահատելու համար:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Վերջին տասնամյակում տրանսֆերային գնագոյացումը դարձել է էական խնդիր ավելի լայն բիզնես լսարանի համար: Այն ներկայացվում է որպես մի խումբ սուբյեկտների, ստորաբաժանումների, դուստր ձեռնարկությունների և համատեղ ձեռնարկությունների միջև ծախսերի և եկամուտների օպտիմալ բաշխման մեթոդ, որը հնարավորություն է տալիս ընկերություններին խուսափել հարկերից և նպաստել կապիտալի թռիչքին: Տրանսֆերային գնագոյացումը հետևողականորեն իրենից ենթադրում է մասնավոր շահերի մեծացման հնարավորություն, դրանով իսկ նպաստելով հարաբերական սոցիալական աղքատացմանը՝ խուսափելով պետական հարկերի վճարումից: Էապես տարբերվելով շուկայական ավանդական գնագոյացումից՝ այն հետապնդում է միջխմբային շահեր: Ընկերությունների համար հաճախ միջգերատեսչական գների շահարկման միջոցով ընդհանուր հարկային բեռը նվազեցնելու խթան կա: Հարկային մարմինները ցանկանում են ապահովագրել, որ համաձայնեցված գինը համարժեք լինի պարզած ձեռքի հեռավորության սկզբունքով հաշվարկված գնին՝ հարկային եկամուտների կորուստը կանխելու համար:

Առաջարկում ենք մշակել մեխանիզմներ՝ հարկերի դրույքաչափերի տարբերությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ, որպեսզի նվազեցվի բիզնեսի շահույթի փոխանցման դրդապատճառը: Անհարժեշտ է, որ կառավարությունն էլ, իր հերթին, հետևողականորեն ստուգի, թե արդյոք տրանսֆերային գնագոյացման մեջ ներգրավված ընկերությունները պահպանում են տրանսֆերային գնագոյացման ուղեցույցները, որոնք գտնվում են պարզած ձեռքի հեռավորության տիրույթում և այլն: Եթե ոչ, ապա պետք է սահմանվեն վարչական տուգանքներ:

Հիմնաբաներ. տրանսֆերային գին, պարզած ձեռքի հեռավորության տիրույթ, հարկային մանիպուլյացիա, տարանցիկ ճանապարհ, վերին/ստորին սահման/շեմ

Օգտագործված գրականություն

1. "The Year in Review: The Year of the Many Arm's-Length Standards", 85 Tax Notes Int'l 25, 2017.
2. OECD Guidelines 6. 1-6. 39.
3. Taibbi Matt (2011): ["Corporations to Get Tax Holiday? You're Kidding?"](#), Rolling Stone.
4. Duhigg, Charles (April 29, 2012)[["How Apple Sideste](#)
5. ՀՀ հարկային օրենսգիրք
6. Billions in Taxes"] New York Times.(Retrieved 4-20-12.).

ТРАНСФЕРТНОЕ ЦЕНООБРАЗОВАНИЕ И ЕГО ВЛИЯНИЕ НА БИЗНЕС ПРОЦЕССЫ

Лилит Мирзоян
АГЭУ, магистр экономики

Сона Степанян
АГЭУ, магистр экономики

Арман Амбарцумян
АГЭУ, магистр экономики

За последнее десятилетие трансферное ценообразование стало серьезной проблемой для более широкой деловой аудитории. Он представлен в качестве метода расходов между группой организаций, подразделениями, дочерними и совместными предприятиями, которая позволяет компаниям избежать налогов, и дает возможность роста капитала. Трансферная цена подразумевает возможность повысить частные интересы, что способствует социальному обнищанию, избегая государственных налогов. Значительно отличаясь от традиционных рыночных цен, он преследует интервальные интересы. Компании часто стремятся к снижению общего налогового бремени посредством манипулирования межведомственных цен. Налоговые органы для предотвращения потерь налоговых доходов пытаются застраховаться так, чтобы согласованная цена была эквивалентна цене, образованной по принципу протянутой руки.

Таким образом, предлагается создать механизмы для минимализации разниц налоговых ставок, что уменьшит стремление бизнеса к передаче доходов. В то же время правительство должен систематично контролировать организации, которые вовлечены в трансферное ценообразование, для того, чтобы те в свою очередь придерживались правил и руководствам по трансферному ценообразованию. В противном случае могут применяться административные меры.

Ключевые слова: трансферная цена, диапазон расстояний вытянутой руки, налоговые манипуляции, транзитная дорога, верхний и нижний порог

TRANSFER PRICING AND ITS IMPACT ON BUSINESS PROCESSES

Lilit Mirzoyan
ASUE, Master of Economics

Sona Stepanyan
ASUE, Master of Economics

Atman Hambardzumyan
ASUE, Master of Economics

Over the past decade, transfer pricing has become a significant issue to the broader business audience. It is portrayed as a technique for optimal allocation of cost and revenues amongst divisions, subsidiaries and joint ventures within a group of related entities such practice of transfer pricing simultaneously acknowledge and include how it is deeply implicated in process of wealth retentiveness that enable the companies to avoid taxes and facilitate the flight of capital. Transfer pricing practices are responsive to opportunities for determining values in way that are consequential for enhancing private gains and thereby contributing to relative social impoverishment, by avoiding the payment of public taxes. Significantly different from traditional market pricing, it pursues interval interests. For companies, there is often a stimulus to reduce the total tax burden through the manipulation of interdepartmental prices. The tax authorities want to insure that the agreed price is equivalent to the price calculated on the basis of the popular hand distance to prevent tax revenues.

Thus, it is proposed to create mechanisms to minimize the differences in tax rates, which will reduce the desire of businesses to transfer income. At the same time, the government must systematically monitor organizations that are involved in transfer pricing to ensure in turn adhere to the transfer pricing rules and guidelines, otherwise administrative measures may be applied.

Key words: transfer price, arm's length range, tax manipulation, transit road, upper and lower threshold

Ներկայացվել է՝ 25.07.2021 թ.

Ընդունվել է՝ 05.09.2021 թ.

ԱՌԻԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Աստղիկ Պողոսյան


Հյուսիսային համալսարանի հայցորդ

ast.poghosyan@gmail.com

Բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի ֆինանսական վերահսկողության շահառուների շրջանակն ընդգրկում է: Մի կողմից, պետությունը բյուջեից միջոցներ տրամադրելով բուհի ֆինանսավորմանը, վերահսկողություն է սահմանում դրանց նպատակային օգտագործման գործընթացի վրա, մյուս կողմից, բուհի վարչակազմը ձգտում է վերահսկողության միջոցով կառավարելի դարձնել համալսարանների ներսում ֆինանսների վերաբաշխման և արդյունավետ օգտագործման գործընթացը: Եվ վերջապես, ուսանողները հետաքրքրված են, թե ինչպես և ինչ ուղղություններով են ծախսվում իրենց կողմից կատարվող կրթավճարները: Բնականաբար, եթե բուհի ռեկտորների տարեկան հաշվետվություններում բարձրաձայնվում են վերոնշյալ հարցադրումների պատասխանները, այնուամենայնիվ, այդ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը ենթարկվում է թե՛ արտաքին, և թե՛ ներքին աուդիտի:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային պրակտիկայում գրեթե բացակայում է միայն հանրային ռեսուրսներով մասնագիտական կրթության ֆինանսավորումը և հիմնականում կիրառվում են ֆինանսավորման դիվերսիֆիկացված աղբյուրներ, որոնցից առանցքային են համարվում ուսանողական վարկերը և ուսանողական ընտանիքների կողմից կատարվող կրթավճարները (տե՛ս գծապատկեր 1.): Այնուհանդերձ, որպես կանոն, զարգացած տնտեսություն ունեցող երկրներում հանրային ռեսուրսները դոմինանտ են համարվում մասնագիտական կրթության ֆինանսավորման համակարգում, քանի որ որակյալ մարդկային կապիտալի ձևավորումը այստեղ համարվում է առաջնահերթություն և գտնվում է պետության հոգածության ներքո:¹

¹ Клячко Т.Л., Модели финансирования высших учебных заведений, <https://cyberleninka.ru/article/n/modeli-finansirovaniya-vysshih-uchebnyh-zavedeniy/viewer>




Գծապատկեր 1. Բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը²

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն մասնագիտական կրթական համակարգին, ապա հարկ է նշել, որ պետական ֆինանսավորումը ՀՆԱ-ի կազմում զգալիորեն զիջում է զարգացած երկրների համանուն ցուցանիշին (տե՛ս գծապատկեր 2.): Եթե մասնագիտական կրթության պետական ծախսերը տնտեսապես զրագացած երկրների ՀՆԱ-ում կազմում են 6-8%, ապա ՀՀ-ում այն չի գերազանցում 3%-ի սահմանագիծը:

Այսինքն՝ մեր հանրապետությունում ձևավորվել է մի իրավիճակ, երբ պետությունը բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման հիմնական բեռը թողնում է մասնավոր ոլորտի վրա, որն էլ բուհերի ֆինանսական վիճակը կախվածության մեջ է դնում ուսանողական կրթավճարներից: Ավելին, վերջին տարիների ՀՀ բյուջեի

² Education at a Glance, How much public and private investment in educational institutions is there, OECD 2011, pp. 296-311

կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա ծախսային մասում կրթական ծախսերի կրճատման միտում է նկատվում (տե՛ս գծապատկեր 2.):



Գծապատկեր 2. Կրթության պետական ֆինանսավորման և կրթական ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)³

Արտաքին աուդիտի, կամ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել աուդիտորին՝ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:⁴ Հետևաբար, այս ոլորտում ֆինանսական վերահսկողությունը սահմանափակվում է հիմնականում հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության մասին եզրակացություն ներկայացնելով: Արտաքին աուդիտի դրական եզրակացությունը հստակ ընդգծում է, որ հրատարակված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները էական սխալներ չունեն և արժանահավատ են՝ ողջամտության գնահատման սահմաններում:

Սակայն, ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակը շատ ավելի ընդգրկում է, որն արդեն իր գործնական կիրառումն է գտնում ներքին աուդիտի մեջ: Ընդ որում, ներքին աուդիտի են ենթարկվում կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները:⁵

³ ԱՎԾ պաշտոնական կայք, //armstat.am

⁴ Տե՛ս «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդ. 7, 2002 թվ.:

⁵ Տե՛ս «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը, 2010թ., հոդված 4:

Համաձայն ՀՀ օրենսդրության, ներքին աուդիտի կարևորագույն գործառնություններն են հանդիսանում.

- կազմակերպության ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտումը, գնահատումը և կառավարումը,
- տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառնությունների վերահսկումը,
- տեղեկությունների վստահելիություն և ամբողջականության ապահովումը,
- կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիության ապահովումը,
- առաջադրանքների կատարումը և նպատակների իրագործման մշտադիտարկումը:⁶


Հետևաբար, ներքին աուդիտը նախ և առաջ պետք է դիտարկել որպես գնահատման գործունեություն, որը ստեղծվում է կազմակերպության ներսում, կամ տրամադրվում է կազմակերպությանը՝ որպես ծառայություն: Գործունեության գործառնությունները, ի թիվս այլ գործառնությունների, ներառում են ներքին վերահսկողության համակարգի համապատասխանության և արդյունավետության ուսումնասիրությունը, գնահատումը և մոնիտորինգը:⁷

Ներքին աուդիտի նպատակները որոշվում են ղեկավարության և, անհրաժեշտության դեպքում, կառավարման պարտականություններ կրողների կողմից: Չնայած նրան, որ ներքին աուդիտի և արտաքին աուդիտորի նպատակները տարբեր են՝ որոշ միջոցներ, որոնցով ներքին աուդիտը և արտաքին աուդիտորը հասնում են իրենց համապատասխան նպատակներին, կարող են համընկնել:⁸

⁶ Տե՛ս «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը, 2010թ., հոդված 6, կետ 2:

⁷ Տե՛ս Աուդիտորական միջազգային ստանդարտ թիվ 610 «Ներքին աուդիտորների աշխատանքի օտագործումը», կետ 7:

⁸ Տե՛ս Աուդիտորական միջազգային ստանդարտ թիվ 610 «Ներքին աուդիտորների աշխատանքի օտագործումը», կետ 3:



Գծապատկեր 3 Աուդիտի գործառնական համընդհանուր շրջանակը կազմակերպություններում⁹

Աուդիտի գործառնական համընդհանուր շրջանակը ներկայացված է գծապատկեր 1-ում: Բուհական համակարգում դրանք գնում են իրենց կիառությունը, սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աուդիտի կազմակերպման առումով դեռևս ոլորտում առկա են որոշ հիմնախնդիրներ, որոնք հիմանականում առնչվում են ֆինանսական վերահսկողության բարելավման ուղղություններին:

Նախ և առաջ, ներկայումս բուհերում իրականացվող ներքին և արտաքին աուդիտորական գործունեությունում նկատվում է ոչ սերտ առնչություն և վերահսկողության համակարգում փորձեր չեն արվում մեկը մյուսով լրացնելու ուղղությամբ: Սակայն, ինչպես նշված է աուդիտորական միջազգային ստանդարտում, կազմակերպության ներքին աուդիտը օգտակար կարող է լինել արտաքին աուդիտի համար, եթե ներ-

⁹ Կազմված է հեղինակի կողմից:

քին աուդիտի գործառնության պարտականությունները և գործունեության բնության առնչվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության հետ, և աուդիտորն ակնկալում է օգտագործել ներքին աուդիտորի աշխատանքը:¹⁰

ՀՀ բուհերում արտաքին աուդիտ իրականացնելիս, հիմնականում շեշտադրում է կատարվում միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների կազմման համապատասխանատվության վրա, առավել նվազ ուշադրություն դարձնելով ֆինանսական հոսքերի նպատակայնության, արդյունավետ օգտագործման ոլորտների վրա: Սակայն, աուդիտորական միջազգային ստանդարտներն արդեն իսկ պահանջում են, որ արտաքին աուդիտորի ընթացակարգերի բնության, ժամանակացույցի կամ ծավալի վրա ներքին աուդիտորների աշխատանքի ազդեցությունը որոշելու համար՝ արտաքին աուդիտորը պետք է հաշվի առնի:

(ա) ներքին աուդիտորների կողմից իրականացվող կամ իրականացվելիք առանձնահատուկ աշխատանքի բնությոը և շրջանակները,

(բ) գործարքների, հաշիվների մնացորդների և բացահայտումների որոշակի դասերի համար էական խեղաթյուրման գնահատված ռիսկերը՝ հավաստման մակարդակում,

(գ) ներքին աուդիտորների կողմից՝ համապատասխան հավաստումների հիմնավորման համար հավաքագրված աուդիտորական ապացույցների գնահատման սուբյեկտիվության աստիճանը:¹¹

Մեր կարծիքով, բուհերի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի կազմակերպման բարելավման ուղիներից է հանդիսանում վերահսկողության նպատակադրումներով հաշվետվողականության համակարգի արդյունավետության բարձրացումը: Համալսարանների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունները հիմնականում չեն ապահովում հետադարձ կապ դրանք օգտագործող շահառուների միջև: Հիմնականում պարզ չի դառնում, թե որ ստորաբաժանումներում է թույլ տրվում ֆինանսական ռեսուրսների անարդյունավետ օգտագործում, ինչպիսի ֆինանսական պատասխանատվության կենտրոններ են գործում բուհերում, ինչպես են վերհանում տնտեսող, արդյունավետ գործառնությունները, ինչպես են գործում ֆինանսական ռիսկերի կանխարգելման համակարգերը (տե՛ս գծապատկեր 3):

Հիմնախնդիր է նաև բուհական համակարգում ֆինանսական վերահսկողության մշտադիտարկման արդյունավետ գործիքակազմի

¹⁰ Տե՛ս Աուդիտորական միջազգային ստանդարտ թիվ 610 «Ներքին աուդիտորների աշխատանքի օտագործումը», կետ Ա1:

¹¹ Տե՛ս Աուդիտորական միջազգային ստանդարտ թիվ 610 «Ներքին աուդիտորների աշխատանքի օտագործումը», կետ 10:

կիրառումը: Արտաքին աուդիտն իրականացվում է տարին մեկ անգամ, իսկ եթե բուհերում գործում ֆինանսական հոսքերի ներքին աուդիտ, ապա այն հիմնականում իրականացնում է կրթավճարների հավաքագրման և նախահաշվային ծախսերի իրականացման ոլորտներում՝ ոչ օպերատիվ հաճախականությամբ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Որպես ֆինանսական վերահսկողության բարելավման ուղի ենք համարում ներքին աուդիտի աջակցությամբ բուհերում ըստ պատասխանատվության կենտրոնների անբարենապաստ շեղումների հայտնաբերման և արձանագրման տեղեկատվական հոսքերի ներկայացումը, որոնք ձևավորվում են ոչ թե որոշակի պարբերականության, այլ անընդհատության սկզբունքով: Նման պարագայում, հնարավորություն է ստեղծվում բուհերում իրականացնելու օպերատիվության հենքով ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում, և դրանով իսկ ժամանակին բացահայտելու գիտակրթական գործունեության ծառայությունների մատուցման ֆինանսական շղթայի թույլ օղակները, հրատապ միջոցներ ձեռնարկելու դրանց վերացման ուղղությամբ:

Հիմնաբառեր. բարձրագույն մասնագիտական կրթություն, աուդիտ, պատասխանատվության կենտրոններ, հաշվետվողականություն, գիտակրթական ծառայություններ

Օգտագործված գրականություն

1. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդ. 7, 2002 թվ.:
2. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքը, 2010թ., հոդված 4:
3. Աուդիտորական միջազգային ստանդարտ թիվ 610 «Ներքին աուդիտորների աշխատանքի օտագործումը», կետ 7:
4. Հուլուրյան Ա., Հաշվապահական հաշվառում, ուս. ձեռ., «Տնտեսագետ», 2009
5. Клячко Т.Л., Модели финансирования высших учебных заведений, <https://cyberleninka.ru/article/n/modeli-finansirovaniya-vysshih-uchebnyh-zavedeniy/viewer>
6. Education at a Glance, How much public and private investment in educational institutions is there, OECD 2011, pp. 296-311

ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ АУДИТА В ВУЗАХ

Астхик Погосян

Соискатель, Северного университета

В качестве способа улучшения финансовой отчётности в вузах, посредством проведения внутреннего аудита в статье рассматривается внедрение информационных потоков для выявления и учета неблагоприятных отклонений по центрам ответственности, которые формируются не на регулярной, а на непрерывной основе. В таком случае, в вузах создается возможность организовать оперативную финансовую отчётность, тем самым, выявляя слабые звенья в финансовой цепочке научно-образовательных услуг и принимая срочные меры по их устранению.

Ключевые слова: высшее профессиональное образование, аудит, центры ответственности, финансовая отчётность, научно-образовательные услуги

AUDIT ORGANIZING ISSUES IN HIGHER EDUCATION INSTITUTIONS

Astghik Poghosyan

PhD student, Northern University

As a way to improve financial reporting, the article proposes the introduction of information flows to detect and record unfavourable deviations in HEIs with the support of internal audit, which are formed not on a regular but on a continuous basis. In such a case, it is possible to organize internal financial reporting on the basis of operativeness, thus identifying the weak points in the financial sector of scientific-educational services, and taking urgent measures to eliminate them.

Key words: tertiary education, audit, responsibility centres, financial statement, scientific and educational services

Ներկայացվել է՝ 02.09.2021 թ.

Հնդմանվել է՝ 18.10.2021 թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԶԱՓՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Վահան Գևորգյան

Հյուսիսային համալսարանի հայցորդ

gevorgyan_vahan@yahoo.com

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատումը փոխառնչվում է մի շարք մեթոդաթափանցական հիմնախնդիրների հետ: Համալսարանները ձևավորելով ֆինանսական պաշարներ և դրանք կիրառելով կրթական ծառայությունների մատուցման ոլորտում, հետմուտ են լինում մի շարք խնդիրների, որոնց լուծումներից է կախված ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության գնահատումը:

Նախ և առաջ, բուհերի գործունեության արդյունավետությունը պետք է դիտարկել հանրային շահերի տեսանկյունից: Կրթական ծառայությունների մատուցումից պետությունն ակնկալում է ստանալ ոչ միայն որակյալ մասնագետներ, այլև մասնագիտական կարողություններով ու հմտություններով օժտված, բանիմաց և հայրերնանվեր քաղաքացիներ: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:¹²

Սակայն, մյուս կողմից, համալսարանները կրթական ծառայություններ մատուցելիս, ունեն ոչ միայն հանրային, այլև մասնավոր շահեր, որոնք պահանջում են առանձնահատուկ մոտեցումներ ցուցաբերել ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործումը գնահատելիս: Այսպես, բուհերը ձգտում են իրենց գործունեության ընթացքում ստանալ նաև առևտրային արդյունքներ, շահույթի աճ, ֆինանսական անհրաժեշտ պաշարների կուտակումներ, որպեսզի կարողանան մրցակցային դիրքեր գրավել գիտահետազոտական աշխատանքների շուկայում, բարելավել մատուցվող կրթական ծառայությունների որակը, լրացուցիչ ֆինանսական ներդրումներ անելով իրենց գործունեությունում:¹³

¹² Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 4, Եր., 1999:

¹³ Տե՛ս Ճուղուրյան Ա., Կիրակոսյան Ն., Խաչատրյան Ն., Մասնագիտական կրթական ծրագրերի կառավարման հիմնախնդիրները, //ԵԱ տարեգիրք, #11, 2019, էջ 44:

Իրենց հերթին, կրթական ծառայությունների առանցքային շահառուներ հանդիսացող շրջանավարտները շահագրգիռ են իրենց մասնագիտական հմտությունների որակով, և ձգտում են ստանալ այնպիսի որակյալ կրթություն, որպեսզի մրցակցային դառնան աշխատաշուկայում: Հենց այս նկատառումներով համալսարանները խնդիր են ունենում, քանի որ դրանք չկարողանալով բավարարել շրջանավարտների սպասումները, աստիճանաբար դուրս են մղվում կրթական ծառայությունների մատուցման մրցակցային շուկայից:¹⁴


Այսպիսով, մասնագիտական կրթական ծառայություններին առնչվող տարբեր շահառուներ, տարբեր սպասումներ ունեն համալսարանական գործունեությունից (որակ, շահութաբերություն, մասնագիտական հմտություններ, համամարդկային և ազգային արժեքամակարգ և այլն), որոնք ասանձնահատուկ մոտեցումներ են պահանջում բուհերի ֆինանսական պաշարների արդյունավետությունը գնահատելիս (տե՛ս գծապատկեր 1):

Ընդհանուր առմամբ, համալսարանների ֆինանսական պաշարների օգտագործումը քննարկվում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, և խնդիր է դրվում է որոշելու, թե արդյոք արդյունավետ են օգտագործվել այդ պաշարները՝ ըստ իրենց նշանակման: Եվ քանի որ կրթության շահառուների սպասելիքները տարբերվում են համալսարանական գործունեությունից, ապա որոշակիորեն բարդանում է հենց ֆինանսական պաշարների արդյունավետության գնահատումը չափելիության տեսանկյունից: Եվ քանի որ ֆինանսական պաշարների օգտագործման հատույցի դրսևորումները ներկայացվում են տարբեր չափիչներով՝ շրանավարտի միջին որակական գնահատական (ՄՈԳ), համալսարանի եկամուտ, գիտահետազոտական գործունեության առևտրայնացում և այլն, ապա անհրաժեշտություն է ծագում այդ չափիչները փոխակերպելու հարաբերական ցուցանիշների և բերելու համադրման դաշտ:

Այս առումով, մեր կողմից առաջարկվում է բուհերի ֆինանսական պաշարների արդյունավետ օգտագործման տարաբնույթ դրսևորումները չափել հարաբերական ցուցանիշներով, ավելի կոնկրետ՝ գործակիցներով, որը հնարավորություն կտա դրանք համադրելի դարձնելու և դրանով իսկ համակցելու մեկ ինտեգրալային ցուցանիշի շրջանակում: Նման դեպքում, գործակցային եղանակով համադրելի կդառնան ֆինանսական միջոցների օգտագործման տարաբնույթ հատույցները գիտակրթական ծառայությունների մատուցման տարբեր ոլորտներում և դրանք համախմբելով, հնարավորություն կստեղծվի գնահատելու մասնագի-

¹⁴ Տե՛ս Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն., Ունակությունների հենքով համալսարանական կրթության ապագան, //Այլընտրանք գիտական հանդես, 2020, ապրիլ-հունիս էջ 144-153:

տական կրթական ծառայությունների մատուցման գործընթացի բազմաբնույթ էֆեկտը:




Գծապատկեր 1 Մասնագիտական կրթության առանցքային շահառուների սպասումները համալսարանական գործունեությունից¹⁵

Ֆինանսական պաշարների օգտագործման հարաբերական մեծություններով արդյունավետության համակցված ցուցանիշի ձևավորումը առաջարկում ենք իրականացնել փոխկապակցված մի քանի փուլերով (տե՛ս գծապատկեր 2):

Առաջին փուլում սահմանվում են մասնագիտական գիտակրթական ծառայությունների գործընթացին առնչվող շահառուների սպասումներն ու նպատակադրումները, որոնք կարող են ձևավորվել ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտում: Ընդ որում, այդ նպատակադրումները կարող են չհամընկնել տարբեր շահառուների մոտ, ուստի և նպատակահարմար են գտնում ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության չափմանը ձևավորել համալիր ու համակողմանի մոտեցում:

¹⁵ Կազմվել է հեղինակը:



Գծապատկեր 2 Ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատման առաջարկվող քայլերը բուհական համակարգում¹⁶

Ֆինանսական պաշարների օգտագործման հարաբերական մեծություններով արդյունավետության համակցված ցուցանիշի հաշվարկի երկրորդ փուլում իրականացվում է բուհի գործունեության գիտակրթական գործունեության փաստացի և նպատակադրված արդյունքների համադրում ըստ աանձին ուղղությունների: Ընդ որում, այդ համադրումն իրականացվում է հարաբերական գործակիցների միջոցով, որը հնարավորություն է ստեղծում համեմատելի դարձնելու տարբեր չափիչներով հանդես եկող ցուցիչները և դրանք ներկայացնելու միասնական գործակիցների տեսքով: Այս դեպքում, որքան այդ գործակիցները մոտենան մեկին, այդքան արդյունավետ կհամարվեն ֆինանսական պաշարների նպատակային օգտագործումները գիտակրթական գործունեություն իրականացնելիս: Իսկ որքան հեռանան հաշվարկած գործակիցների շեղումները մեկից, ապա այդքան ցածր կգնահատվի ֆինանսական պաշարների օգտագործման հատույցը բուհերի գիտակրթական գործունեության այս կամ այն ոլորտում:

Ֆինանսական պաշարների արդյունավետության չափման վերջին փուլում արդեն իսկ կառուցվում է ինտեգրալային ցուցանիշը կոտորակի

¹⁶ Կազմել է հեղինակը:

տեսքով, որը ցույց է տալիս ֆինանսական պաշարների օգտագործումից համախմբված հատույցը: Ընդ որում, արդյունավետությունը բնութագրող ինտեգրալային (E) ցուցանիշի կոտորակի հայտարարը ներկայացնում է ֆինանսական պաշարների ձևավորման նպատակային և փաստացի մեծությունների գործակցային շեղումները, իսկ համարիչը՝ բուհի գիտակրթական գործունեության նպատակային և փաստացի մեծությունների գործակցային շեղումներ:

$$E = \frac{\sum_{i=1}^n (S_{ii}/S_{oi})}{\sum_{i=1}^n (F_{ii}/F_{oi})} \quad (1)$$

որտեղ.

F_{ii} - ֆինանսական i -րդ պաշարի փաստացի ծախսն է,

F_{oi} - ֆինանսական i -րդ պաշարի նախատեսված ծախսն է,

S_{ii} - գիտակրթական գործունեության փաստացի արդյունքներն են,

են,

S_{oi} - գիտակրթական գործունեության նախատեսված արդյունքներն են:

Այսպես, աղյուսակ 1-ում ներկայացված է բուհի գիտակրթական գործունեությանն ուղղված ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության հաշվարկման տեղեկատվություն, որն օգտագործվում է առաջարկվող (1) բանաձևում: Փաստորեն, ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության մեր կողմից առաջարկվող բանաձևը համադրում է գիտակրթական ծրագրերի իրականացման դրամական ծախսերն ու դրանց հատույցը՝ հասանելիության տեսանկյունից, և որքան բարձր արժեքներ է այն ընդունում, այնքան բարձր է գնահատվում արդյունավետությունը:

Բուհի ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետությունը բնութագրող կոտորակի համարիչը մեծանում է, երբ ֆինանսավորվող կրթական և գիտահետազոտական ծրագրերից ակնկալվող դիվերսիֆիկացված փաստացի արդյունքները մոտենում են իրենց նախատեսված արդյունքներին և ձգտում են մեկին: Իսկ եթե, ֆինանսական պաշարների փաստացի խնայողություն է տեղի ունենում և դրանք շեղվում են իրենց նախատեսված մեծություններից, ապա այդ դեպքում փոքրանում է հայտարարը, արդյունքում մեծացնելով կոտորակի մեծությունը.

$$(1,03+0,91+0,83+0,96) / (0,98+0,93+0,75+0,91) = 1,044$$

Աղյուսակ 1

Գիտակրթական ծառայությունների մատուցման արդյունավետության գնահատման ցուցիչները

Ցուցանիշներ	Նախա-	Փաս-	Հասանելիության
-------------	-------	------	----------------

	տեսված	տացի	գործակից
Հավաքագրված կրթավճարներ (մլն դրամ)	820	800	$800/820 = 0,98$
Ուսանողների թվաքանակը	3420	3550	$3550/3420 = 1,03$
Հետազոտական դրամաշնորհ (մլն դրամ)	73	68	$68/73 = 0,93$
Հետազոտության կատարման աստիճան (%)	100%	93%	$91/100 = 0,91$
Ուսանողների շարժունության ֆինանսավորում (մլն դրամ)	12	9	$9/12 = 0,75$
Ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման աստիճան	100%	83%	$85/100 = 0,83$
Հեռաուսուցման կազմակերպման ֆինանսավորում (մլն դրամ)	54	49	$49/54 = 0,91$
Հեռաուսուցման ներդրման ավարտվածության աստիճան	100%	96%	$96/100 = 0,96$

Հետևաբար, բուհի ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատման մեր կողմից առաջարկվող կոտորակային ցուցիչը որքան բարձր է ստացվում, այնքան արձանագրվում է դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործման բարձր հատույց և արդյունքաբերություն, քանի որ կոտորակի համարիչի ավելացումները վկայում են ֆինանսավորվող գիտակարթական ծրագրերի համախմբված արդյունքների փաստացի հասանելիության բարձր աստիճան, իսկ հայտարարի նվազեցումները՝ ֆինանսական միջոցների տնտեսումների մասին:

Բացի այդ, առաջարկվող մեթոդաբանությամբ հնարավորություն է ստեղծվում գնահատելու նաև գիտակրթական առանձին ուղղությունների ֆինանսավորման արդյունավետությունը, համեմատելով յուրաքանչյուրի համար դրամական պաշարների օգտագործման նախատեսված աստիճանի կատարողականը՝ անկլավոլ հատուցի ձևավորման փաստացի աստիճանի հետ: Եվ որքան մեծ է ստացվում այդ համեմատության աստիճանը, այնքան կոնկրետ ուղղությամբ արդյունավետ է համարվում ֆինանսական պաշարի օգտագործումը:

-կրթավճարների օգտագործման արդյունավետություն $= 1,03/0,98 = 1,05$

-հետազոտությունների ֆինանսավորման

արդյունավետություն $= 0,91/0,93 = 0,97$

-ուսանողների շարժունության ֆինանսավորման

արդյունավետություն $= 0,83/0,75 = 1,11$

-հեռառուսուցման ֆինանսավորման արդյունավետություն $=0,96/0,91 = 1,05$

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այսպիսով, բուհերում ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատման մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս.

Առաջին, ֆինանսավորման տարաբնույթ հատույցների գծով կիրառել միասնական չափայնություն, երբ ֆինանսական պաշարների օգտագործումից տարբեր չափիչներով ստացվող արդյունքների գծով օգտագործելով գործակիցներ՝ ձևավորվում է գնահատման համադրելիության դաշտ և հետևաբար արդյունավետության ինտեգրալային ցուցիչի կիրառման հնարավորություն:

Երկրորդ, հաշվի առնել գիտակրթական ծառայությունների մատուցման շրջանակին առնչվող ներքին և արտաքին շահառուների սպասումները՝ ֆինանսական պաշարների ոչ միայն նպատակային, այլև արդյունավետ օգտագործումների գծով:

Երրորդ, համակցել առանձին ուղղություններով ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության ցուցիչները՝ ինտեգրալային ցուցանիշի հետ, որով կբացահայտվեն առանձին գիտակրթական ծրագրերի ֆինանսավորման հատույցի ձևավորման աստիճանները:

Հիմնաբաներ. ֆինանսական պաշարներ, գիտակրթական ծառայությունների հատույց, պաշարների օգտագործման արդյունավետություն, մասնագիտական կրթության շահառուներ

Օգտագործված գրականություն

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 4, Եր., 1999:
2. Ճուղուրյան Ա., Կիրակոսյան Ն., Խաչատրյան Ն., Մասնագիտական կրթական ծրագրերի կառավարման հիմնախնդիրները, //ԵԱ տարեգիրք, #11, 2019, էջ 44:
3. Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն., Ունակությունների հենքով համալսարանական կրթության ապագան, //Այլընտրանք գիտական հանդես, 2020, ապրիլ-հունիս էջ 144-153:

ИЗМЕРЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ФИНАНСОВЫХ РЕСУРСОВ В УНИВЕРСИТЕТАХ

Ваган Геворгян

Армянский государственный институт физической культуры и спорта,
проректор

В статье предлагается методика оценки эффективности использования финансовых ресурсов в университетах. Это дает возможность принимать во внимание ожидания внутренних и внешних заинтересованных сторон в отношении предоставления научных и образовательных услуг с точки зрения не только целевого, но и эффективного использования финансовых ресурсов. Кроме того, предлагаемая методика позволяет совместить показатели эффективности использования финансовых ресурсов по отдельным направлениям с интегральным показателем, выявляя степень увеличения компенсации финансирования отдельных научно-образовательных программ.

Ключевые слова: финансовые ресурсы, оплата научных и образовательных услуг, ресурсоэффективность, выгодоприобретатели профессионального образования

MEASURING THE EFFICIENCY OF USING FINANCIAL RESOURCES IN UNIVERSITIES

Vahan Gevorgyan

Armenian State Institute of Physical Culture and Sport, Vice rector

The article proposes a methodology for assessing the efficiency of using financial resources in universities. This makes it possible to take into account the expectations of internal and external stakeholders regarding the provision of scientific and educational services in terms of not only targeted but also effective use of financial resources. In addition, the proposed methodology allows to combine the indicators of the efficiency of the use of financial resources in certain areas with an integral indicator, revealing the degree of increase in compensation for financing individual scientific and educational programs.

Key words: financial resources, payment for scientific and educational services, resource efficiency, beneficiaries of professional development

Ներկայացվել է՝ 26.08.2021 թ.

Ընդունվել է՝ 15.10.2021 թ.

**ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ
Արման Գրիգորյան**

Հյուսիսային համալսարան
իրավաբանական գիտությունների թեկնածու
armangrgoryan1996@gmail.com

Հայցային վաղեմության ժամկետը իրենից ներկայացնում է ժամանակահատված, որի ընթացքում անձը, ում իրավունքները խախտվել են, կարող է պահանջել իր իրավունքների հարկադիր իրականացում կամ պաշտպանություն¹:

Իրավունքների հարկադիր պաշտպանության պահանջով հանդես գալու համար նախատեսված այս ժամկետի անվանման մեջ «հայց» եզրույթի գործածումն արդեն իսկ հուշում է, որ խոսքը վերաբերում է խախտված իրավունքի հարկադիր իրականացման կամ պաշտպանության վերաբերյալ պահանջը հենց դատարանին ներկայացնելու ժամկետի մասին:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը*²:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը*³:

Անդրադառնալով հայցային վաղեմության ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը⁴. «Հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով:

¹Տե՛ս Гражданское право. Том 1. Учебник. Издание пятое, переработанное и дополненное./Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого.--- М.: «ПБОЮЛ Л.В. Рожников», 2000 г., ст. 308.

² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998 թ.), ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):

³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (09.04.2018 թ.), ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208:

⁴ Տե՛ս Թիվ ԵՔԴ/0085/02/08, ԵՔԴ/1222/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետը, պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը: Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը հայցը մերժելու հիմք է, անկախ այն հանգամանքից, թե հայցը հիմնավոր է, թե ոչ»

Այսպիսով, հայցային վաղեմության ժամկետը դատարանին պահանջ ներկայացնելու համար անձին տրված ժամանակահատվածն է, որի լրանալուց հետո հայց ներկայացվելու դեպքում պատասխանող կողմի պահանջով այն ենթակա կլինի մերժման ցանկացած պարագայում:

Հայցային վաղեմության ժամկետը լրանալու հետ օրենսդիրը կապում է անձի խախտված նյութական իրավունքի դատական կարգով պաշտպանության հնարավորության կորուստը, այսինքն՝ անձն այլևս չի կարող ապավինել իր իրավունքների դատական կարգով վերականգնմանը:

Պետք է նշել, որ հայցային վաղեմության կիրառումը նշանակություն չունի նյութական իրավունքի ծագման կամ դադարման հարցերում, իսկ դատարանը այդ պարգայում հայցվորի մոտ նյութական իրավունքի առկայության վերաբերյալ գնահատական չի կատարում: Այլ կերպ, հայցային վաղեմության կիրառումը անձի նյութական իրավունքների վավերության կամ գործողության վրա ազդեցություն չունի:

Հայցային վաղեմության ժամկետի ավարտի միակ հետևանքը այն է, որ սուբյեկտիվ իրավունքը կորցնում է պետության կողմից պաշտպանված լինելու հատկանիշը, դրա իրացումը այլևս հարկադրաբար ապահովվել չի կարող: Բուն սուբյեկտիվ իրավունքը չի դադարում, այն ըստ էության պահպանվում է դեռ հռոմեական իրավունքին հայտի «մերկ իրավունքի» (*ius nudum*) տեսքով, որը զրկված է հարկադիր, դատական պաշտպանությունից⁵:

Որպես հավելում նշենք նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դատարան)*²:

Նշված դրույթի ուժով՝ քաղաքացիական օրենսգրքի իմաստով (կարգավորում է հայցային վաղեմության ինստիտուտը) որպես դատա-

⁵ Stéu Российское гражданское право: Учебник: В 2 т. Т. I: Общая часть. Вещное право. Наследственное право. Интеллектуальные права. Личные неимущественные права / Отв. ред. Е.А. Суханов. – 2-е изд., стереотип. – М.: Статут, 2011. ст. 490.

րան պետք է ընկալել ինչպես պետության կողմից սահմանված դատա-
րանները, այնպես էլ արբիտրաժային տրիբունալը:

ՀՀ սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
*Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբեր-
յալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս
հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու
իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա
գործող մարմինների պրակտիկան⁶:*

Նշված կարգավորումից հետևում է, որ հիմնական իրավունքների
վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս պետք է ուշադրության արժա-
նացնել մասնավորապես մարդու իրավունքների եվրոպական դատա-
րանի (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) ձևավորած պրակտիկայի վրա: Ելնելով
ասվածից՝ հետագա շարադրանքում անշրաժեշտաբար կներկայացնենք
նաև ՄԻԵԴ պրակտիկան, և հաշվի կառնենք դրանք կատարվելիք
եզրակացություններում:

ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի
արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության
իրավունք:*

Նույնաբովանդակ ձևակերպում է պարունակում նաև «մարդու
իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մա-
սին» կոնվենցիայի (այսուհետ՝ նաև մարդու իրավունքների եվրոպական
կոնվենցիա, Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը: Նշված դրույթը
փաստորեն որպես մարդու հիմնական իրավունք է ամրագրում անկախ և
անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և
ողջամիտ ժամկետում քննության հնարավորությունը:

ՄԻԵԴ-ը, մեկնաբանելով հիշյալ դրույթը կոնվենցիոն իրավունքնե-
րի արդյուավետության պահանջի տեսանկյունից, իր մի շարք որոշում-
ներում արձանագրել է, որ արդար դատաքննության իրավունքի բաղադ-
րատարը է հանդիսանում դատարանի մատչելիությունը (access to the
court): ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահ-
մանված արդար դատաքննության երաշխիքները (արդարացի, հրապա-
րակային քննություն ողջամիտ ժամկետում) անօգուտ կլինեն, եթե հնա-
րավոր չլինի առաջին հերթին սկսել դատական քննությունը⁷:

Այսպիսով, արդար դատաքննության իրավունքը ոչ միայն վերա-
բերում է արդեն իսկ հարուցված դատական վարույթի ընթացքում անձի

⁶ Հայաստանի Հանրապետության 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով
սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում Հոդ. 1118:

⁷Sté u B. Rainey, P. McCormick & C. Ovey; Jacobs, White and Ovey: The European
Convention on Human Rights, New York: Oxford University Press, 8th edition, 2021, 288
p.

համար համապատասխան պայմանների երաշխավորմանը, այլև առաջին հերթին իրավունքների պաշտպանության համար դատարանին դիմելու հնարավորությամբ:

Ինչպես նշվեց, հայցային վաղեմությունը հանդիսանում է դատարանին ներկայացված հայցը մերժելու առանձին հիմք, որի կիրառման դեպքում գործի քննություն չի իրականացվում: Սա նշանակում է, որ անձը ըստ էության զրկվում է դատարանի միջոցով իր իրավունքների պաշտպանության հնարավորությունից: Թեև հայցային վաղեմության ժամկետի լրացումն ինքնին հիմք չէ ներկայացված հայցադիմումի ընդունելը մերժելու համար, սակայն հարուցված վարույթի ընթացքում անգամ հայցային վաղեմության կիրառումը նշանակում է պետության հրաժարումը անձին տրամադրելու դատական պաշտպանություն:

Վերը նշվածից հետևում է, որ հայցային վաղեմության կիրառումը հանդիսանում է անձի արդար դատաքննության հիմնական իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակող միջոց, որի գործածման արդյունքում անձը զրկվում է դատական պաշտպանությունից:

Հայցային վաղեմության սահմանումը կոչված է նպաստելու քաղաքացիական շրջանառությունում անկայունության և անորոշության վերացմանը, քանի որ դատական պաշտպանություն հայցելու համար որոշակի ժամկետի բացակայությունը թույլ կտար իրավատիրոջը իրավախախտին մշտապես պահել պետական հարկադրանքի կիրառման սպառնալիքի տակ: Բացի դրանից՝ իրավունքի խախտման մասին իմանալուց հետո դատարան դիմելու տևական հապաղումը կարող է առաջացնել պատասխանողի կողմից իր առարկությունների հիմնավորմանն ուղղված ապացույցներ ներկայացնելու դժվարություններ⁸:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում հայցային վաղեմության կիրառումը ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի՝ դատարանի մատչելիության իրավունքի (access to court), իրավաչափ սահմանափակում՝ նշելով, որ դրա նպատակն է իրավական որոշակիության և վերջնականության ապահովումը, հնարավոր պատասխանողներին հնացած և հետևաբար դժվարությամբ վիճարկելի պահանջներից պաշտպանությունը, անարդար որոշումների նախականիումն այն դեպքերում, երբ դատարանից պահանջվի լուծել պահանջը վաղ անցյալում տեղի ունեցած փաստերի հաստատման միջոցով և այնպիսի ապացույցներով, որոնք զգալի ժա-

⁸ Տե՛ս Մարկոսյան Տ, Հայցային վաղեմության ինստիտուտը դատավարական խնայողության սկզբունքի համատեքստում: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու 2(2) 2018, Երևան, 2019 թ, էջ 250:

մանակ անցնելու պատճառով այլևս անարժանահավատ կամ ոչ ամբողջական են դարձել⁹:

Ներկայացվածն ամփոփելով՝ կարող ենք նշել, որ հայցային վաղեմության ինստիտուտի սահմանմամբ պետությունը ձգտում է սպառել բոլոր այն վեճերը, որոնց լուծմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները շահագրգիռ անձինք ողջամիտ ժամկետում չեն ձեռնարկում՝ թողնելով դրանք առկախված, ինչն էլ վերջնաբայությունում հանգեցնում է իրավական անորոշության, էականորեն վնասում պատասխանող կողմի ու երրորդ անձանց օրինական շահերը:

ՄԻԵԴ-ն իր մի շարք վճիռներում արձանագրել է, որ դատարանի մատչելիության իրավունքը բարցարձակ բնույթ չունի և պետության կողմից կարող է ենթակա լինել որոշակի սահմանափակումների, որոնք սակայն պետք է չխաթարեն հիմնական իրավունքի բուն էությունը, հետապնդեն իրավաչափ նպատակ, ինչպես նաև ապահովվի անհրաժեշտ համաչափությունը կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև:

Իր հերթին ՀՀ սահմանադրական դատարանը, հղում կատարելով նաև ՄԻԵԴ վճիռներին, արձանագրել է, որ «հայցային վաղեմության ինստիտուտը կողմերից մեկի դիտանկյունից հանդես է գալիս որպես դատարան դիմելու իրավունքի սահմանափակում՝ դատավարական կոնկրետ կանոնի հիմքով, որը, միևնույն ժամանակ, համապատասխանում է իրավունքի սահմանափակման իրավաչափության վերը նշված չափանիշներին:¹⁰»

Այսպիսով փաստում ենք, որ հայցային վաղեմության կիրառումը հանդիսանում է դատարան դիմելու, և հետևաբար արդար դատաքննության սահմանադրական իրավունքի սահմանափակում:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թ. տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում որդեգրված իրավակարգավորումն այնպիսին է, որ հիմնական իրավունքների կամ ազատությունների սահմանափակման դեպքերը հենց հատուկ սահմանվում են առանձին հիմնական իրավունքները կամ ազատությունները ամրագրող դրույթներով: Որոշակի հիմնական իրավունքի սահմանափակման համար անհրաժեշտ է, որպեսզի դրա հնարավորությունը Սահմանադրությամբ առանձին նախատեսված լինի:

Այլ կերպ, կարելի է նշել, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվել է հիմնական իրավունքների ընդհանուր սահմանափակումներից (ինչպես 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության

⁹ *Sanofi Pasteur c. France*, no. 25137/16, §50, ECHR 2020.

¹⁰ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 28.09.21 կայացված թիվ ՄԴՈ-1611 որոշում, կետ 6.2.2 :

43-րդ հոդվածի 1-ին մասում էր)՝ նախատեսելով յուրաքանչյուր իրավունքի սահմանափակման հիմքերն առանձին¹¹:

Սահմանադրության 2-րդ գլխի վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

1) մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները բաժանված են չսահմանափակվող և սահմանափակվող հիմնական իրավունքների ու ազատությունների: Այսինքն՝ կան իրավունքներ և ազատություններ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որևէ սահմանափակման՝ ոչ մի դեպքում: Օրինակ՝ կյանքի իրավունքը, իրավահավասարության իրավունքը և այլն:

2) Սահմանափակվող հիմնական իրավունքները և ազատությունները կարելի է անվանել Սահմանադրությամբ սահմանված հիմքերով և միայն օրենքով սահմանափակվող իրավունքներ: Սահմանափակման ենթակա հիմնական իրավունքների և ազատությունների համար Սահմանադրությունը կոնկրետ իրավունքը կամ ազատությունն ամրագրող հոդվածում նախատեսում է այդ իրավունքի կամ ազատության սահմանափակման հիմքերը և կարգը¹²:

Պետք է նշել, որ Սահմանադրության 63-րդ հոդվածը չի պարունակում դրույթ, որը սահմանում է արդար դատաքննության իրավունքի սահմանափակման որևէ հնարավորություն, այլ կերպ Սահմանադրությունն ուղղակիորեն չի նախատեսում արդար դատաքննության իրավունքի սահմանափակում:

Այսպես, մի կողմից Սահմանադրությունը չի պարունակում արդար դատաքննության իրավունքի սահմանափակման ուղղակի հնարավորություն, մյուս կողմից օրենսդիրը նախատեսել է հայցային վաղեմության ինստիտուտը, որը, ինչպես ներկայացվեց, հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի սահմանափակում:

Եթե հիմնական իրավունքների սահմանափակման՝ Սահմանադրությունից բխող ընդհանուր կանոնով առաջնորդվենք, ապա ստացվում է, որ արդար դատաքննության իրավունքի երաշխավորման տեսանկյունից հայցային վաղեմության կիրառումը բավականին խնդրահարույց է: Միննույն ժամանակ հայցային վաղեմության ինստիտուտը ճանաչված է զարգացած բոլոր իրավական համակարգերում և հանդիսանում է կարևորագույն նշանակություն ունեցող իրավական ինստիտուտ:

¹¹ Պողոսյան Վ, Սարգսյան Ն; Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, համառոտ պարզաբանումներ, Եր. Տիգրան Մեծ, 2016, էջ 44:

¹² Վաղարշյան Ա, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային եվ ձեկական իրավաբանական մեկնաբանություն): «Բանբեր Երևանի համալսարանի Իրավագիտություն», Երևան, 2017, № 3 (24), էջ 9:

ՄԻԵԴ-ը, մեկնաբանելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքնության իրավունքը, նշել է, որ դատարանի դիմելու իրավունքը բացարձակ չէ, իսկ դրա սահմանափակումը թույլատրելի է ինքնըստինքյան, քանզի դատարանի մատչելիության իրավունքն իր էությունը հենց պահանջում է կարգավորում պետության կողմից: Այդ կապակցությամբ պետություններին տրված է որոշակի հայեցողություն¹³:

Այսպիսով, դատարանի մատչելիության իրավունքի էությունից բխում է, որ դրա բովանդակությունը կարող է կարգավորվել պետության կողմից, և իրավունքի ծավալը ենթակա է պետության կողմից որոշակի սահմանափակումների:

Եթե հայցային վաղեմության ինստիտուտը դիտարկենք ոչ թե որպես բացարձակ բովանդակություն ունեցող իրավունքի սահմանափակում, այլ ընդունենք, որ դատարանի մատչելիության իրավունքի բովանդակությունը կարգավորվում է պետության կողմից և այդ բովանդակությունը չի ենթադրում խախտված իրավունքների դատական պաշտպանության երաշխավորում հայցային վաղեմության ժամկետները լրանալու դեպքում, ապա քննարկող իրավական ինստիտուտի վավերությունը կասկածի տակ դրվել չի կարող:

Այսպիսով, գտնում ենք, որ ոչ թե հայցային վաղեմության ինստիտուտի ներդրումը շեղում է արդար դատաքնության իրավունքից բխող պետության պարտականություններից (իրավունքների սահմանափակում ընդհանուր իմաստով), այլ դատարանի մատչելիության իրավունքից իրավաչափորեն չի բխում անձին դատական պաշտպանության տրամադրումը հայցային վաղեմության ժամկետների լրանալուց հետո:

Ամփոփելով հոդվածում ներկայացվածը՝ նշենք, որ հայցային վաղեմության նախատեսումը հետապնդում է իրավաչափ նպատակ և չի հանգեցնում արդար դատաքնության իրավունքի էության խաթարմանը, չի խախտում համաչափության սկզբունքը: Հայցային վաղեմության ինստիտուտի սահմանումը բխում է դատարանի մատչելիության իրավունքի բովանդակությունը կարգավորելու պետության լիազորությունից և համապատասխանում է Սահմանադրությանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հոդվածը նվիրված է հայցային վաղեմության ինստիտուտի սահմանադրական բովանդակության ներկայացմանը:

Նախ ներկայացվում են հայցային վաղեմության ինստիտուտի ներդրման նպատակները, ապա վերլուծության է ենթարկվում վերջինիս ունեցած սահմանադրաիրավական նշանակությունը:

¹³ *Stubbings and others v. The United Kingdom*, 22 june 1996, § 50, Reports of Judgments and Decisions 1996-III.

Հոդվածի հիմնական առարկան է հանդիսանում հայցային վաղեմության ինստիտուտի և արդար դատաքննության սահմանադրական իրավունքի հարաբերակցության ներկայացումը, ինչպես նաև հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման առկա կառուցակարգի պայմաններում այս ինստիտուտի Սահմանադրությանը համապատասխանության հիմնավորմանը:

Ներկայացված հարցերի քննարկումը, գտնում ենք, կնպաստի այս իրավական ինստիտուտի վերաբերյալ բավարար պատերազմումների ձևավորմանը Սահմանադրության լույսի ներքո:

Հիմնաքառեր. Հայցային վաղեմություն, արդար դատաքննության իրավունք, դատարանի մատչելիություն, իրավունքների սահմանափակում, իրավաչափ նպատակ:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/ Հատուկ թողարկում Հոդ. 1118:
2. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից 28.09.2021 թ. կայացված թիվ ՍԴՈ-1611 որոշում:
3. *Stubbings and others v. The United Kingdom*, 22 june 1996, Reports of Judgments and Decisions 1996-III:
4. *Sanofi Pasteur c. France*, no. 25137/16, §50, ECHR 2020:
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998 թ.), ՀՀՊՏ 1998.08.10/17 (50):
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (09.04.2018 թ.), ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208:
7. Թիվ ԵԲԴ/0085/02/08, ԵԲԴ/1222/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշում:
8. Մարկոսյան Ս., Հայցային վաղեմության ինստիտուտը դատավարական խնայողության սկզբունքի համատեքստում: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու 2(2) 2018, Երևան, 2019 թ., էջեր 250-261:
9. Վաղարշյան Ա., Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավաբանական մեկնաբանություն): «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017, № 3 (24), էջեր 3-16:
10. Պողոսյան Վ., Մարգարյան Ն.: Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ- Եր.: Տիգրան Մեծ, 2016, 448 էջ:

11. Гражданское право. Том 1. Учебник. Издание пятое, переработанное и дополненное./Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого.--- М.: «ПБОЮЛ Л.В. Рожников», 2000 г, 652 ст.

12. Российское гражданское право: Учебник: В 2 т. Т. I: Общая часть. Вещное право. Наследственное право. Интеллектуальные права. Личные неимущественные права / Отв. ред. Е.А. Суханов. – 2-е изд., стереотип. – М.: Статут, 2011. 958 ст.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННЫХ ОСНОВ ИСТИТУТА ИСКОВОЙ ДАВНОСТИ

Арман Григорян

Северный университет
Кандидат юридических наук

Данная статья посвящена представлению сущности института исковой давности. Сперва представлены цели введения института исковой давности, а далее проанализировано конституционно-правовое значение данного правового института.

Основным предметом статьи является представление соотношения института исковой давности и конституционного права на справедливое судопроизводство, о также обоснование соответствия этого правового института Конституции, в условиях действующего механизма ограничения основных прав и свобод.

Изучение данных вопросов, считаем, поможет в формировании достаточных представлений об этом правовом институте в свете Конституции.

Ключевые слова: Исковая давность, право на справедливое судопроизводство, доступность суда, ограничение прав, правомерная цель.

SOME ISSUES OF CONSTITUTIONAL FOUNDATIONS OF THE
LEGAL INSTITUTE OF LIMITATION PERIOD

Arman Grigoryan

Northern University

PhD in Law

The article is devoted to the presentation of the substance of the legal institute of the limitation period.

First, there are presented the aims of the introduction of the institute of limitation period, then it is analysed the constitutional meaning of this legal institute.

The main subject matter of the article is the presentation of the relationship between the constitutional right to a fair trial and the institute of limitation period, as well the substantiation of the compliance of this legal institution with the Constitution under the current mechanism of the restriction of fundamental rights.

The study of these issues, we believe, would help to form sufficient precision on this legal institute in the light of the Constitution.

Key words: Limitation period, right to a fair trial, access to the court, restriction of rights, legitimate aim.

Ներկայացվել է՝ 17.08.2021 թ.

Ընդունվել է՝ 15.09.2021 թ.

Ո՞ՐՆ Է ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վահե Հովհաննիսյան

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ

vadvocate@yahoo.com

Փաստաբանական ինստիտուտը հանդիսացել և հանդիսանում է այն հնագույն ինստիտուտներից մեկը, որը կոչված է պաշտպանելու անձանց իրավունքներն ու իրավաչափ շահերը: Այն պատկանում է հավերժ և ազատ, ինչպես նաև անկախ մասնագիտությունների շարքին: Փաստաբանական ինստիտուտն այն մեխանիզմն է, որի միջոցով անձանց հնարավորություն է տրվում ստանալ որակյալ իրավաբանական օգնություն, ինչը հաստատել է պատմականորեն անցած փաստաբանության ճանապարհը:

«Փաստաբան» բառն առաջացել է լատիներեն «advocare» բառից, որը նշանակում է «օգնության կանչ», սակայն իր ստեղծմամբ փաստաբանությունը «պարտական» է Հին Աթենքին, որտեղ դատական ոլորտում պերճախոսության արվեստը կարևոր դեր էր խաղում, քանի որ դատավորները հանդիսանլով սովորական քաղաքացիներ և ոչ իրավաբաններ, առաջնահերթ ուշադրությունը դարձնում էին դատավիճող կողմերի պերճախոսությանը: Մինչդեռ, անձինք, որոնք չէին տիրապետում պերճախոսության ձիրքին, անձամբ պետք է դատարանում պաշտպանեին իրենց:

Մեր հայրենակից Դ.Սարգսյանը նշում է. «Ինչպես Հին Հունաստանում, այնպես էլ Հին Հռոմում փաստաբանության նախնական ձևը բարեկամական փաստաբանությունն էր, որն աստիճանաբար վերածվեց «պատրոնատի»: Ի դեմս նրանց երկու մասնագիտություն՝ իրավախորհրդատուի և փաստաբանի, համատեղվում էին: Նրանք ոչ միայն դատարանում պաշտպանում էին իրենց հաճախորդի իրավունքները, այլ նաև մեկնաբանում էին օրենքներ և իրավաբանական խորհուրդներ տալիս: ...»¹⁴:

Փաստաբանության ինստիտուտի ստեղծման նպատակն անձի իրավունքների և իրավաչափ շահերի, վերջին հաշվով նաև հասարակության շահերի պաշտպանությունն է, քանի որ յուրաքանչյուր անձ հասարակության մի մասն է կազմում: Հասարակության զարգացման սկզբնական փուլում դատավարության կողմերը հնարավորություն են ունեցել անձամբ, առանց կողմնակի օգնության վարելու իրենց գործերը, քանի որ իրավական նորմերն այնքան պարզ ու հասարակ էին, որ կարող էին

¹⁴ Տե՛ս Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի հայցորդ Դ.Սարգսյանի ատենախոսության սեղմագիր, Երևան 2012, էջ 14-15:

http://www.rau.am/uploads/blocks/0/6/627/files/627_10_davidsargsyan_arm.pdf

ընկալվել յուրաքանչյուրի կողմից: Սակայն, հասարակության զարգացման հետ մեկտեղ հարաբերությունները դառնում են բազմաբնույթ, խրթին, բարդանում են նաև համապատասխան հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը: Եվ դատավարության մասնակիցները, առանց հատուկ պատրաստության, ի վիճակի չեն լինում անձամբ վարելու իրենց գործերը: Նրանք կարիք էին զգում այնպիսի մի անձի օգնության, որն առավել քաջատեղյակ է իրավունքին և դատավարության ձևերին: Սկսում է զգացվել սոցիալական մի այնպիսի խմբի անհրաժեշտությունը, որն հատուկ կգբաղվեր իրավական ակտերի ուսումնասիրությամբ և իրավաբանական օգնություն ցույց կտար դրա կարիքը զգացողներին: Իրավապաշտպան գործունեություն իրականացնող այս խմբի ներկայացուցիչներն էլ հետագայում կոչվեցին փաստաբաններ¹⁵:

Առանց իրավական պետության առկայության, հնարավոր չէ ապահովել անձի իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է¹⁶:

Նախ հարկ է անդրադառնալ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության հասկացությանը, քանի որ պետությունը Սահմանադրությամբ ամրագրելով նշված սկզբունքը, հավաստել և ամրագրել է իր կախվածությունն իրավունքից՝ փաստելով իրավունքի գերակայության կարևորությունը:

Եվ ուրեմն, պետությունը համարվում է իրավական, երբ նրա ամբողջ գործունեությունը կապակցված է իրավունքի հետ, և որի կարևորագույն նպատակը հանդիսանում է անձի իրավունքների ապահովումը և դրանց երաշխավորված պաշտպանությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների իրավակարգավորումը: Իրավական պետության հասկացությունը, որպես պարտադիր պայման իր մեջ ներառում է պետական իշխանության իրականացումը Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետք է նշել, որ իրավական պետության հասկացությունը վերը նշվածով չի սահմանափակվում, կարելի է ներկայացնել նաև չափազանց լայն բնորոշում իրավական պետության հասկացության վերաբերյալ, սակայն, էականն այն է, որ առանց այդ սկզբունքի ամրագրման և կյանքի կոչման՝ պետությունը չի կարող համարվել իրավական:

¹⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը, //Պատագիրք, Երևան «ԵՊՀ հրատարակչություն» 2019, էջ 256-257:

¹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն հոդված 1-ին, ընդունված՝ 06.12.2015թ.:

Կարևորելով իրավական պետության կայացման անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվել են նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին առնչվող մի շարք դրույթներ ևս: Այսպես, գործող ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրվել է, որ. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»: Նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է, որ. «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են», իսկ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը հռչակում է, որ. «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»¹⁷:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»¹⁸, Սահմանադրության 64-րդ հոդվածով էլ ամրագրվել է, որ՝ «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով»¹⁹:

Նշված իրավակարգավորումներով պայմանավորված՝ իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը, որի 05.04.2016թ. ՍԴՈ-1263 որոշման մեջ նշվել է հետևյալը. «6. ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է որակյալ իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր

¹⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրության (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ) 3-րդ հոդվածը, 06.12.2015թ. ընդունված:

¹⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրության (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ) 61-րդ հոդվածի 1-ին մասը, 06.12.2015թ. ընդունված:

¹⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության (ՀՀ Սահմանադրության փոփոխություններ) 64-րդ հոդվածը, 06.12.2015թ. ընդունված:

արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը՝ ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր դրական պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը: Այդ նպատակն է հետապնդում նաև օրենքով նախատեսված՝ փաստաբանական դպրոցի ստեղծումը, որը կազմակերպում և անցկացնում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը, կազմակերպում և անցկացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը»²⁰:

Հետևապես, Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ իրավակարգավորումները երաշխիք են, որպեսզի յուրաքանչյուր անձ ստանա իրավաբանական օգնություն, որն անկասկած, պետք է լինի որակյալ, իսկ որակյալ իրավաբանական օգնությունը, մեր համոզմամբ, կարող է տրամադրվել բացառապես բարձրակարգ և որակյալ մասնագետի (մասնագիտացված կառույցի) կողմից:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքի իրականացումը հանդիսանում է փաստաբանության հիմքը, իսկ փաստաբանությունը, իր հերթին, քաղաքացիական հասարակությունում այն մեխանիզմը, որի միջոցով իրականացվում է հիշատակված իրավունքների իրականացումը և պաշտպանությունը:

Ավելին, որքանով փաստաբանությունը պետությունում հզոր է, ճիշտ կազմակերպված և օրենսդրությամբ պաշտպանված, այնքան յուրաքանչյուր անձ իրեն տվյալ պետությունում պաշտպանված է զգում:

²⁰ Տե՛ս «ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» ուղեցույց-ձեռնարկը, հատոր 1, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի, Երևան 2016, էջ 434-435, ՀՀ Սահմանադրական դատարանի 05.04.2016թ. ՍԴՈ-1263 որոշում:

Այսինքն, փաստաբանության դերը և ազդեցությունը իրավական պետությունում չափազանց կարևոր է և անթույլատրելի է դրա թերագնահատումը:

Ակնհայտ է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու և փաստաբանների մասնագիտական միավորում կազմակերպելու հիմունքները և այդ գործունեության իրականացման կարգը²¹: Օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ. «Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ: Փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա»²²:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էլ. «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»²³:

Մեր կարծիքով, փաստաբանության դերը պետության և հասարակության մեջ կայանում է նրանում, որ փաստաբանությունը կոչված է հասարակության, պետության և անձանց (իրավաբանական և ֆիզիկական) շահերի հավասարակշռմանը և օրինականության պահպանմանը: Այն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Հենց այդ գաղափարից էլ բխում է փաստաբանության հիմնական նպատակը, որը ընդհանուր առմամբ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

ա) քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության ամրապնդումը, օրենքի տառի և ոգու, այսինքն՝ օրինականության պահպանման ապահովումը,

²¹ Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 1-ին հոդված:

²² Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 3-րդ հոդված:

²³ Տե՛ս ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս:

բ) վստահորդների շահերի պաշտպանությունը, նրանց որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը՝ օրենսդրության, բարոյական և էթիկական նորմերի շրջանակներում:

Չնայած, որ փաստաբանությունը չի ներառվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում, որը բխում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի վերը հիշատակված 3-րդ հոդվածի սահմանումից, կարծում ենք, նրան վերագրվող խնդիրներն ունեն արդարադատության օժանդակման լույսի ներքո պետական նշանակություն և արտահայտում են հասարակության հանրային շահը: Քանզի անձանց շահերի ներկայացուցչությունը սահմանադրական, քրեական, վարչական և քաղաքացիական դատավարություններում ուղղված է ոչ միայն մեկ մասնավոր անձի շահերի բավարարմանը, այլև դատաքննության վիճարկելիության սկզբունքի, ինչպես նաև հակակշռության ապահովմանը, ճշմարտության նվաճմանը, անձանց և քաղաքացիների շահերի պաշտպանությանը և այդպիսով՝ ժողովրդավարական իրավական պետության կայացմանը, ինչը հռչակված է ՀՀ Սահմանադրությամբ, և սկզբունքորեն կարևոր է ոչ միայն առանձին անձանց համար, այլև ողջ հասարակության:

Փաստաբանության դերը պետության և հասարակության մեջ նաև կայանում է նրանում, որ փաստաբանները կոչված են ծառայելու ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ ողջ հասարակության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովմանը:

Նաև նրանում, որ փաստաբանն աջակցում է հասարակության մեջ իրավունքի գերակայության ամրապնդմանը, իրականացնում է օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատություններն հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերն ամրապնդելու ուղղությամբ:

Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. Յու. Լուբշևը «... Պետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական ապահովումը և լայն օգտագործումը պետության զարգացման գլխավոր օրինաչափություններից է: Եվ հակառակը, քաղաքացիական ազատությունների խախտումը արգելակում է պետության զարգացումը»²⁴:

Մեր գնահատմամբ՝ փաստաբանության դերը պետության և հասարակության մեջ պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ փաստաբանությունը հասարակության հանրային ինստիտուտն է, քանզի պետությունը պարտավորվել է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի առջև ապահովել բոլորին և յուրաքանչյուրին իրավունքի հարցերով օգնության տրամադրումը: Սակայն, այդ օգնությունը կտրամադրի ոչ թե պետական ծառայողը, այլ իրավունքի ոլորտում մասնագիտացած քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը: Պետությունը պար-

²⁴ St' u Лубшев Ю.Ф. Адвокат в уголовном деле. М., 1999, стр. 33.

տավոր է իրավունքի այդ գիտակների համար ստեղծել իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, իսկ իրավունքի այդ գիտակները փաստաբաններն են:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Փաստաբանությունը հանդիսանում է հնագույն իրավական ինստիտուտներից մեկը: Բազմաթիվ մասնագետներ համոզմունք են հայտնում, որ փաստաբանությունը պատկանում է հավերժ և ազատ, ինչպես նաև անկախ մասնագիտությունների շարքին:

Պատմությունը ցույց է տվել, որ անձն ունենալով իրավունքներ և իրավաչափ շահեր, կարիք է ունեցել դրանց արդյունավետ իրացման և պաշտպանության: Ինչն էլ, ի վերջո հանգեցրել է նրան, որ ստեղծվի ներկայացուցչության ինստիտուտ, որպեսզի իրավունքների և իրավաչափ շահերի արդյունավետ պաշտպանությունն իրականացվի ոլորտին քաջատեղյակ անձանց կողմից, որոնք էլ հետագայում կոչվեցին փաստաբաններ՝ սկիզբ դնելով փաստաբանության ինստիտուտի հասկացությանը:

Սույն հոդվածում, փաստաբանության վերաբերյալ հայրենական ու արտասահմանյան գրականության մեջ եղած տեսակետների համադրման ու վերլուծության հիման վրա կատարվել է հեղինակային վերլուծություն և փորձ է արվել պատասխանելու այն հարցին թե ո՞րն է փաստաբանության դերը պետության և հասարակության մեջ:

Հիմնաբառեր. սահմանադրություն, իրավունք, փաստաբան, փաստաբանություն, պետություն, իրավական պետություն, հասարակություն

Օգտագործված գրականություն

1. Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի հայցորդ Դ.Սարգսյանի ատենախոսության սեղմագիր, Երևան 2012, էջ 14-15
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը, //դասագիրք, Երևան «ԵՊՀ հրատարակչություն» 2019, էջ 256-257:
3. ՀՀ Սահմանադրությունը հոդված 1-ին, ընդունված՝ 06.12.2015թ.:
4. «ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը» ուղեցույց-ձեռնարկը, հատոր 1, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի, Երևան 2016, էջ 434-435,
5. ՀՀ օրենքը «Փաստաբանության մասին», 14.12.2004թ. ընդունված, օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս:
6. Лубшев Ю.Ф. Адвокат в уголовном деле. М., 1999, стр. 33.

КАКОВА РОЛЬ АДВОКАТУРЫ В ГОСУДАРСТВЕ И ОБЩЕСТВЕ?

Ваге Оганесян

Член адвокатской палаты РА

Адвокатура является одной из старейших правовых институтов. Многие специалисты убеждены, что адвокатура относится к разряду вечно свободных, а также независимых профессий.

История доказала, что имея права и законные интересы, у человека была необходимость эффективной реализации и защиты этих прав и интересов. Именно это в конечном итоге привело к созданию института представительства для обеспечения эффективной защиты прав и законных интересов тех, кто хорошо разбирается в этой области. Позднее эти лица были названы адвокатами, тем самым положив начало понятию института адвокатуры.

В данной статье на основе сопоставления и анализа взглядов на отечественную и зарубежную литературу по адвокатуру, была сделана попытка ответить на вопрос о роли адвокатуры в государстве и обществе.

Ключевые слова: конституция, право, адвокат, адвокатура, государство, правовое государство, общество

WHAT IS THE ROLE OF ADVOCACY IN STATE AND SOCIETY?

Vahe Hovhannisyan

Member of the RA Chamber of Advocates

Advocacy is one of the oldest legal institutions. Many experts believe that advocacy belongs to the category of eternally free as well as independent professions. History has proven that having rights and legitimate interests, people had a need for the effective implementation and protection of these rights and interests. This is what ultimately led to the creation of the institution of representation in order to ensure the effective protection of rights and legitimate interests of those who were well aware of this field. Later, these people were named advocates, thereby laying the foundation for the concept of legal profession.

In this article, based on the comparison and analysis of views on the domestic and foreign literature on the legal profession, an attempt was made to answer the question about the role of the legal profession in the state and society.

Key words: constitution, law, advocate, advocacy, state, constitutional state, society

Ներկայացվել է՝ 27.08.2021 թ.

Ընդունվել է՝ 25.09.2021 թ.

**ՀԵՂԻՆԱԿԻ ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ
ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔՈՒՄ (ՔԵՆ
ՌՈԲԵՐՏՈՆԻ «ԱՐԴՅՈ՞Ք ԴՊՐՈՑԸ ՄՊԱՆՈՒՄ Է
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԵԼՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Լուսինե Ֆլյան

Հյուսիսային համալսարան, բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
fljyan@mail.ru

«Խոսողի» մտադրությունը և դրա արտահայտման եղանակներն ու յուրահատկությունները դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն ժամանակակից լեզվաբանության մեջ: Ինչո՞վ են արդիական և հետաքրքիր համանման ելույթները լեզվաբանների համար: Հրապարակային ելույթների կառուցման և իրականացման լեզվական և ոչ լեզվական առանձնահատկությունները հաղորդակցական տարաբնույթ խնդիրներ լուծելու նպատակով հեղինակի կողմից պահանջում են խորքային ուսումնասիրություններ՝ հասկանալու, թե ինչպես պետք է կառուցել հրապարակային բանավոր խոսքը՝ հաղորդակցական հաջողությունների հասնելու և ունկնդիրների վրա համապատասխան ներգործություն ունենալու, ինչպես նաև նրանց որոշակի քայլերի մղելու նպատակով:

Լեզվաբանության զարգացման համատեքստում հրապարակային բանավոր ելույթներում հատուկ տեղ է հատկացվում հեղինակի կամ բանախոսի մտադրությունների ուսումնասիրությանը: Հրապարակային բանավոր խոսքն ունի առանձնահատկություններ, որոնք ուղղակիորեն կապված են լեզվական միջոցների ընտրության հետ: Հրապարակային խոսքը գիտական ոճի հետ շատ ընդհանրություններ ունի՝ հանդիսատեսին տպավորելու, արտահայտիչ միջոցներ օգտագործելու, տրամաբանական, հուսալի դատողություններ արտահայտելու և երբեմն գեղարվեստական ոճ կիրառելու առումներով: Լեզվական որոշակի միջոցների ընտրությունը, խոսքի կառուցումը ներառված են խոսողի կամ հեղինակի մտադրության մեջ:

Քեն Ռոբինսոնի «TED Talks»-ի ելույթը գիտահանրամատչելի է և նախատեսված է լայն լսարանի համար: Այն մենախոսական գաղափարական ճառ է, որն ունի ոճական և ժանրային որոշակի առանձնահատկություններ, կանխորոշում է լեզվական միջոցների ընտրությունը և ազդում հեղինակի (խոսողի) մտադրության և դրա արտահայտման ձևերի ընտրության վրա:

Հեղինակի մտադրության արտահայտման լեզվաոճական յուրահատկությունների ուսումնասիրման նպատակով սույն հոդվածի շրջանակում քննարկվում են հետևյալ խնդիրները:

- 1) հրապարակախոսական ոճի առանձնահատկությունները,
- 2) հաղորդակցության այն ռազմավարությունները, որոնք բանախոսներն օգտագործում են հրապարակային բանավոր խոսքում,
- 3) Քեն Ռոբինսոնի հրապարակային ելույթի նյութի հիման վրա հրապարակային խոսքի ոճական ներուժի, հեղինակի մտադրության և ընթերցողի վրա գործած ազդեցության միջոցների վերլուծությունը:

Հոդվածում քննարկվում է հրապարակախոսական ոճի և դրա ժանրերի առանձնահատկությունները, հրապարակային բանավոր խոսքի, ինչպես նաև անգլերենով բանավոր հրապարակախոսական ելույթի յուրահատկությունները, «TED Talks» ելույթների ժանրային առանձնահատկությունները, հեղինակի մտադրությունների իրականացման եղանակները՝ հիմնված Քեն Ռոբինսոնի «Արդյո՞ք դպրոցը սպանում է ստեղծագործ միտքը» ելույթի վրա:

Հարկ է նշել, որ ցայսօր «TED Talks»-ի ելույթները հեղինակի մտադրությունների իրականացման տեսանկյունից համապարփակ վերլուծության չեն ենթարկվել՝ բացահայտելու ելույթի ոճական ներուժը: Այս առումով հոդվածն ունի տեսական և գործնական նշանակություն:

Տեքստ, խոսույթ, «խոսողի» մտադրությունը հրապարակային խոսքի մեջ

«Խոսողի» մտադրության ձևերի արտահայտման համար տեքստի և խոսույթի հարաբերակցության ուսումնասիրությունը չափազանց կարևոր է հետազոտության օբյեկտիվ արդյունքներ ստանալու համար:

Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Ե. Կրոյչիկն իր «Հրապարակախոսական տեքստը որպես ժանր և խոսույթ» հոդվածում, հրապարակային խոսքն արդեն իսկ ենթադրում է մտադրություն, որը կապում է հանդիսատեսի տարածքը խոսողի մտադրությունն ընկալելու տարածքի հետ: Դրանք հավասարազոր տարածքներ չեն և ամենևին չեն համընկնում: Օբյեկտիվ իրականությունը երկու անգամ է արծարծվում հրապարակախոսական ելույթում. առաջին անգամ հեղինակի խոսքում, երկրորդ անգամ՝ հանդիսատեսի (ունկնդրի) զգացմունքներում:¹

«Հեղինակ-տեղեկատվություն-հասցեատեր» շղթան այստեղ հիմնված է տեքստի հեղինակի, նրա հաղորդագրության և հանդիսատեսի միջև առաջացած պայմանական հարաբերությունների վրա: Անկախ այն հանգամանքից, որ հրապարակախոսական ելույթը սովորաբար մենախոսություն է, այնուամենայնիվ, այն նաև երկխոսական բնույթ ունի և բաղկացած է երկու տարրից՝ հեղինակի արտահայտած մտքերի և գաղափարների վերաբերյալ ելույթի հեղինակի և հանդիսատեսի՝ աշխարհի մասին ունեցած պատկերացումներից: Հանդիսատեսի կամ լսողի՝ աշ-

¹Кройчик Л.Е. Публицистический текст как жанр и как дискурс / Л.Е. Кройчик // Акценты: новое в массовой коммуникации. Воронеж, 2005. - № 3-4.-С. 11 - 17.

խարհի ճանաչողական պատկերը կարող է տարբերվել, եթե խոսողը գործ ունի զանգվածային հանդիսատեսի հետ՝ պայմանավորված հիմնարար տարբեր գիտելիքներով ու ելույթի թեմայի վերաբերյալ իրազեկվածության աստիճանով: Այնուամենայնիվ, աշխարհի ճանաչողական պատկերը փոխանցվում է լեզվով, ուստի լեզվական միջոցները կարևոր դեր են խաղում ճանաչողական տարբեր իմաստների փոխանցման գործում: Լեզուն հեղինակի և իրականության միջև դառնում է կամուրջ, և ամեն անգամ, երբ հեղինակի կամ խոսողի լսարանը փոխվում է, ինքնըստինքյան փոխվում է տեքստի հասցեատերը: Նրա հետ տարբեր բնույթի երկխոսություն է իրականացվում նոր իմաստների ձևավորման միջոցով, որոնք խոսույթի իրացման արդյունք են: Յուրաքանչյուր նոր լսարան յուրովի է ապակողավորում տեղեկությունը, և, ըստ էության, հեղինակի և հանդիսատեսի՝ աշխարհի վերաբերյալ խոսույթային պատկերը կարևոր դերակատարություն է ունենում հրապարակախոսական ելույթում, այսինքն՝ չափազանց էական է դառնում, թե ինչ լսարանի հետ է խոսում հեղինակը:

Համաձայն ռուս լեզվաբան Ա. Ա. Գավրիլովի՝ մտադրությունը հարկավոր է հասկանալ որպես գաղափար, որը խոսքային ներգործության որոշակի միջոցների շնորհիվ դրվում է հաղորդակցական նպատակի հիմքում՝ հասնելու հաղորդակցական նպատակին:² Իսկ ահա Է. Բեյթսը խոսքը բնութագրում է որպես հատուկ մտադրություն, որը պայմանավորված է որոշակի նպատակի հասնելու անհրաժեշտությամբ:³ Այլ կերպ ասած, մտադրությունը պետք է հասկանալ որպես որոշակի խոսք և իմաստային մտադրություն, որը «խոսողն» իրականացնում է խոսքային գործունեության ընթացքում:

«Խոսողի» մտադրությունը նրա մտքի, հոգեկան որոշակի վիճակի արտացոլումն է, որն իրացվում է բանավոր հաղորդակցության ընթացքում: Օրինակ, եթե մարդը ցանկանում է զրուցակցի հետ զրոսնել, նա ձևակերպում է հրավեր և ներկայացնում այն բանավոր փոխազդեցության տեսանկյունից: Չնայած այն փաստին, որ խոսքային գործունեության տեսության բովանդակության մեջ հաղորդակցական մտադրությունն անմիջականորեն կապված է արտահայտության իլոկուտիվ (խոսողի հաղորդակցական նպատակ) գործառույթի հետ, այնուամենայնիվ, կան ժամանակակից այլ մոտեցումներ (օրինակ՝ Օ. Ե. Բասերս, Ե. Վ. Կլյուն) ևս, որոնք առաջարկում են մտադրությունը դիտարկել որպես մի երևույթ, որը ձևավորվում է հաղորդակցվողի ամբողջական խոսքային վարքագծի

² Гаврилов А.А. Лингвистические средства воздействия СМИ на общественное сознание. – М.: Язык и культура, 2014, с. 146 [Электронный ресурс]: <https://avidreaders.ru/book/ted-talks-slova-menyayut-mir-pervoe.html>

³ Бейтс Э. Интенции, конвенции и символы // Психолингвистика. – М.: Прогресс, 1984, с. 78.

պայմաններում: Ե. Կյունն իրավացի է, երբ նշում է, որ հեղինակի, խոսողի մտադրությունն առկա կարիքների, հաղորդակցության շարժառիթների հիման վրա ձևավորվող հաղորդակցական նպատակ է, որն իրականացվում է տարբեր ռազմավարությունների միջոցով և կապված է խոսքի որոշակի իրավիճակի հետ:⁴

Ինչպես նշում է Յու. Ն. Անտոնովան, խոսքային ակտի պայմաններում խոսողն իրացնում է մտադրությունը երեք առումներով՝ զրուցակցից պատասխան ստանալիս, զրուցակցի կողմից խոսողի մտադրությունը հասկանալիս և զրուցակցի վարքագիծը փոխելիս՝ որպես խոսողի մտադրության հետևանք:⁵ Այնուամենայնիվ, մտադրության իրացումը կարող է տեղի ունենալ ոչ միայն բացահայտ մակարդակում, այլև գաղտնի, երբ իրական դրդապատճառները թաքնված են խոսողի հատուկ խոսքային վարքագծի հետևում: Ամեն դեպքում, որոշակի մտադրության համարժեք ճանաչումը հնարավոր է իմաստաբանական, բառարանային և շարահյուսական մակարդակներում՝ շնորհիվ լեզվական առկա նշանների մանրակրկիտ վերլուծության:

Համաձայն Մ. Ա. Վասիլիկի՝ մտադրության իրացումը ներկայացված է հետևյալ փուլերով՝ խթանող, ձևավորող և իրացնող:⁶

1. Խթանող փուլ

Այս փուլն անմիջականորեն պայմանավորված է շարժառիթի ի հայտ գալով: Դրդապատճառը պետք է հասկանալ որպես օբյեկտիվացված կարիք, հստակ ցանկություն, որը միշտ չէ, որ կարող է իրագործել խոսողը: Խթանման փուլի տարբերակիչ առանձնահատկությունը մտավոր, հուզական, կամային ոլորտների համակցված ազդեցությունն է, որը որոշում է հաղորդակցական մտադրության առաջացումը: Ա. Ա. Լեոնտևը, բնութագրելով այս փուլը, այն անվանում է «խոսքի իրական մտադրության» փուլ, քանի որ մտադրությունը ներկայացվում է հոգեբանական մակարդակում և անմիջականորեն կապված է որոշակի ցանկությունների առկայության հետ, այն խթանների, որոնք ստիպում են «խոսողին» հաղորդակցվել:⁷

⁴ Ключев Е.В. Речевая коммуникация. – М.: РИПОЛ КЛАССИК, 2002, с. 57.

⁵ Антонова Ю.Н. Интенция говорящего в аспекте коммуникативно-целевой семантики: автореф. дис... канд. филол. н. – Орел, 2006, с. 10.

⁶ Василик М.А. Основы теории коммуникации, М.: Гардарики, 2003, с. 145.

⁷ Леонтьев А.А. Психолингвистические единицы и порождение речевого высказывания. – М.: Наука, 1969, с. 79.

Այս փուլում մտադրությունն անմիջականորեն կապված է խոսողի դերի սահմանման հետ, այն որոշում է արտահայտության հատուկ նպատակը, ինչպես նաև հանդես է գալիս որպես բովանդակության մաս, որը խոսքային որոշակի գործողությունների համատեքստում ենթակա է իրականացման: Հիմնական խթանները, որոնք ձևավորում են մտադրությունների հրահրող մակարդակը, մարդու դրդապատճառներն ու կարիքներն են: Մտադրությունը որոշում է առաջացող կարիքների իմաստը: Որպես կանոն, այս փուլում բանախոսը գիտի, թե ինչ պետք է ասել, բայց դեռ չի որոշել, թե ինչպես:

2. Ձևավորման փուլ

Այս փուլում տեղի է ունենում արտահայտության իմաստի ավելի մանրակրկիտ սահմանում, տրամաբանական հաջորդականության և խոսքային ճշգրտության հաստատում: Ա. Ա. Լեոնտեն այս փուլը սահմանում է որպես արտահայտության, ծրագրավորման և ծրագրի հաստատման փուլ:⁸ Այս փուլում տեղի է ունենում անհատական իմաստների առանձնացում, երբ ձևավորվում է ներքին արտահայտությունը, իսկ գաղափարի իմաստային ձևավորման համար կիրառվում են նաև անվանում և ստորոգում: Հենց այս փուլում է հնարավոր է որոշել «խոսողի» լեզվական փորձի ծավալը, նրա գրագիտության աստիճանը, քանի որ արտահայտության ձևավորումը տեղի է ունենում լեզվական որոշակի միավորների օգտագործման միջոցով, լեզվագագացողության կիրառմամբ, երբ տեղի է ունենում լեզվական միավորների ընտրությունը և տեղաբաշխումը:

3. Իրականացման փուլ

Այս փուլում տեղի է ունենում բուն մտադրության շեշտադրում, երբ «խոսողը» օգտվում է հնչյունաբանության և հոգելեզվաբանության միջոցներից՝ փոխգործակցության պայմաններում իրագործելու սահմանված հաղորդակցական նպատակը: Ձևավորման և իրականացման փուլերում ընտրվում է մտադրության իրականացման ռազմավարությունը, որը թույլ է տալիս առավելագույն արդյունավետությամբ հասնել հաղորդակցական նպատակին:⁹

Մտադրության իրականացման ռազմավարությունների ամբողջ շարքը կարելի է ներկայացնել հետևյալ տեսակների միջոցով.

1. Համոզելու ռազմավարություն

Համոզումը «խոսողի» մտադրությունը փաստարկելու ամենալավ ձևն է: Բացի այդ, համոզումը հանդես է գալիս որպես խոսքային

⁸ Նույն տեղում, էջ 135:

⁹ Ренц Т.Г. Факторы и параметры коммуникативного поведения // Человек в коммуникации: лингвокультурология и прагматика. Сб. науч. тр. – Волгоград: Изд-во ВГПУ «Перемена», 2008, с. 58.

ներգործության հիմնական բաղադրիչ: Ինչպես նշում է Ա. Ա. Կոտովը, համոզելու հիմնական նպատակը զրուցակցի աշխարհայացքի փոփոխությունն է, փոխակերպումն այն ուղղությամբ, որն անհրաժեշտ է «խոսողին»:¹⁰ Այդ ռազմավարության իրագործման համար կիրառվում են հետևյալ մարտավարությունները. հեղինակությանը հղում կատարելը, համոզելու բանաձևերի և ներածական կառուցվածքների օգտագործումը («I believe», «There's no doubt», «Obviously»), մեջբերում անելը, պարտադրանք արտահայտող եղանակավորող բայեր կիրառումը (must, should, have to), փաստերի նշումը, որոնք զրուցակցին համոզում են փոխել վարքագիծը («It's important», «It's urgent» ի թիվս այլոց):

2. Խնդրանքի, պահանջարկի ռազմավարություն

Համոզելու մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ զգալի տարբերություն կա խոսողի և ունկնդրի աշխարհընկալման միջև: Ինչպես իրավացիորեն նշում է Ն. Ա. Բեզմենովան, այն դեպքում, երբ հաղորդակցվողների աշխարհընկալումները հիմնականում համընկնում են, պատկերը համեմատաբար մոտ է, իսկ համոզելու ռազմավարությունը վերածվում է խնդրանքի ռազմավարության:¹¹ Խնդրանքի ռազմավարությունն իրականացվում է թույլտվության խնդրանքի մարտավարության միջոցով. թույլտվության խնդրանք («Ինձ թույլ կտա՞ք ներս մտնել», «Կարո՞ղ եմ մի բաժակ սուրճ խմել»): Այնուամենայնիվ, խնդրանքը թույլ չի տալիս բավարարել խոսողի մտադրությունը, և նա դիմում է պահանջի ռազմավարությանը: Պահանջը խոսողի մտադրության հստակ ձևակերպումն է ունկնդրի վրա հաղորդակցական ակնհայտ ներգործության միջոցով: Պահանջի իրացումը ներառում է հետևյալ ռազմավարությունները. պարտադրանք արտահայտող բայերի կիրառում («You should do it for me»), հրամայական եղանակի («If you hear me cry enter the room and stop him»), «ես»-ով ձևակերպումների օգտագործում («I want this done by Monday»):¹²

3. Առաջարկի, խորհրդի ռազմավարություն

Առաջարկը, խորհուրդը ռազմավարություններ են, որոնք ոչ հաղորդակցական ակնհայտ ներգործություն են ունենում՝ առաջարկելով ունկնդրին կատարել համատեղ գործողություն, համագործակցել ի թիվս այլոց:¹³ Այս ռազմավարությունը չի ճնշում ունկնդրին, կարող է չափա-

¹⁰ Котов А.А. Механизмы речевого воздействия в публицистических текстах. – М.: Знание, 2004, с. 246.

¹¹ Безменова, Наталья Александровна. Очерки по теории и истории риторики [Текст] / Н. А. Безменова; АН СССР, ИНИОН. – Москва: Наука, 1991, с. 68.

¹² Орлов Г.А. Современная английская речь. – М.: Высшая школа, 1991. – с. 55.

¹³ Стернин И.А. Русское коммуникативное сознание // Человек в зеркале языка: вопросы теории и практики. – М.: Фабула, 2002, с. 298.

զանց կառուցողական լինել «դու (դուք)»-ով մարտավարությունների ('You know, you can ask for my help anyway'), օգնության առաջարկության բանաձևերի ('Can I help you?'), սպառնի ժամանակաձևի և ենթադրությունների կիրառման շնորհիվ ('Imagine, what we can reach together', 'What if I help you with your future work?'):

4. Կանխարգելման սպառնալիքի, առաջարկության ռազմավարություններ

Այս ռազմավարություններն անմիջականորեն կապված են ունկնդրի անհանգստության, վախի, ինչպես նաև վախի մանիպուլյացիայի միջոցով «խոսողի» մտադրության իրացման հետ: Մտադրության իրագործումն այս ռազմավարության դեպքում ներառում է հետևյալ մարտավարությունների կիրառումը. ուղղակի սպառնալիք կամ շանտաժ ('You will obviously get fired if you don't listen to me'), «ես»-ով նախադասություններ ('I warn you'), դրականի և բացասականի զուգադրում ('Oh, you are so good, so brave. Such a pity it will be if something bad happens to you on this journey'):¹⁴

Այսպիսով, մտադրությունը պետք է մեկնաբանել որպես խոսողի հաղորդակցական մտադրություն, որն իրականացվում է խոսքի փոխադրեցության պայմաններում: Մտադրությունը ձևավորվում է հետևյալ փուլերի շնորհիվ. խթանման փուլ (դրդապատճառի առաջացում, անհրաժեշտություն), ձևավորման փուլ (լեզվական և արտալեզվական միջոցների ընտրություն), իրագործման փուլ (հայտարարության իրականացում՝ հաշվի առնելով հնչյունաբանական առանձնահատկությունները): Հաղորդակցման ընթացքում իրականացվում է ունկնդիրների վրա հաղորդակցական ազդեցություն ապահովելու, աշխարհի վերաբերյալ նրանց պատկերը փոխելու խոսքի վարքագիծը: Համաձայն ունկնդրի վրա գործադրվող ճնշման մակարդակի՝ մտադրությունների իրականացման ռազմավարությունը կարող է լինել համոզման ռազմավարության, առաջարկությունների և խորհուրդների, խնդրանքների և պահանջների, ինչպես նաև սպառնալիքների, նախազգուշացումների և առաջարկությունների ռազմավարություն: Մտադրությունների իրականացման հատուկ ձևերը ներառում են պարտադրանք արտահայտող բայերի գործածում, ներածական կառուցվածքներ, «ես» և «դու» ձևակերպումներ, հակադրություն, շանտաժ, խոսքի վարվելակարգի բանաձևերի թիվս այլոց:

Գիտահանրամատչելի հանրային խոսքի առանձնահատկությունները

¹⁴ Стросон П.Ф. Намерение и конвенция в речевых актах // Новое в зарубежной лингвистике. Теория речевых актов. – М.: Прогресс, 1986, с. 142.

Ըստ Պ. Արելյարի՝ մտադրությունը նպատակից բացի ներառում է նաև այն, թե ինչն է հանգեցնում նպատակի իրագործմանը:¹⁵ Ընդ որում, կարևոր է, որ խոսողը ոչ միայն պարզապես հասնի նպատակի իրագործմանը, այլև հասնի նպատակաուղղված ու գիտակցաբար: Այսինքն՝ հրապարակային ելույթի ընթացքում հեղինակը խոսողը, իր արժեքները փոխանցում է ունկնդիրներին:

Այստեղ ոչ պակաս նշանակություն ունի Գրայսի համագործակցության սկզբունքի կանոնների կիրառումը, որոնք հաղորդակցական կողմերի էությունն են և ներառում են հետևյալ առավելությունները՝ տեղեկատվության որակ և քանակ, համապատասխանություն և պարզություն: Առաջին կանոնը ենթադրում է, որ հաղորդակցությունը պետք է լինի հուսալի և հիմնված ապացույցների վրա, երկրորդը՝ պետք է լինի ամբողջական, երրորդը՝ չպետք է շեղվի թեմայից և չորրորդը՝ չպետք է լինի երկիմաստ: Դրանք պետք է ի սկզբանե ունենան հեղինակի մտադրությունները կարգավորողի դերակատարություն: Այնուամենայնիվ, այս բոլոր հասկացությունները բացարձակ չեն, հարաբերական են, և հեղինակը պահպանում է այս հաղորդակցական կողմերը՝ ելնելով իր խոսքի վարքի այլ սկզբունքներից:¹⁶

«Բանախոսի» մտադրությունը և դրա իրականացումը կախված են նաև խոսքի տեքստային և խոսույթային իրական գործոններից: Ա. Վիչմանն առաջարկում է նկարագրել խոսքային ոճերը (speaking styles) հետևյալ համաչափողների ներքո. մենախոսություն - երկխոսություն, հանրային խոսք - մասնավոր հաղորդակցություն, նպատակաուղղված խոսք - ոչ նպատակաուղղված խոսք, ընթերցանություն - խոսք, պատրաստված խոսք - ինքնաբերական խոսք:¹⁷

Խոսքի ոճերից բացի հատուկ դեր են խաղում *«հաղորդակցության նպատակը, իրավիճակի ձևականության աստիճանը, խոսքի պատրաստվածության աստիճանը, խոսողի վերաբերմունքը հայտարարության նկատմամբ»*:¹⁸

¹⁵ Колесова Д.В. Интенция как базовая категория текстовой деятельности // Мир Русского слова N 3, 2009, с. 28 [Электронный ресурс]: <https://cyberleninka.ru/article/n/intentsiya-kak-bazovaya-kategoriya-tekstovoy-deyatelnosti>

¹⁶ Жукенова А.К. Речевое общение и речевые стратегии Вестник КазГУ N 1 (153). 2015. – С. 120-121. [Электронный ресурс]: <https://philart.kaznu.kz/index.php/1-FIL/article/view/1502/1439>

¹⁷ Wichmann A. Intonation in Text and Discourse. Beginnings, Middles and Ends. – Harlow: Pearson Education Limited, 2000. – P.22.

¹⁸ Фрейдина Е.Л., Ковпак Н.А., Королева Ю.П., Пчелина Т.М., Сейранян М.Ю., Смирнова О.Н. Просодия публичной речи: Монография / Под общ. ред. Е.Л. Фрейдиной. – Прометей, 2013. – С.9. 2п.л.

Բանավոր խոսքում հեղինակի մտադրությունն արտահայտելու համար կարող են օգտագործվել հաղորդակցության տարբեր ռազմավարություններ, որոնք ներկայացվում են որպես բանավոր և ոչ վերբալ վարքագծի ծրագիր և օգնում են ապահովել հաղորդակցության հաջողությունը, եթե այն ճիշտ է իրականացվում: Այսինքն՝ հաղորդակցության արդյունավետությունը կախված է այն հանգամանքից, թե ինչպես է այն պլանավորվում, ինչ նպատակներ են դրվում, և ինչպես են այդ նպատակներն իրագործվում հաղորդակցության մեջ:

Հաղորդակցման ռազմավարությունը ներառում է հետևյալ բաղադրիչները.

- 1) խոսքի վարքագծի ընտրություն (փաստերի հայտարարում, լսարանին խնդրանքով դիմում),
- 2) որոշում, թե լսարանին որքան տեղեկատվություն պետք է հաղորդվի նպատակներին հասնելու համար,
- 3) իրավիճակի և գրուցակցի գիտակցության վիճակի վերաբերյալ տեղեկատվության համակցություն,
- 4) տեղեկատվության հատվածների հաջորդականության կարգ,
- 5) ունկնդիրներին տեղեկատվություն ներկայացնելու հաղորդակցական եղանակ՝ երկխոսություն, պատմում և այլն:

**Անգլալեզու ակադեմիական հրապարակչական խոսքի
գործաբանական և ժանրային յուրահատկությունները «TED Talks»-ի
ժանրում**

Ներկա փուլում լրատվամիջոցները լեզվական միջոցների բավականին մեծ զինանոցից են օգտվում՝ փորձելով ազդեցություն գործել ընթերցողի վրա: Լեզուն լայնորեն գործածվում է զանգվածների վրա ազդելու համար, այդ թվում՝ դրանք շահարկելու նպատակով: Լեզվի բոլոր մակարդակները՝ գրաֆիկականից մինչև տեքստային և խոսակցական, կարող են հանդես գալ որպես լեզվական զանգվածային ազդեցության միջոց:

Անգլալեզու հրապարակային ելույթը գտնվում է գիտական և լրագրողական ոճերի հատման կետում, քանի որ փոխանցված տեղեկության արտահայտչականությունն ու ճշգրտությունը պետք է զուգակցվեն դրա տրամաբանության հետ, որպեսզի հեղինակի մտադրությունը վերածվի ունկնդրի գիտակցության հենց այն ձևով, որին հեղինակը հավատում է: Ինչպես արդարացիորեն նշում է Ալբերտ Էյնշտեյնը, «տեղեկատվությունը դեռ գիտելիք չէ»:¹⁹ Որպեսզի տեղեկատվությունը դառնա գիտելիք, այն պետք է անցնի ունկնդրի ընկալման միջով և, առաջին հերթին, համարժեքորեն ընկալվի նրա կողմից:

¹⁹ Берков В.Ф. Философия и методология науки: Учеб.пос., М.: 2004, с. 16.

Գոյություն ունեն ակադեմիական հանրային խոսքի հետևյալ տեսակները. դասախոսություն, գիտական ստուգատես, գիտական զեկույց և գիտահանրամատչելի դասախոսություն:

Աշխարհում «TED Talks»-ի հրապարակային առաջին դասախոսությունը կայացել է 1984 թվականին Մոնտերեյում (Կալիֆորնիա): 1990 թվականից ի վեր նման ելույթներ ԱՄՆ-ում անցկացվում են ամեն տարի: «TED Talks»-ի լսարանը տարասեռ է և տարբերվում է կրթության և սոցիալական զարգացման հստակ մակարդակով:

«TED» դասախոսությունը հատուկ ժանր է, որը, տարբերվելով գիտական բանավոր ժանրերի և դասախոսությունների այլ տեսակներից, իրական հաղորդակցության մեջ իրականացվում է որպես առաջնային, իսկ համացանցում՝ երկրորդական ժանր: «TED» դասախոսության ժանրի առանձնահատկությունը պայմանավորված է դրա՝ տեղական ժամանակի կոշտ ձևաչափով և իրականացման բնույթով: «TED» դասախոսություններին բնորոշ է կոմպակտությունը, կառուցվածքային և տրամաբանական իմաստալիությունը, երկխոսականությունը, համոզիչ բնույթը: Հանրամատչելի գիտական խոսքը սովորաբար բաղկացած է ներածությունից, որի ընթացքում բանախոսը փորձում է գրավել հանդիսատեսին, զգալ դրա արձագանքը, վարքի հետագա ռազմավարությունը: Ներածության մեջ բանախոսը ներկայացնում է նպատակը և տալիս է նաև ընտրված թեմայի բացատրությունը:

Ցանկացած ելույթի արդյունավետությունը կախված է հասցեատիրոջ գործոնից: Հաջող հաղորդակցության համար խոսողը պետք է հաշվի առնի լսողի կարգավիճակը, հատկապես՝ բանավոր խոսքում: Եթե հեղինակը հաշվի չի առնում հանդիսատեսի առանձնահատկությունները և խոսքում հիշատակում է ոչ հետաքրքիր, արդեն հայտնի գաղափարներ, կամ գործածում է խրթին կառույցներ ու հանդիսատեսը բարդությամբ է ընկալում, ինչի արդյունքում բացառվում կամ նվազագույնի է հասնում նրա և ունկնդրի կապը:

«TED Talks» դասախոսության հեղինակը պետք է հաշվի առնի, որ նա դասախոսություն է կարդում ոչ թե մասնագիտական, այլ սիրողական լսարանի համար, և քանի որ բանախոսն ու լսարանը խոսում են տարբեր լեզուներով, հետևապես, գիտական երևույթների վերաբերյալ պետք է խոսել ոչ թե գիտական, այլ հանրամատչելի լեզվով:

Պրիսիլա Սամոյան իր «Ժանրային յուրահատկությունների ազդեցությունը «TED Talks»-ի վրա» հոդվածում «TED Talks»-ը ներկայացնում է որպես առանձին ժանր: Նա նշում է, որ հեղինակը փոխանցում է իր մտքերը ոչ միայն դահլիճում նստած հանդիսատեսին, այլև համացանցային լսարանին, ինչով էլ «TED Talks»-ը տարբերվում է մյուս ժանրերից: Փաստորեն, խոսողը պետք է հաշվի առնի, որ գտնվում է երկակի հոետորական վիճակում, քանի որ իր մտքերը փոխանցում է ոչ միայն դահլիճում նստած հանդիսատեսին, այլև համացանցային

լսարանին: Մի դեպքում խոսողը շփվում է հանդիսատեսի հետ, որը նստած է իր առջև, մյուս դեպքում՝ համացանցային լսարանի հետ:²⁰

Այժմ «TED Talks» գիտաժողովները ներառում են 438 թեմա՝ կենսատեխնոլոգիա, էթոլա, կրոն, ստրկություն, ահաբեկչություն, ներգաղթ, համաճարակ, կախվածություն և այլն: «TED» ելույթները կոչվում են գաղափարական, իսկ «TED» ելույթն ունեցողները՝ գաղափարախոսներ:

**Հեղինակային մտադրության արտահայտման յուրահատկությունները
Քեն Ռոբինսոնի «Արդյո՞ք սպանում է դպրոցը
ստեղծագործականությունը» ելույթում**

Քեն Ռոբինսոնի «Արդյո՞ք սպանում է դպրոցը տեղծագործականությունը» դասախոսությունը «TED Talks»-ի ամենատարածված ելույթներից է, որն ունի 60 միլիոնից ավելի դիտում և 6000 մեկնաբանություն: Ք. Ռոբինսոնի ելույթը թարգմանված է աշխարհի ավելի քան 62 լեզուներով: Ելույթի հեղինակը կրթության և ստեղծագործական կրթության մասնագետ է և զբաղվում է հանրակրթության ստեղծագործականության խնդիրներով: Բանախոսը պնդում է, որ դպրոցը երեխայի մեջ սպանում է ստեղծագործականությունը՝ որպես փաստարկ ներկայացնելով Ջիլիան Լին անունով մի աշակերտուհու, որը տառապում էր ուշադրության պակասի համախտանիշով և անհանգիստ էր պահում իրեն դասերին: Բժիշկը, որը հանդիպել էր Ջիլիանի հետ, այնուհետև ասել էր նրա մայրիկին, որ երեխան սեր ունի դեպի պարերը և հարկավոր է նրան ուղարկել պարարվեստի դպրոց: Ք. Ռոբինսոնի ամբողջ ելույթը կառուցված է այդ իրադարձության շուրջ:

Քեն Ռոբինսոնը նաև բազմաթիվ գրքերի հեղինակ է, ստեղծագործական կրթության և կրթական նորարարությունների ոլորտում միջազգային կարգի փորձագետ:

Նրա դասախոսությունը ներկայացում է նյութի հետաքրքիր մատուցմամբ, արդյունավետ ռազմավարությունների կիրառմամբ, որոնք նպաստում են խոսողի հիմնական մտադրության բացահայտմանը և դրա փոխանցմանն ունկնդրին: Ք. Ռոբինսոնի դասախոսությունն աշխույժ, խոսակցական բնույթի ելույթ է՝ լի ոճական հնարներով, որոնք, բացի տեղեկացնելուց, ազդում են ունկնդրի վրա՝ դրդելով որոշակի գործողությունների: Այսպիսով, հեղինակի հիմնական նպատակն է համոզել ունկնդիրներին, որ կրթության մեջ ստեղծագործականությունը և նորարարությունը շատ կարևոր դերակատարություն ունեն: Թեմատիկորեն

²⁰ Samayoa P. The Extent of Influence that Genre Conventions Have on TED Talks, Produced in Megan Lambert's Spring 2017 ENC 1102, The Extent of Influence that Genre Conventions Have on TED Talks, STYLUS 8.2 | FALL 2017 https://writingandrhetoric.cah.ucf.edu/wp-content/uploads/sites/17/2019/10/stylus_8_2_Samayoa.pdf

դասախոսությունը բաժանված է մի քանի ենթաթեմաների, որոնք հեղինակը շեշտում և առանձնացնում է բանավոր խոսքում՝ օգտագործելով նաև հարալեզվական միջոցներ (ձայնի բարձրացում, ժեստեր, ծիծաղ ի թիվս այլոց)։

Անկանխատեսելի, անորոշ ապագա.

“...children starting school this year will be retiring in 2065. Nobody has a clue, despite all the expertise that’s been on parade for the past four days, what the world will look like in five years’ time...”²¹

Հնացած կամ հնացող կրթական համակարգ.

“Our education system has mined our minds in the way that we strip-mine the earth for a particular commodity. And for the future, it won’t serve us. We have to rethink the fundamental principles on which we’re educating our children”²².

Ժամանակակից դպրոցը սպանում է ստեղծագործականությունը.

“We stigmatize mistakes. And we’re now running national education systems where mistakes are the worst thing you can make. And the result is that we are educating people out of their creative capacities”²³.

Կրթության մեխանիկական մոդելից անցում մշակութային մոդելի.

“I think you’d have to conclude the whole purpose of public education throughout the world is to produce university professors. Isn’t it? They’re the people who come out on top”²⁴.

Հեղինակն ընթերցողին հանգեցնում է մի շատ կարևոր գաղափարի, այն է՝ մարդը ոչ թե մեխանիկական սարք է, այլ կենդանի օրգանիզմ, որը կախված է այլ մարդկանցից, իսկ նրա թաքնված կարողությունները դրսևորվում են ստեղծագործական մթնոլորտում։ Կրթությունը պետք է ստանդարտացումից անցում կատարի անհատականացման՝ դեմքով շրջվելով դեպի յուրաքանչյուր ուսանողի կարիքները²⁵։

Հեղինակի մտադրությունն իրացվում է դասախոսության հատուկ կառուցվածքի միջոցով, որը միաժամանակ հանդես է գալիս իբրև հաղորդակցման ռազմավարություն՝ հանգեցնելով հեղինակի մտադրության իրականացմանը։ Կառուցվածքի բաղադրատարրերն են՝

1. հղումներ,
2. երկխոսություն մենախոսության մեջ,

²¹Robinson, K. “Do schools kill creativity?”, TED; 2007, <https://www.youtube.com/watch?v=iG9CE55wbtY>

²²Նույն տեղում։

²³Robinson, K. “Do schools kill creativity?”, TED; 2007, <https://www.youtube.com/watch?v=iG9CE55wbtY>

²⁴ Նույն տեղում։

²⁵ Писарик О, Свобода в образовании, Jan. 6th, 2011 at 7:54 PM, <https://freedu.livejournal.com/36861.html>

3. հիմնական տարրերի ազդանշանականացում,
4. դեղուկտիվ փաստարկում,
5. պատմվածքներ, պատմություններ, որոնք բանախոսը կիրառում է իր ելույթի մեջ, որպեսզի իր մտադրությունը հասցնի ունկնդրին և ներգործի նրա վրա:
6. հումոր,
7. հեջինգ կամ խոսքային ապահովագրում,
8. հոեադրական հարցեր:

Հղումները հարկավոր են, որպեսզի հեղինակը կարողանա կապել հանդիսատեսի, այն է՝ ունկնդրի իմացածն ու չիմացածը: Հեղինակը կիրառում է հղումներն իր ելույթի տարրեր հաստատելու համար:

1) Ներածության մեջ. *‘three times that have been running through the conference’*,

2) Ելույթի հիմնական հաստատում. *‘a few moments later’, ‘as we heard yesterday’, ‘Al Gore spoke to the other night about the ecology and the revolution that was triggered by Rachel Carson’,* ինչպես նաև վերջում *‘What TED celebrates is the gift of the human imagination’*.

Հղումների միջոցով հեղինակը մտավոր և ճանաչողական կապ է հաստատում նախորդող և հաջորդող տեղեկությունների միջև, որպեսզի հանդիսատեսը լսելու ընթացքում չմոռանա ելույթի հիմնական միտքը:

Երկխոսությունը մենախոսության մեջ այն հնարներից է, որը լայնորեն կիրառում է ոչ միայն Քեն Ռոբինսոնը, այլև «TED Talks»-ի բոլոր բանախոսները: Երկխոսությունը ստեղծվում է ես, իմ, մեր, դու, քո դերանունների միջոցով.

“I don’t mean to say that being wrong is the same thing as being creative”.

“I believe this passionately, that we don't grow into creativity, we grow out of it. Or rather, we get educated out of it. So why is this?”

“Our education system is predicated on the idea of academic ability”.

“You don’t think of Shakespeare having a father, do you? Do you? Because you don’t think of Shakespeare being a child, do you?”

“If you want real evidence of out-of-body experiences, by the way, get yourself along to a residential conference of senior academics and pop into the discotheque on the final night”.

Երկխոսության կիրառումը առաջին և երկրորդ դեմքի դերանունների գործածմամբ ստեղծում է հոգեբանական հարմարավետ վիճակ՝ տեղեկությունն ունկնդրին փոխանցելու և նրա վրա ներգործություն կատարելու համար: Առաջին և երկրորդ դեմքի դերանունների գործածումը ստեղծում է անկաշկանդության մթնոլորտ, իսկ «**we**» (մենք) և «**our**» (մեր) անձնական և ստացական դերանունները կրճատում են հեռավորությունը խոսողի և ունկնդիրների միջև:

Երկխոսությունը ստեղծվում է նաև հարց-պատասխանի օգնությամբ, երբ հեղինակը ինքն իրեն հարց է տալիս և պատասխանում իր իսկ հարցին՝ ստեղծելով հարցուպատասխանի շղթաներ: Իրար հաջորդող հարցերի և պատասխանների շարքը թողնում են մենախոսական երկխոսության ազդեցություն:

“Are you struck by a new thought? I was. You don’t think of Shakespeare having a father, do you? Do you? Because you don’t think of Shakespeare being a child, do you? Shakespeare being seven? I never thought of it. I mean, he was seven at some point. He was in somebody’s English class, wasn’t he?”

‘How annoying would that be?’

‘Must try harder.’ (հաջորդական հարցերի շարք)

‘Actually, what I find is, everybody has an interest in education. Don’t you? I find this very interesting.’ (հարցուպատասխանի շարք)”

Հեղինակի հաղորդակցական ռազմավարության հաջորդ տարրը դեղուկտիվ փաստարկումն է: Ամբողջ ելույթը կառուցված է տրամաբանական փաստարկների շղթայի վրա, որոնք ապացուցում են Քեն Ռոբինսոնի բերած օրինակի փաստերի հավաստիությունը: Հեղինակը փորձում է ապացուցել, որ դպրոցական կրթության մեջ ստեղծագործականությունը նույնքան կարևոր է, որքան գրագիտությունը՝ *«My contention is that creativity now is as important in education as literacy, and we should treat it with the same status»*: Այս իմաստն ուկնդրին մատուցվում է որպես արքիոմ կամ կանխենթադրույթ, որի շուրջ կառուցվում է հեղինակի ամբողջ ելույթը և ներկայացվում փաստարկները: Հեղինակը ոչ միայն տեսակետ է արտահայտում, այլև տալիս է իր գնահատականը: Հեղինակը բացասական է գնահատում ժամանակակից դպրոցում կիրառվող մոտեցումը.

“What these things have in common is that kids will take a chance. If they don’t know, they’ll have a go. Am I right? They’re not frightened of being wrong. I don’t mean to say that being wrong is the same thing as being creative. What we do know is, if you’re not prepared to be wrong, you’ll never come up with anything original — if you’re not prepared to be wrong. And by the time they get to be adults, most kids have lost that capacity. They have become frightened of being wrong. And we run our companies like this. We stigmatize mistakes. And we’re now running national education systems where mistakes are the worst thing you can make. And the result is that we are educating people out of their creative capacities.”²⁶

«Frightened of being wrong», «we stigmatize mistakes», «we’re now running national education systems where mistakes are the worst thing you can

²⁶Robinson, K. “Do schools kill creativity?”, TED; 2007, <https://www.youtube.com/watch?v=iG9CE55wbY>

make», «educating people out of their creative capacities» արտահայտությունները ստեղծում են հեղինակային մտքի տրամաբանական շեշտադրում: Դատապարտման գնահատականը ստեղծվում է «wrong» (սխալ) բառի, ինչպես նաև անաֆորիկ զուգահեռ կառուցվածքների կիրառման շնորհիվ:

*"And by the time they get to be adults..."*²⁷

*"And we run our companies like this..."*²⁸

*“And the result is that we are educating people...”*²⁹

Անաֆորիկ կառույցները ձևավորում են վերհատույթային միասնություն և տեքստի հատվածում ստեղծում իմաստային ամբողջականություն: Սույն դրույթը բանախոսը պահպանում է իր ելույթի ամբողջ ընթացքում: Հեղինակը 37 անգամ գործածում է «if» (եթե) շաղկապով անաֆորիկ կառուցվածքներ, որոնք ելույթին ռիթմ են հաղորդում և արտահայտում.

1. Խորհուրդ կամ առաջարկություն

"If you want real evidence of out-of-body experiences, by the way, get yourself along to a residential conference of senior academics and pop into the discotheque on the final night."³⁰

2. Կոչ ինչ-որ գործողություն կատարելու համար

*"If you were to visit education as an alien and say 'What's it for, public education?' I think you'd have to conclude, if you look at the output, who really succeeds by this, who does everything they should, who gets all the brownie points, who are the winners — I think you'd have to conclude the whole purpose of public education throughout the world is to produce university professors."*³¹

3. Հեղինակի մտորումները

*"If you're at a dinner party, and you say you work in education — actually, you're not often at dinner parties, frankly."*³²

Հեղինակի մտադրությունը արտահայտվում է նաև կարևոր տարրերի ազդարարման համար: Ք. Ռոբինսոնն ազդանշան է տալիս այն մասին, որ շուտով խոսքում կհայտնվեն «կարևոր հատվածներ»:

"And my contention is, all kids have tremendous talents, and we squander them, pretty ruthlessly."³³

²⁷ Նույն տեղում:

28 Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³²Robinson, K. “Do schools kill creativity?”, TED; 2007, <https://www.youtube.com/watch?v=iG9CE55wbtY>

***“My contention is** that creativity now is as important in education as literacy, and we should treat it with the same status.”³⁴*

Հեղինակը կարևոր տեղեկության մասին ազդարարարում է լեզվական միավորների միջոցով՝

1. քայերի

“There have been three themes running through the conference, which are relevant to what I want to talk about.”³⁵

*“...and I just **want** to say a word about the transition.”³⁶*

*“There have been three themes running through the conference, which are relevant to what I **want to talk about**.”³⁷*

2. եղանակավորող քայերի

*“And I like university professors, but, you know, **we shouldn’t hold them up** as the high-water mark of all human achievement.”³⁸*

Ազդանշաններն օգնում են ընդգծել կարևոր տեղեկությունը և կարևորություն հաղորդել դրանց խոսքում: Հատկանշական է, որ գրեթե բոլոր հատվածներում հեղինակի խոսքերը նախորդում են ուղղակի խոսքին և ազդարարում հետագա տեղեկատվության կարևորությունը:

“He said, ‘I’ll never find another girl like Sarah’.”³⁹

Ազդանշանային են համարվում նաև դասական թվականները:

*“They put these boxes down, and the **first** boy said, ‘I bring you gold.’ And the **second** boy said, ‘I bring you myrrh.’ And the **third** boy said, ‘Frank sent this.’”⁴⁰*

Հեղինակի մտադրությունը լսարանին է փոխանցվում այն պատմությունների միջոցով, որոնք բանախոսը պատմում է հանդիսատեսին: Իր քսան րոպեանոց ելույթի ընթացքում Քեն Ռոբինսոնը մի քանի պատմություն է պատմում «Siren»-ի մասին (Sirena last night was a marvel):

1. *“I heard a great story recently — I love telling it — of a little girl who was in a drawing lesson. She was six, and she was at the back, drawing, and the teacher said this girl hardly ever paid attention, and in this drawing lesson, she did. The teacher was fascinated. She went over to her, and she said, ‘What are you drawing?’ And the girl said, ‘I’m drawing*

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Robinson, K. “Do schools kill creativity?”, TED; 2007, <https://www.youtube.com/watch?v=iG9CE55wbtY>

a picture of God.' And the teacher said, 'But nobody knows what God looks like.' And the girl said, 'They will in a minute.'⁴¹

2. "Gillian and I had lunch one day. I said, 'How did you get to be a dancer?' It was interesting. When she was at school, she was really hopeless. And the school, in the '30s, wrote to her parents and said, 'We think Gillian has a learning disorder.' She couldn't concentrate; she was fidgeting. I think now they'd say she had ADHD. Wouldn't you? But this was the 1930s, and ADHD hadn't been invented at this point. It wasn't an available condition'⁴².

Հեղինակը պատմում է մի քանի նպատակներով.

1) խոսքի միատարրությունը կոտրելու և ունկնդիրներին «վերակենդանացնելու» նպատակով,

2) լսարանում որոշակի լարվածություն ստեղծելու և ընդհանուր տեքստից տեղեկատվության ինչ-որ հատված առանձնացնելու նպատակով,

3) ունկնդրի գոհացուցիչ արձագանքն առաջացնելու նպատակով, քանի որ Ք. Ռոբինսոնի բոլոր պատմություններն ունեն ուրախ ավարտ:

Հաջորդ հնարը, որը հաճախակի է կիրառում Ք. Ռոբինսոնը, հումորը կամ զավեշտն է: Հումորը բանավոր հնար է, որն առաջացնում է ոչ վերբալ արձագանք (ծիծաղ), որի օգնությամբ պահպանվում է ուշադրությունը, տեղի է ունենում լսարանի վրա հուզական խոսքի ուժեղ ազդեցություն: Ինչպես ընդունված է այս տեսակի միջոցառումների ժամանակ, բանախոսը սկսում է իր ելույթը հումորով.

"It's been great, hasn't it? I've been blown away by the whole thing. In fact, I'm leaving."

Հեղինակը նաև վերապատմում է որոշ զվարճալի պատմություններ.

"The teacher was fascinated. She went over to her, and she said, 'What are you drawing?' And the girl said, 'I'm drawing a picture of God.' And the teacher said, 'But nobody knows what God looks like.' And the girl said, 'They will in a minute.'"

«TED Talks»-ի ելույթներում ամենասիրված հնարներից մեկը հեջինգն է կամ խոսքային ապահովագրումը: Այն կիրառվում է, որպեսզի ելույթ ունեցողի խոսքը շատ կտրուկ չհնչի և ավելի մեծ ազդեցություն գործի ունկնդրի վրա.

⁴¹ Robinson, K. "Do schools kill creativity?", TED; 2007,

<https://www.youtube.com/watch?v=iG9CE55wbY>

⁴² Նույն տեղում:

*“And I like university professors, but, you know, we **shouldn’t hold them up** as the high-water mark of all human achievement.”⁴³*

Քեն Ռոբինսոնը ներքին երկխոսության մեջ լսարանիին ներգրավելու նպատակով բարձրացնում է հոետորական հարցեր, որ ունկնդիրները հեղինակի տեսակետն ընկալեն որպես սեփականը.

“Suddenly, degrees aren’t worth anything. Isn’t that true?”⁴⁴

‘Actually, what I find is, everybody has an interest in education. Don’t you?’⁴⁵

‘You don’t think of Shakespeare having a father, do you?’⁴⁶

Եզրակացություն

Այսպիսով, «TED Talks»-ն, իսկապես, նոր և յուրահատուկ ժանր է, որի հասցեատերը ոչ միայն դահլիճում նստած ունկնդիրն է, որն իր ժպիտով, ծիծաղով կամ ծափահարություններով արձագանքում է ելույթ ունեցողի յուրաքանչյուր քայլին, այլև համացանցային լսարանն է, որը ուկնդրում է այդ ելույթը տանը նստած, հետևապես, բանախոսը դա ևս պետք է հաշվի առնի իր ելույթի համար համապատասխան խոսքային ռազմավարություններ և մարտավարություններ մշակելիս:

